

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՅԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ա.ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՅԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ
ԳՐԱՌՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ



ԵՐԵՎԱՆ-2019

ԱՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ա. ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ

ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ

ԳՐԱՌՄԱՆ ԵՎ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2019

ՀՏԴ 016:398
ԳՄԴ 91.9:82
Ս 259

**Տպագրվում է Արցախի գիտական կենտրոնի եւ Արցախի պետական
համալսարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ**

**Խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լուսինե Սարգսյան
Գրախոս՝ Բ.Գ.Թ., դոցենտ Շողեր Մինասյան**

*Աշխատանքն իրականացվել է ԱԶ ԿԳՄՆ կողմից տրամադրված ֆինանսական
աջակցության շնորհիվ՝ SCS 16.10-001 գիտական թեմայի շրջանակներում*

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
Ս 259 ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱՒԻ ԲԱՆԱԿՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՌՄԱՆ ԵՎ
ՈՒՄՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅԱՆ, ԵՐԵՎԱՆ, 2019.-120 էջ:

*Աշխատանքը նվիրված է Արցախի բանահյուսությանը վերաբերող եւ առնչվող տպագիր
ու ձեռագիր ժողովածուների, աշխատությունների, հոդվածների եւն մատենագիտությանը:
Յուրաքանչյուր նյութի վերնագրից եւ այլ տեղեկություններից հետո ներկայացվում է նրա
հնարավորինս ամփոփ նկարագիրը: Ընդարձակ առաջաբանում քննության են առնվում
Արցախի բանահյուսության գրառման եւ ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ ըստ
ժամանակագրության, կենցաղավարման արդի վիճակը եւ ժանրային ու իմաստային
առանձնահատկությունները:*

ՀՏԴ 016:398
ԳՄԴ 91.9:82

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատանքը ներկայացնում է Արցախի բանահյուսությանը վերաբերող եւ առնչվող մասնագիտական գրականության, տպագիր ժողովածուների ու ձեռագիր աղբյուրների (առանձին ենթաբաժնով) մատենագիտությունը: Այն բաղկացած է «Ներածություն» բաժնից եւ բուն մատենագիտությունից: «Ներածության» մեջ առանձին բաժիններով քննության են առնվում Արցախի բանահյուսության գրառման եւ ուսումնասիրության համառոտ պատմությունը (ըստ ժամանակագրության) եւ ժանրային, իմաստային առանձնահատկություններն ու կենցաղավարման արդի վիճակը:

«Մատենագիտություն» բաժնում ընդգրկվում են.

1. Արցախի բանահյուսությանը կամ կոնկրետ որեւէ ժանրի, կերպարների վերաբերող տպագիր ու ձեռագիր ժողովածուները, հոդվածները, գեկուցումները, առավել ընդգրկուն հիմնադրույթները,

2. հայ բանահյուսական այն համահավաք ժողովածուներն ու բանագիտական ուսումնասիրությունները, որտեղ հեղինակները լրջորեն անդրադարձել են նաեւ Արցախի բանահյուսությանը կամ ընդգրկել որոշ նյութեր,

3. Արցախի բանահյուսական ժողովածուների մասին տպագրված գրախոսությունները,

4. Արցախի ազգագրությանը, բարբառին, պատմությանը նվիրված այն ժողովածուներն ու աշխատությունները, որտեղ ընդգրկված են նաեւ բանահյուսական նյութեր,

5. տարբեր հեղինակների կողմից Արցախի բանահյուսական նյութերի մշակումները,

6. բանահյուսական մոտիվներով գրված գեղարվեստական գործերը:

Մատենագիտությունը ներկայացվում է հաջորդական համարակալմամբ եւ խիստ այբբենական կարգով: Սկզբում տրվում է հեղինակի ազգանունը եւ անվան համառոտագրությունը, որին հետեւում են նյութի վերնագիրը, համապատասխան հանդեսի, ժողովածուի, թերթի եւն վերնագիրը, տպագրման վայրը, թվականը, համարը, էջերը (առանձին աշխատությունների եւ ժողովածուների դեպքում՝ տպագրման վայրը, թվականը եւ էջերի քանակը, ձեռագիր աղբյուրների դեպքում՝ ստեղծման թվականը, վայրը, էջերի քանակը եւ պահվելու տեղը (արխիվ, գրադարան, թանգարան, ֆոնդ եւն): Այս տեղեկություններից հետո ներկայացվում է տվյալ աշխատանքի (համաձայն Արցախի բանահյուսությանն առնչվելու աստիճանի, բովանդակության եւ ծավալի) հնարավորինս ամփոփ նկարագիրը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՐՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարցի ուսումնասիրության պատմությունից: Հայ ժողովրդական բանահյուսության հարուստ ժառանգության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են խոր հնադարում: Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունները մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա նիստն ու կացը, հոգեկան ապրումներն ու երեակայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմության եւ այլ գիտությունների համար անլուծելի են: Դժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ ժամանակին գրի չառնվելու պատճառով:

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթյանները, ովքեր 1860թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Այդ գրառումներում առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական ժողովրդական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթյանները որեւէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է **«Հաքյաթին ընտրությունը»** խորհրդածությունը, որտեղ ասվում է. **«Հաքյաթին ընտրությունը էն ա, որ մին հաքյաթի մեջի տուրուստ պան ինի: Հաքյաթեն ամենը սոտ պաներ ա, ուրուր քցած, էրկանացրած: Ամմա կյիրիլիս վախտը հինչ ինի, պետում ա կյիրենք: Բայց մուսք մեր խելքին ըկորա պետում ա փռնըցրենք, տեսանք, որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոտի, որըն ա լափ ճշմարիտ»¹:**

Իրենց պակասություններով հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության եւ պատմելիւթեւի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը եւ մակարդակը:

1. *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երեւան, 1973, էջ 706

Դեռեւս 19-րդ դարի 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով հայ բանահյուսության գրառմանը, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը հրապարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու եւ հրատարակելու ժողովրդի հոգեւոր մշակույթի գանձերը²: Արձագանքելով այդ կոչին՝ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881-1882թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրվում են Տ.Նավասարդյանի կողմից³, իսկ ամբողջությամբ՝ 1973 թվականին⁴:

Ուղեհանուր առմամբ, Նավասարդյանի կոչը լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Վարանդայի (ներկայումս՝ Մարտունու) Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Յովհաննիսյանը գրի է առնում մի շարք հեքիաթներ, հանելուկներ, երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ եւ այլ ժանրերի նմուշներ՝ ուղարկելով Տ.Նավասարդյանին, ով դրանց մեծ մասը հրատարակում է⁵, իսկ որոշ նյութեր հրատարակվում են 20-րդ դարի 70-ական թվականներին⁶: Ուշագրավ է այն փաստը, որ բանահավաքը իր նյութերին կցել է նաեւ ազգագրական բովանդակությամբ բարբառային բառերի բառարան:

Բահաթրյանների, Մ. Տեր-Յովհաննիսյանի ձեռագրերը, ինչպես նաեւ Յարություն Թավրիզյանի՝ Շուշու խոսվածքով Մուսկվայում գրառած հեքիաթներն ու այլ բանահավաքների որոշ գրառումներ պահվում են ՀՀ ազգային արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում:

Այս շրջանում լայն տարածում է ստանում երգիծական ժանրի ստեղծագործությունների հավաքումը: Գալուստ Շերմազանյանը առաջին անգամ հավաքում եւ հրատարակում է Արցախի նշանավոր գվարճախոս Պըլը-Պուղու անվան շուրջ ստեղծված գրույցները⁷, որոնք հեղինակի կողմից ենթարկվել են որոշակի մշակման եւ չունեն գրառման հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Հեղինակը մինչեւ այդ տպագրել էր նաեւ «Ասրի բեգ եւ Գիքի» պիեսը⁸, այն համարելով Ղարաբաղի բարբառով գրված, բայց իրականում եւ գրվածքի լեզուն, եւ բա-

2. «Մշակ», 1882, N 4, 222, 1883, N 79, 1884, N 10, 1890, N 109

3. Նավասարդեան Տ., *Հայ ժողովրդական հեքիաթներ*, պրակ 8, 9, 10, Թիֆլիս, 1894, 1902, 1903

4. *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երեւան, 1973

5. Նավասարդեան Տ., *Հայ ժողովրդական հեքիաթներ*, պրակ 1, Վաղարշապատ, 1882

6. Գրիգորյան Ռ., *Հայ ժողովրդական մանկական երգեր ու խաղերգեր*, Երեւան, 1970, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երեւան, 1973

7. Շերմազանեանց Գ., *Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած*, Թիֆլիս, 1878

8. Շերմազանեանց Գ., Ասրի բեգ եւ Գիքի, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, 1863

ցատրությունները կիսագրական են, եղած բարբառայինն էլ՝ ավելի շուտ Ջուղայի բարբառով⁹:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում նշանակալից է Մակար Բարխուդարյանի դերը: Քաջատեղյակ լինելով մայրենի բարբառին եւ շրջելով պատմական Արցախը՝ նա գրառել է տարբեր ժանրերի նմուշներ, հատկապես ավանդություններ, գրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ՝ դրանք ամփոփելով «**Բարոյական առածներ**» ժողովածուում¹⁰: 1883 թվականին հրատարակվում է նրա «**Պըլը Պուղի**» ժողովածուն, որն ընդգրկում է գվարճախոսի անվան շուրջը ստեղծված բանահյուսությունը¹¹: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ ներկայացվում է Պըլը-Պուղու կենսագրությունը, ինչպես նաեւ քերականական ծանոթագրություններ եւ բառարան: Միաժամանակ Բարխուդարյանը բարբառով գրել է նաեւ գեղարվեստական ստեղծագործություններ¹²: Նշանավոր է նրա «**Արցախ**» պատմագիտական աշխատությունը¹³, որը ներառում է բանահյուսական որոշ նմուշներ:

Արցախյան բառուբանով հարուստ ֆելիետոններով ասպարեզ եկավ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը: 1900-1901թթ. Բաքվում¹⁴, ապա 1907 եւ 1908թթ. Վաղարշապատում¹⁵ հրատարակվեցին նրա «**Ջուննա-Տմբլա**» ժողովածուի գրքերը, որտեղ ամփոփված են հեղինակի՝ 1879-1907թթ. «**Նոր Ղար**» եւ այլ թերթերում տպագրած ֆելիետոնները, եւ որոնք, քաղված լինելով Շուշու ընտանեկան ու հասարակական կյանքից, որոշակի աշխուժություն են առաջացնում հայ պատմագագագրական շրջանակներում եւ խթանում բանահավաքչական աշխատանքները: «**Բ**» գրքի վերջում հեղինակը տվել է քերականական ծանոթագրություններ եւ դժվարիմաց բառերի բացատրություններ: Լինելով բնիկ շուշեցի, ուսանելով Շուշու թեմական դպրոցում, էջմիածնի Գեւորգյան ճեմարանում եւ ապա բարձրագույն կրթություն ստանալով Ֆրանսիայում՝ մասնագիտությամբ գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանը իր

9. Ռավթյան Կ., *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Երեւան, 1966, էջ 8

10. Բարխուդարեանց Մ. (Ուստա Գեորգ Բարխուդարեանց), *Բարոյական առածներ*, Թիֆլիս, 1898 (Մ. Բարխուդարյանը եւ Գ. Բարխուդարյանը նույն անձն են)

11. Բարխուդարեանց Մ., *Պըլը-Պուղի*, Թիֆլիս, 1883

12. Բարխուդարեանց Գ., *Արագը տարին կտարի*, Շուշի, 1883, *Չոբանն ու նշանածը*, Թիֆլիս, 1896, *Սիրգա եւ Աննա*, Ջմյուռնիա, 1876

13. Բարխուդարեանց Մ., *Արցախ*, Բագու, 1895

14. Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), *Ջուննա-Տմբլա*, հ. 1-3, Բաքու, 1900-1901

15. Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), *Ջուննա-Տմբլա*, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908

ողջ կյանքում գրառում է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր¹⁶, որոնց մի մասը հրատարակվում է¹⁷, իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում եւ Ե. Չարենցի անվան գրակա-նության ու արվեստի թանգարանի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

19-րդ դարի երկրորդ կեսերին Շուշին դարձել էր գիտամշակութային, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման խոշոր կենտրոն¹⁸, որտեղ ապրում եւ գործում էին բազմաթիվ նշանավոր մտա-վորականներ: Եվ պատահական չէ, որ հենց այստեղ հայ ազգագրության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը 1895թ. հիմնադրեց **«Ազգագրական հանդեսը»**, որտեղ ազգագրական եւ տեղագրական նյութերը ներկա-յացվում էին բանահյուսականի հետ միասին՝ ընդգրկելով հատկապես ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երգեր եւ այլ նմուշներ: Հանդեսի հրատարակչությունը Թիֆլիս տեղափոխվելուց հետո էլ այնտեղ շարունակվում էր արցախյան ժողովրդագրական նյութերի տպագրումը: Այստեղ է տպագրվել նաեւ Ե. Լալայանի նշանավոր **«Վարանդա»** աշխատությունը¹⁹, որը հազեցած է բանահյուսական նյութերով՝ հատկապես ավանդություններով:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին առանձին ուշադրություն է դարձվում Արցախի քնարական բանահյուսությանը: 1895թ. Խաչիկ Ռադ-յանը՝ Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղից, լույս է ընծայում **«Ռարաբադի ժողովրդական ջրօրհնյաց երգերից»** խորագրով մի շարք՝ արժեքավոր ծանոթագրություններով²⁰, իսկ 1908-1910թթ. **«Ազգագրական հանդեսի»** տարբեր գրքերում Ա. Ռադյանի հետ տպագրում 1885-1903թթ.

16. Հայրապետյան Թ., Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաշի Խաչան). *Կյանքն ու գործը*, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 24, Երեւան, 2007, գլուխ 5

17. Մելիք-Շահնազարեանց Կ., *Առակներ Ռարաբադի բարբառով*, «Հանդես ամսօրեայ», Վիեն-նա, 1930, 1931, *Հանելուկներ Ռարաբադի լեզվով*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1930, *Ռարաբադի բարբերեն*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1928, *Ղըլըցէ կնանոց պընը-փեշակը*, Թիֆլիս, 1882, *Նյութեր Ռարաբադի ազգագրության համար*, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1932, *Շոշվա դալին խերն ու շառը*, Թիֆլիս, 1887, Ղանալանյան Ա., *Առածանի*, Երեւան, 1960, Հարությունյան Ս., *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երեւան, 1965, *Հայ ժողովրդական հեքիայներ*, հ. 6, Երեւան, 1973

18. Խեմչյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչեւ XX դարի 60-ական թվականները)*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի հոդվածներ, Երեւան, 2007

19. Լալայան Ե., *Վարանդա. նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար*, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, Լալայան Ե., *Վարանդա. Նշանաւոր սոսներ*, «Ազգագրական հանդես», գիրք Գ., Թիֆլիս, 1898

20. Ռադեան Խ., *Ռարաբադի ժողովրդական ջրօրհնեաց երգերից*, «Արարատ», Ս. Էջմիածին, 1895, N 12

Վարանդայի տարբեր գյուղերում գրառած խաղիկները՝ հակիրճ ծանոթագրություններով եւ բարբառային բառերի բացատրությամբ²¹:

20-րդ դարի սկզբին նվազում է հետաքրքրությունը դեպի բանահյուսությունը՝ կապված քաղաքական բարդ իրավիճակի հետ: Այս շրջանում բանահավաքչական աշխատանքներ է ծավալում Սարգիս Խրայեյանը՝ Վարանդայի Նախիջեանիկ գյուղից: Նա ոչ միայն Արցախի, այլեւ Շամշադիի եւ Զանգեզուրի տարբեր բնակավայրերից գրառում է հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, մանրապատումներ, երգեր, խաղիկներ եւ այլ ժանրերի ստեղծագործություններ, կազմում բարբառային բառերի բացատրական բառարան: Ս. Խրայեյանի գրառումների մի մասը տպագրվում է առանձին գրքով²², մի մասը՝ համահավաք ժողովածուներում²³, որոշներն էլ ձեռագիր վիճակում հիմնականում պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

20-րդ դարի կեսերին Արցախի բանահյուսության գրառման աշխատանքները նորից աշխուժանում են: Երախտագիտությամբ պետք է հիշել ծննդով շուշեցի, Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Սարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի անունը, որի՝ 1920-60-ական թվականներին Շուշուց եւ Արցախի տարբեր գյուղերից հավաքած նյութերը ամփոփվեցին «**Հայ ժողովրդական հեքիաթներ**»²⁴ եւ «**Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը**»²⁵ ժողովածուներում: Սրանցից առաջինում ընդգրկված է 156 հեքիաթ, որ ամբողջությամբ գրի է առել Ս. Գրիգորյանը 1922-56թթ. ընթացքում: Մյուս ժողովածուն աչքի է ընկնում բազմաժանրությամբ՝ ժողովրդական վիճակի երգեր (ջանգյուլումներ), հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, բանաձեւային բանահյուսության նյութեր: Հեղինակը, երկար տարիներ շրջագայելով պատմական Արցախի Վարանդա, Գյուլիստան, Խաչեն, Ղիզակ եւ Զրաբերդ գավառների բնակավայրերը, եռանդուն ջանասիրությամբ, անձնվեր սիրով ու հմտությամբ է գրի առել բոլոր այդ ստեղծագործությունները: Ժողովածուներին կցված են բացատրական բառարաններ եւ ծանոթագրություններ:

21. Ղադեան Ա., *Վարանդայի բանաւոր գրականութիւնից*, «Ազգագրական հանդես», գգ. XVII, XVIII, XIX, Թիֆլիս, 1908-1910

22. Խրայեյան Ս., *Ղարաբաղի գվարճախոս Պըըը Պուղին*, Երեւան, 1956

23. Հարությունյան Ս., *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երեւան, 1965, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երեւան, 1973

24. *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 5, Երեւան, 1966

25. *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Ս. Գրիգորյան-Սպանդարյանի)*, Երեւան, 1971

Մ. Գրիգորյանի ձեռագրերը հիմնականում պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում եւ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

1960-70-ական թթ. Արցախի ժողովրդական բանահյուսությունը հարստացվում է նոր բանահավաքների գրառումներով (Բ. Ղազիյան, Ա. Ղազիյան, Մ. Առաքելյան, Մ. Մխիթարյան, Մ. Օհանջանյան, Լ. Հարությունյան):

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Միքայել Առաքելյանը 1960-ական թթ. Արցախի տարբեր գյուղերից հավաքում է բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնց մեծ մասը տպագրվում է²⁶:

1960 թ. Ստեփանակերտում բացվում է ժողովրդական ստեղծագործության մարզային տունը, որի աշխատակիցների՝ մարզի տասնյակ գյուղերից գրառած բազմաթիվ հեքիաթների, առակների, զրույցների, ավանդությունների, առած-ասացվածքների, ժողովրդական խաղիկների եւ այլ ժանրերի նյութերի մի մասը հրատարակվում է²⁷:

1983 թ. լույս է տեսնում Ալվարդ Ղազիյանի «**Արցախ**» խորագրով բանահյուսական ժողովածուն²⁸, որն ամփոփում է հիմնականում հեղինակի եւ Բարխուդար Ղազիյանի կողմից 1966, 1970-78 թթ. ընթացքում Արցախի եւ Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից գրառված նյութերը՝ հեքիաթներ, զրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ավանդություններ, երգեր, խաղերգեր, մականուններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Ժողովածուի վերջում կան ծանոթագրություններ եւ բարբառային բառերի բացատրություններ: Ծանոթագրություններում տրվում են բանահյուսական ստեղծագործությունների սերման ու կենցաղավարման հանգամանքները, բանասացների կենսագրական տվյալները, հայացքները, մեկնաբանություններն ու գնահատականները պատմվող նյութի վերաբերյալ, նյութերի գրանցման վայրն ու ժամանակը: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ արժեւորվում են մինչեւ այդ հրատարակված աշխատանքները, ներկայացվում տվյալ ժողովածուն կազմելու հանգամանքները եւ սկզբունքները: Հետաքրքիր է այն փաստը, որ հեքիաթների շարքում զետեղված է նաեւ հայ ժողովրդական էպոսի առաջին ճյուղի մի պատումը՝ «**Սանասար նան Բաղդասար**»: Ալվարդ Ղազիյանը բանագետ Սվետլանա Վարդանյանի հետ կազմել է նաեւ «**Բաքվի հայոց բանահյու-**

26. *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, 7, Երեւան, 1973, 1979

27. *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան)*, Երեւան, 1978

28. Ղազիյան Ա., *Արցախ*, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ.15, Երեւան, 1983

սուբյունը» ժողովածուն²⁹, որի նյութերի զգալի մասը գրառված է Բաքվում բնակվող արցախցի բանասացներից:

Արցախի բանահյուսության հավաքման գործընթացին նոր թափ հաղորդեց Մարտունու շրջանի Աշան գյուղի վաստակաշատ ուսուցիչ, բանահավաք Լեւոն Յարությունյանի՝ 1991թ. հրատարակած **«Նշխարներ Արցախի բանահյուսության»** ժողովածուն³⁰, որտեղ բացի բանահյուսական վերոհիշյալ ժանրերից, հեղինակն ուշադրություն է դարձրել նաեւ ասույթաբանական բանահյուսության ամենատարբեր տեսակների՝ կենացներ, խրատ, սուգ, ծիսական արտահայտություններ, դարձվածքներ, անձնանուններ եւ այլն: Միաժամանակ տրվում են տեղեկություններ ժողովրդական որոշ խաղատեսակների, բուսական եւ կենդանական աշխարհի, ուտեստի, սովորությունների, ծիսական երգերի, պարերի վերաբերյալ: Ընդարձակ առաջաբանում ներկայացվում է արցախյան բանահյուսության էությունը՝ որպես արցախցու հոգու եւ մտքի արտահայտություն: Ժողովածուն ունի բացատրական բառարան եւ ծանոթագրություններ: Բանահյուսական եւ ազգագրական բազմաթիվ նյութեր են ընդգրկված հեղինակի՝ նույն խորագիրը կրող հաջորդ³¹, ինչպես նաեւ **«Կաթնակորեկ»** ժողովածուներում³²:

Արցախի տարածքից նյութեր են գրառվել ու հրատարակվել նաեւ այլ հեղինակների կողմից, մի շարք սմուշներ ընդգրկված են Ղարաբաղի պատմությանն ու բարբառին նվիրված աշխատություններում: Դրանց զուգընթաց Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի վերաբերյալ տպագրվել են բանագիտական ու լեզվաբանական մի շարք ուսումնասիրություններ³³:

Նշված բուլոր բանահավաքների գործունեությունը, անշուշտ, լուրջ ներդրում է Արցախի բանահյուսական ժառանգությունը կորստից փրկելու գործում, սակայն, դժբախտաբար, պետք է ասել, որ նրանք հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի, հատկապես կոնկրետ խոսվածքների յուրահատկությունները՝ հավաքած նյութերը եւ հրատարակած ժողովածուները

29. **Բաքվի հայոց բանահյուսությունը (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը)**, Երեւան, 2004

30. Յարությունյան Լ., **Նշխարներ Արցախի բանահյուսության**, Երեւան, 1991

31. Յարությունյան Լ., **Նշխարներ Արցախի բանահյուսության**, 2-րդ մաս, Ստեփանակերտ, 2004, 3-րդ մաս, Ստեփանակերտ, 2007, 4-րդ մաս, Ստեփանակերտ, 2009, 5-րդ մաս, Ստեփանակերտ, 2011

32. Յարությունյան Լ., **Կաթնակորեկ**, Երեւան, 1998

33. Տեն **«Մատենագիտություն»** բաժինը

բարբառի ուսումնասիրման համար հաճախ դարձնելով ոչ հուսալի աղբյուր³⁴: Եվ եթե որոշ աշխատանքներ տպագրվել են գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով, ապա մյուսների մեջ էլ ակնհայտ են բարբառային օրինաչափությունների աղավաղումներ, որոնք հանդես են գալիս լեզվական տարբեր մակարդակներում³⁵: Հնչյունաբանական մակարդակում բանահավաքները հաճախ են անտեսել քմային ձայնավորների ու բաղաձայների, *ը՛*, *ը՛* երկբարբառակերպերի, ինչպես նաև գաղտնավանկի *ը*-ի տառադարձումը: Որոշ դեպքերում հանդիպում ենք Ղարաբաղի բարբառին խորթ *Ֆ* բաղաձայնի գործածությանը, հաճախակի են բառասկզբի դիրքում գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների պահպանման դեպքերը, չնայած բարբառում դրանք հիմնականում խլանում են: Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները պայմանավորված են բարբառին ոչ հատուկ՝ գրական հայերենի բազմաթիվ բառերի գործածությամբ, ինչպես *անլգամ*, *բոլորովին*, *գուցե*, *երիտասարդ*, *թեկուզ*, *ձկնորս*, *սրամիտ*: Քիչ չեն նաև քերականական օրինաչափությունների խախտումները. ժողովածուների մեծ մասում սկատելի են բացառական եւ գործիական հոլովածուների, դասական թվականների, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի եւ մի շարք այլ գրականաձեւ կազմություններ: Ընդհանուր առմամբ բոլոր ժողովածուներում անտեսված է բարբառագիտության մեջ ընդունված ուղղագրության միասնական կանոնը՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է: Նման աղավաղումները, մեր կարծիքով, պայմանավորված են հետեւյալ գործոններով.

1. Բանահավաքները, կարելուրելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը եւ բարբառի գիտական քննումը նպատակ չհամարելով, առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով: Այդ մասին նշված է որոշ ժողովածուների առաջաբաններում եւ ծանոթագրություններում.

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են գրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Չի բացառվում, որ

34. Սարգսյան Ա., *Տառադարձության կարեւորությունը բանահյուսության մեջ*, «Միջազգային գիտաժողովի նյութեր. Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ստեփանակերտ, 2007, Սարգսյան Ա., *Բարբառային օրինաչափությունների պահպանման կարեւորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով)*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, № 1

35. Սարգսյան Ա., *Արցախի բանահյուսության լեզուն*, Ստեփանակերտ, 2011, էջ 118

բազմաթիվ նյութեր գրառվել են վերհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է եկել նաեւ որպէս բանասաց.

3. Հաճախ նյութը հնչյունաքերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաեւ բանասացները՝ ձգտելով այն գրականացնել.

4. Որոշ դեպքերում էլ, կարծում ենք, խախտումների պատճառները տեխնիկական են՝ պայմանավորված բարբառային տառադարձությամբ նյութերի տպագրության դժվարություններով:

Թերեւս այդ թերությունները հաշվի առնելով՝ մեր կազմած եւ հրատարակած ժողովածուներում³⁶ խստորեն պահպանել ենք բարբառային գիտական տառադարձությունը՝ յուրաքանչյուր նմուշ ներկայացնելով բանասացի մայրենի խոսվածքով, չնայած հարկ է նշել, որ երբեմն նույն բնականվայրի տարբեր բանասացների, անգամ նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում նկատվում են արտասանական զուգաձեւություններ:

Արցախի բանահյուսության կենցաղավարման արդի վիճակը եւ ժանրային ու իմաստային առանձնահատկությունները՝ ըստ Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» ժողովածուի նյութերի*: Հեքիաթները, կապված հասարակական եւ տնտեսական պայմանների փոփոխության հետ, զարգացման հեռանկարներ չունեն եւ աստիճանաբար մոռացության են տրվում: Ի տարբերություն նախորդ տասնամյակներում հավաքված նման նյութերի՝ դրանք ավելի սեղմ են եւ բովանդակային մանրամասներով՝ ոչ հարուստ: Թերեւս դա է պատճառը, որ գրառած 113 նմուշներից զետեղել ենք ընդամենը 22-ը: Նկատվում է նաեւ մեկ կարեւոր այլ հանգամանք. բանասացները, հիմնականում լինելով գրագետ, հաճախ պատմում են ոչ թե երբեւէ իրենց լսած, այլ կարդացած հեքիաթները:

Ավանդություններն ու առակները եւս լայն կենցաղավարում չունեն, դրանց բանասացները նույնպէս հիմնականում տարեցներն են:

Վիպական բանահյուսության ժանրերից անենից կենսունակը զվարճախոսություններն են: Գրառված 1234 պատումներից, որոնց բանասացները տարբեր սերունդների ներկայացուցիչներ են, ներկայացրել ենք 592-ը:

Վերացման եզրին է քնարական բանահյուսությունը: Գրեթե վերացել են

36. Սարգսյան Ա., *Արցախյան հանելուկներ*, Ստեփանակերտ, 2002, *Արցախյան ավանդություններ*, Ստեփանակերտ, 2007, *Արցախի բանաձեւային բանահյուսությունը*, Ստեփանակերտ, 2009, *Արցախյան առակներ*, Ստեփանակերտ, 2011, *Արցախյան զվարճախոսություններ*, Ստեփանակերտ, 2014, *Արցախի բանահյուսությունը*, Երեւան, 2015

* *Բնագրային բոլոր օրինակները բերվում են այդ ժողովածուից՝ յուրաքանչյուրի մոտ նշելով համապատասխան բաժնի եւ նմուշի թվահամարները*

սիրերգերը, պարերգերը, ծիսական երգերը, հորովելները: Ժողովածուի 258 նման նյութերից 237-ը ժողովրդական խաղիկներ են՝ գրառված հիմնականում հին սերնդի բանասացներից:

Ասույթաբանական բանահյուսության ժանրերից դեռեւս լայն կիրառություն ունեն առած-ասացվածքները, անեծքներն ու օրհնանքները, առավել տարածված են մականունները: Գրառված՝ մարդկանց 3946 մականուններից ներկայացված են 1300-ը: Ի տարբերություն դրանց՝ հանելուկները, շուտասելուկները եւ հանգախաղերը, որոնք նախկինում լայն տարածում ունեին, աստիճանաբար տեղի են տալիս, չնայած մեզ հաջողվել է գրառել բավականաչափ նյութ:

Նշված ժամանակաընթացքում հավաքված նյութերը հանդես են գալիս իրենց ժանրային եւ իմաստային առանձնահատկություններով, որոնց հակիրճ նկարագրությունը ներկայացնում ենք ստորեւ:

Արցախյան ժողովրդական հեքիաթները (*քաթ*), լինելով ժողովրդական ամենասիրված ստեղծագործություններից, առանձնանում են իրենց գեղարվեստական արժեքներով: Դրանց մեջ արտահայտված են ժողովրդի դարավոր ձգտումներն ու երազանքները, համառ պայքարը բնության տարերային ուժերի ու անարդարությունների դեմ, ձեւավորված կարծիքն ու վերաբերմունքն այս կամ այն դեպքի ու երեւոյթի, ստեղծված իրավիճակի հանդեպ: Սկսած 19-րդ դարի 60-ական թվականների սկզբից, երբ Բահաթրյանները Շուշիում հայ իրականության մեջ առաջին անգամ նախաձեռնեցին ժողովրդական բանահյուսության հույժ կարեւոր այդ ժանրի նմուշների գրառումը, առ այսօր հավաքված նյութերն ընդգրկում են հեքիաթների հիմնական տիպերը: Նոր գրառումներում բացակայում են կենդանիների մասին հեքիաթները, որոնք հիմնականում վեր են ածվել առակների:

Հրաշապատում եւ իրապատում հեքիաթներում այլեւս չի գործածվում ներկայումս որպէս հանելուկ հանդես եկող «*Քաթ, քաթ, մին չուվալ ցակատ, վէջ կօթ օւտ, վէջ արկաթ...*» չափածո նախաբանը [10(692)], որն «օգնել է ստեղծելու հեքիաթ ունկնդրելու միջավայր ու տրամադրություն եւ ասվել է ամեն անգամ հեքիաթ պատմելու ժամանակ»³⁷: Շարունակվում են գործածվել ավանդական սկսվածքները՝ «*Իլնլ ա, չիլնլ...*», «*Իննում ա, չիննում...*», «*Իննում ա, իննում չի...*», «*Ճատ առաջ մին թաքավեր ա իլնլ...*», «*Բուննան անվնլն ըստը՛դէրք մին թաքավեր ա իլնլ...*», «*Էրկու ախպեր ըն իննում...*»:

Հիմնականում ավանդական են նաեւ վերջաբան բանաձեւները՝ «*Յիր-գիւնքան իրը՛ք խընծծր ա վէր ընգընէս. մինը՛ էս քաթը ըսօղէն, մինը՛ ըսկը-*

37. Ղազիյան Ա., *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-73թթ. գրառումների հիման վրա*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, № 4, էջ 237

նօղէն, մինըն էլ՝ լինս ախշարք տննս ընօղէն», «Աստուծ էլ տիյէրան մին մը՛ծ խընծծոր ա վէր քըցնում, կըտօրում ըն լուխճին պիժէնում», «Յիրգփիւքան իրէք խընծծոր ա վէր ընգում. մինը տամ ընք պըտմօղէն, մինը՝ կփրծղէն, մինըն էլ շըղըրծ-շըղարծ ընք անում, պիժը՛նում էս քարթը ըսկընտղնէրէն», «Յիրգփիւքան իրէք մը՛ծ նօռն ա վէր ընգում. մինը՝ ինծ, մինը՝ քը՛գ, մին նէլ՝ էս քարթը տըպօղէն», «Նըստում ըն օտում-խըմում, տըհէնց հաշտ մինտէղ ապրում», «Օխտը օր, օխտը քըշէր հըրսանէք ըն անում, յերգփիրը խաղաղ ղէկավարում», «Ըտի էլ չարը վիրանում ա, պարին հախտում ա, նըրանք հըսէն նըրանց մուրագէն, տուք էլ հըսնիք՝ ծէր մուրագէն», «Ըստուծանա հինչ կօ՛գիմ. մին մը՛ծ յանջիգ վէր ընգէ, մաչան մին բէլնուկ սիպտակ յը-ղօնէգնէ տննս տը՛ռնան, թըռչին սաղ ըշխարքավըս մին ինին, ամմէն տէղ խըղըղօթուն տանին, մէր ջանիլ-ջնիհնկըն էլ վըսակվէ, խուխատար-թուռ-նատար, ծուռնատար-կուռնատար տը՛ռնա, էն տըղէն ու էն ըխճըգանը նըման նըրան մուրագէն հըսնէ», «էս ա մէր քարթէն վէրչը, մատաղ ինիմ, դէ միհէնգ ըստըքըննէն մէր էն պըծըպածի ընէս թօթէն ըրաղան ըծէցէք, խըմինք՝ մէր վը՛ղէն-ճիրին, մէր ժուղուվորթէն, ըշխարքէս տակէն հինչ-քան էլ լւավ, հըրէյին հըսնօղ մարթ կա, լօխճին կէնացը» եւ այլն, որոնց մեծ մասը յուրահատուկ մաղթանքներ են բանասացների կողմից: Մի շարք հեքիաթների հատուկ են նաեւ միջնամասային բանածեները, որոնց միջոցով սկիզբ է առնում նոր գործողությունների պատումը կամ անդրադարձ կա-տարվում նախորդ գործողություններին՝ «Վէրչը, շատ ա քիս, խըրէգ՝ ա քիս, հըսնէս ա մի խօր ծծր...», «Ախըրը էս խաբարը էրնուշ յերգփիրնէ յէլ ա հըս-նում, հըրէվան թաքավէրթըննումը մին անըմը ըշխարքավը մին տը՛ռած իմաստուն ա իննում, ըսկանում ա կամ...», «Միհէնգ՝ ըտըրանց թօղիք՝ ըտը՛դ, տը՛սնաք՝ հինչ տը՛ռավ թաքավէրին կիճի տըղան...», «Միհէնգ էս օշափ ըխճըգանը թօղինք՝ ըստը՛դ, խաբար տանք ախպօրը անա...»:

Ժողովածուի հեքիաթները բնույթով, սյուժեներով ու թեմաներով բազ-մազան են: Հրաշապատում հեքիաթներն իրենց կառուցվածքով համընկ-նում են ինչպէս Արցախում նախկինում գրառված ու հրատարակված, այնպէս էլ հայ ազգագրական մյուս շրջաններից հավաքված հեքիաթ-ներին: Դրանցում ներկայացված հիմնական սյուժեներն ու մոտիվներն են.

1) Թագավորի կրտսեր որդին, սպանելով հոր այգու ոսկէ խնձորները հափշտակած դէներին, ազատում է գեղեցկուհի երեք քույրերին, սակայն հարազատ եղբայրների նենգության պատճառով հայտնվում է «մութ աշխարհում»: Այստեղ նոր սխրագործություններ կատարելով՝ Զնամբնու-րնուտ դուշի օգնությամբ ի վերջո դուրս է գալիս «լույս աշխարհ» ու կրտսեր գեղեցկուհու նվիրած մատանու շնորհիվ անելով անհնարինը՝ ամուսնա-

նում հարսնացուի հետ ու դառնում թագավոր՝ միաժամանակ կախարդական թռչունի ձագի ու փետուրի միջոցով կենդանացնելով չորացած այգին եւ վերադարձնելով հոր տեսողությունը [1(2)]:

2) Թագավորի մինուճար որդին մեծահոգությամբ ծովն է նետում մահամերձ հոր փրկության միջոցը հանդիսացող ձուկը, որի պատճառով վտարվում է թագավորության սահմաններից: Ճանապարհին ընկերանալով անծանոթ ծերունու հետ՝ վերջինիս կախարդական միջոցներով ամուսնանում է մեկ այլ թագավորի աղջկա հետ, որի բերանից ընկած օձի արյունով բուժում է հորը: Վերջում պարզվում է, որ կախարդ ծերունին տղայի ազատած ձուկն է [1(3)]:

3) Շնորհալի պատանին, աշակերտելով կախարդ Ուխային, կարճ ժամանակում տիրապետում է նրա «արիեստին»՝ ցանկության դեպքում կերպարանափոխվելով տարբեր կենդանիների: Չար վարպետը, իմանալով այդ մասին, փորձում է սպանել նրան, բայց ինքն է կործանվում: Յետագայում տիրապետելով արտասովոր բժշկի հմտություններին՝ պատանին պատրաստում է մարդկանց կենդանացնող եւ երիտասարդացնող դեղը, բայց սատանայի ձեռքով դառնում է դրա զոհը [1(4)]:

4) Մարդակեր քրոջից փախած երիտասարդը ապաստան է գտնում չար դեւի կուրացրած ծեր ամուսինների մոտ եւ սպանելով դեւին ու թռչունի խորհուրդով ճարելով կույրերի աչքերը՝ դեւի կախարդական մագի միջոցով վերականգնում է նրանց տեսողությունը: Այնուհետեւ տեսակցության գնալով քրոջը՝ հետապնդվում է վերջինիս կողմից: Օրհասական պահին օգնության են գալիս երկու հավատարիմ գամփռները՝ հոշոտելով քրոջը, որից մնացած մի կաթիլ արյունը հուշում է տղային քարավանապետի առաջադրած հարցի պատասխանը: Արդյունքում տղան ամուսնանում է քարավանապետի գեղեցկուհի աղջկա հետ՝ արժանանալով նաեւ մեծ հարստության [1(6)]:

5) Թագավորի ժլատության պատճառով աղքատ կնոջ անեծքից չորանում է այգին, որը ծերունու ուրվականի գուշակությամբ կարող է կանաչել միայն Յագարան բլբուլի երգի շնորհիվ: Կախարդական թռչունին ծեր կնոջ խորհրդով եւ կախարդական ձիու ու կրակե թրի օգնությամբ Սպիտակ դեւի պալատից կարողանում է փախցնել թագավորի կրտսեր որդին՝ նախորոք սպանելով Կարմիր եւ Սեւ դեւերին: Սակայն ավագ եւ միջնեկ եղբայրները, կուրացնելով նրան, հափշտակում են Յագարան բլբուլին ու երեք գեղեցկուհիներին՝ գնալով հոր պալատը եւ բոլոր քաջագործությունները վերագրելով իրենց: Շուտով կրտսեր արքայազնը, ծեր կնոջ կախարդանքով բուժվելով, սպանում է նաեւ Սպիտակ դեւին եւ վերադառնում

պալատ: Նրան տեսնելով՝ թռչունը սկսում է երգել, եւ չորացած այգին իսկույն կենդանանում է: Բացվում է կեղծիքը, սակայն վեհանձն տղան ներում է եղբայրներին [1(7)]:

6) Արքայազնը, տեսնելով գեղեցկուհու նկարը, սիրահարվում եւ ամեն կերպ ձգտում է փնտրել ու ճարել նրան: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ բարի ծերունու, մրջյունների, ձկների, թռչունների թագավորների տված կախարդական առարկանների եւ իր հնարամտության շնորհիվ նա հասնում է աղջկա մոտ ու կատարում նրա հոր առաջադրած պայմանները: Ի վերջո հանդիպելով թագավորի խաբեությանը՝ տղան փախցնում է սիրածին [1(8)]:

7) Կուրացած հոր բուժման միջոցը փնտրող թագավորի կրտսեր որդին, կախարդական ձիու օգնությամբ մեծ փորձություններ հաղթահարելով, հանդիպում է համաշխարհային գեղեցկուհուն եւ փախցնում նրան՝ չնայած հակառակորդների, այդ թվում եւ հոր խորդավանքներին [1(13)]:

8) Աղքատ գյուղացու կրտսեր աղջիկն ամուսնանում է իր ընտանիքին ապրուստի միջոցներ պարգեւած օձի հետ, որը կերպարանափոխվում եւ դառնում է գեղեցիկ տղա: Աղջկա ավագ քույրը նախանձից սպանում է քրոջը, որի դիակի տեղում աճած ծառի տաշեղից կենդանանում է աղջիկը՝ երեւան հանելով քրոջ խարդախությունը: Վերջինս արժանանում է դաժան պատժի [1(14)]:

9) Թագավորի պայմանը կատարելու համար անմահական ջուրը փնտրող երեք եղբայրները ծեր կնոջից իմանում են տեղը եւ այն ձեռք բերելու միջոցները: Սպանելով վիշապին եւ սրտի միջից հանելով անմահական ջրով լի տարան՝ նրանք կախարդական հայելու մեջ տեսնում են մահամերձ թագավորին ու բարի կնոջ նվիրած թռչող գորգի շնորհիվ հասնում իրենց երկիրը: Վերակենդանացած թագավորն իր երեք աղջիկներին ամուսնացնում է երեք եղբայրների հետ [1(15)]:

10) Աստված երեք աղքատ եղբայրներից յուրաքանչյուրին մեծ հարստություն է պարգեւում եւ որոշ ժամանակից հետո աղքատ մարդու կերպարանքով ներկայանում նրանց: Ավագ ու միջնեկ եղբայրների կողմից արժանանալով արհամարհանքի՝ Աստված մեկին շնագայլ է դարձնում, մյուսին՝ արջ, իսկ կրտսերի առատ հյուրասիրությունը վայելելով՝ նրա հարստությունը բազմապատկում է [1(17)]:

11) Հովվի որդին, ծեր կնոջ խորհուրդներին հետեւելով, սպանում է Սպիտակ դեւին եւ ազատում թագավորի միևնույն աղջկան, սակայն վեզիրի նենգ տղան, կարծելով, թե սպանել է նրան, աղջկա հետ վերադառնում է պալատ եւ պատրաստվում դառնալ թագավորի փեսան: Հարսա-

նիքի ժամանակ ծեր կինը պատմում է եղելությունը, ինչը հաստատում է հարսնացուն: Թագավորի հրամանով հրապարակավ խայտառակում են խաբեբային, իսկ հովվի տղան կնության է առնում արքայադստերը եւ դառնում թագավոր [1(18)]:

12) Երիտասարդ Գագիկ թագավորը, կատարելով հանգուցյալ հոր պատգամը, երեք քույրերին կնության է տալիս երեք դերվիշների, որոնց սվիրած երեք կախարդական մատանիների շնորհիվ հասնում է նկարում տեսած գեղեցկուհուն եւ արժանանում նրա սիրուն: Աղջկա տված կախարդական մատանիների եւ խորհուրդների միջոցով նա կարողանում է կատարել նրա հոր երեք պայմանները եւ ամուսնանում գեղեցկուհի արքայադստեր հետ [1(19)]:

13) Աղքատ ամուսինները խնամում են Աստծո կողմից իրենց պարգեւած գավակին՝ օձին: Վերջինս, կախարդական միջոցներով կատարելով թագավորի անհնարին պայմանները, ամուսնանում է նրա կրտսեր աղջկա հետ՝ գիշերները կերպարանափոխվելով գեղեցիկ երիտասարդի: Չնայած տղան խնդրում է գաղտնիքը ոչ ոքի չասել, սակայն կինը պատմում է դրա մասին, ինչի արդյունքում ամուսինն անհետանում է: Լինելով անկոտրում կամքի տեր՝ թագավորի աղջիկը, երկար փնտրելով եւ բազում դժվարություններ ու փորձություններ հաղթահարելով, պատահաբար ձեռք բերած կախարդական երեք առարկների՝ մարդուն անտեսանելի դարձնող ակնոցի, թռչող գորգի ու բոլոր կողպեքները բացող բանալու շնորհիվ ի վերջո հասնում է Սպիտակ վիշապի պալատը եւ փախցնում այնտեղ բանտարկված ամուսնուն [1(21)]:

14) Յոթ եղբայրները, չար հարեւանի նենգության հետեւանքով կարծելով, թե իրենց ոչ թե քույր, այլ եղբայր է ծնվել, տնից հեռանում են՝ այլեւ չվերադառնալու պայմանով: Պատահաբար իմանալով եղբայրների գոյության մասին՝ համարձակ աղջիկը մեծ դժվարություններով ճարում է նրանց, սակայն հանդիպում է չար վիշապին: Եղբայրները, վերջինիս սպանելով, քրոջ հետ վերադառնում են տուն՝ ճանապարհին հանդիպելով նաեւ տարիներ շարունակ իրենց փնտրող հորը [1(22)]:

Այդ տիպի գրեթե բոլոր հեքիաթներում ներկայացվում են մարդակերներ, դեւեր, վիշապներ, կախարդական տարբեր առարկաներ, թռչուններ, կենդանիներ:

Հրաշապատում հեքիաթները միշտ ավարտվում են բարու հաղթանակով եւ չարի պարտությամբ, մի հանգամանք, որ սովորաբար հատուկ է նաեւ իրապատում հեքիաթներին, որոնք հանդես են գալիս ներքոհիշյալ սյուժեներով եւ մոտիվներով.

1) Աստված հնարավորություն է տալիս աղքատ մարդուն հարստանալու՝ խորհուրդ տալով գաղտնիքը ոչ մեկին չհայտնել: Չհետեւելով խորհրդին՝ նա գաղտնիքն ասում է կնոջը, որի անգաղտնապահության պատճառով սնանկանում է: Օգտվելով Աստծո առատաձեռնությունից՝ աղքատ մարդը կրկին կարողության տեր է դառնում՝ վտարելով կնոջը [1(1)]:

2) Անսովոր ոսկորի փոշուց հղիացած վեզիրի աղջիկն ունենում է հնարամիտ որդի, ով, տեղի տալով թագավորի հրամանին, բացահայտում է ձկների ծիծաղի պատճառը. պարզվում է՝ թագուհու բոլոր քառասուն սպասուհիները, որոնք իրականում կանացի շորերով տղաներ են, նրա սիրեկաններն են [1(5)]:

3) Համբերատար տղան միշտ հիշում է հոր խոսքերը եւ չընկրկելով դժվարությունների ու ձախորդությունների առաջ՝ ձգտում է հասնել իր նպատակին, ինչը հաջողվում է: Գնահատելով տղայի անզիջում կամքը՝ թագավորը նրան ամուսնացնում է իր գեղեցկուհի աղջկա հետ [1(9)]:

4) Կատարվում է թագավորի երազը. երիտասարդ տարիքում սնանկանալով եւ կորցնելով կնոջն ու երկու տղաներին՝ ծեր հասակում գտնում է նրանց եւ ժողովրդի կողմից կարգվելով նոր երկրի թագավոր՝ ընտանիքի հետ բախտավոր ապրում [1(10)]:

5) Մոր մահից հետո սիրահետվելով հոր կողմից՝ աղջիկը հագնում է փայտե շորեր եւ հեռանում տնից՝ հայտնվելով թագավորական պալատում, որտեղ նրան *Փէտի ծննծոն* մականունն են տալիս: Թագավորի տղան, տեսնելով փայտե շորերի մեջ քողարկված գեղեցկուհուն, սիրահարվում էւ կնության է առնում նրան: Իմանալով այդ մասին՝ աղջկա հայրը հանկարծամահ է լինում [1(11)]:

6) Ավագ եղբոր անարդար վերաբերմունքի արդյունքում կրտսեր եղբայրը հայրական տնից իրեն բաժին հասած ծեր հոր հետ տեղափոխվում է օտար քաղաք, որտեղ իր ազնիվ արարքներով արժանանում է տեղի թագավորի ուշադրությանը եւ ամուսնանում նրա աղջկա հետ: Վեհանձն տղան ներում է եղբորը եւ բարեկեցիկ կյանք ստեղծում նաեւ նրա ու նրա ընտանիքի համար [1(12)]:

7) Աղքատ գյուղացի երիտասարդը կնության է առնում թագավորի ծուլ աղջկան եւ ստիպում նրան աշխատել: Աղջիկն իրեն տեսակցության գնացած հորն ու մորն առաջարկում է աշխատել, քանի որ ըստ ամուսնու տան սովորույթի՝ ով չի աշխատում, նրան չեն կերակրում: Թագավորը, գնահատելով փեսայի կամքը, նրան է նվիրում իր հարստության կեսը [1(16)]:

8) Խորթ մորից հալածված երեք քույրերը, մեծ դժվարություններ հաղթահարելով, ի վերջո հայտնվում են թագավորական պալատում, որտեղ

կրտսեր քույրն ամուսնանում է արքայազնի հետ՝ ունենալով զույգ ոսկե-գանգուր որդի: Սակայն կաշառվելով խորթ մոր կողմից՝ տատմերը նորածիններին թաքցնում է ջրաղացում՝ նրանց տեղը շան լակոտներ դնելով: Գազազած թագավորը հրամայում է շան լակոտները մորթել, իսկ հարսին մերկացնել եւ գյուղեգյուղ շրջելով՝ խայտառակել: Խարդախությունը բացահայտվում է: Արդյունքում խորթ մայրն ու տատմերը դաժանորեն սպանվում են, թագավորը հանկարծամահ է լինում, իսկ արքայազնը դառնում է թագավոր, նրա կինը՝ թագուհի [1(20)]:

Ավանդությունները վիպական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալում եղած եւ տեղի ունեցած իրերն ու դեմքերը, դեպքերն ու երեւոյթները: Հիմք ընդունելով ավանդությունների էությունը՝ Ա.Ղանալանյանը դրանք բաժանում է երեք հիմնական տեսակների³⁸.

1. **Ստուգաբանական ավանդություններ**, որտեղ մեկնվում, ստուգաբանվում եւ իմաստավորվում են անհասկանալի բառերը.

2. **Բացատրական ավանդություններ**, որոնք ընդգրկում են երկնային եւ երկրային տարբեր մարմինների առաջացումը, կենդանիների ու բույսերի տարբեր հատկություններ, մարդկային ամենատարբեր հարաբերություններ, զանազան երեւոյթներ, սովորություններ, հավատալիքներ, հանգամանքներ.

3. **Վարքաբանական ավանդազրույցներ**, որտեղ կենսագրական տեղեկություններ եւ միջադեպեր են պատմվում իրական եւ մտացածին, հայտնի եւ անհայտ անհատների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Արցախի բանահյուսության մեջ ըստ քանակի գերակշռում են ստուգաբանական ավանդությունները: Քիչ չեն նաեւ բացատրական ստեղծագործությունները, իսկ վարքաբանական ավանդազրույցները զգալիորեն զիջում են այդ երկուսին: Որոշ ստեղծագործություններ էլ իրենց էությամբ կարող են դասվել եւ՛ առաջին, եւ՛ երկրորդ խմբերի մեջ:

Արցախյան ավանդությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի բնաշխարհն ու նրա հետ կապված հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները: Արցախում եւս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու ոգեղինացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու կենդանիները, առանց որոնց անհնար է արցախցու գոյությունը:

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրսը, Մռավն

38. Ղանալանյան Ա., *Ավանդապատում*, Երեւան, 1969, էջ ԻԸ-ԻԹ

ու Դիզափայտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել մի շարք ավանդություններում: Այժմ էլ արցախցի կանայք, ձեռքերը կարկառելով դեպի այդ լեռները, խնդրում են կատարել իրենց իղձը՝ մեկին պահպանելու, երկար կյանք պարգևելու, փորձանքներից հեռու պահելու կամ պատժելու: Այսպես. չար կեսուրից ազատվելու համար թշվառ կինը խնդրում է Քիրսին իրեն քար դարձնել, որը եւ իսկույն կատարվում է [2(96.ա)], բաքվեցի հայ կինը հեռու-հեռվից դիմում է Դիզափայտին իր մահամերձ որդու կյանքը փրկելու խնդրանքով՝ խոստանալով մատաղ անել, եւ հիվանդը, որի մահը բժիշկները համարում էին անխուսափելի, կազդուրվում է [2(81.բ)], բնակիչները խնդրում են Մռավին՝ փրկել իրենց Քափասից, որը, անչափ բարձրանալով, ստվերի տակ է թողել ողջ շրջակայքը, Մռավը լսում է խնդիրքը եւ թրով ջարդում ըմբոստ լեռան գլուխը [2(103)]:

Հայրենի լեռների հետ պաշտվում են նաեւ մի շարք քարեր եւ ժայռեր, որոնք դարձել են ուխտատեղիներ: Դրանց մոտ աղոթում են, մոմ վառում, մատաղ կտրում: Առանձնակի պաշտամունքի առարկա են ծծաքարերը, որոնցից իր զորությամբ հայտնի է Խերխան գյուղի մերձակայքում գտնվողը: Այն հեռվից ծծկեր երեխային կերակրող կնոջ տեսք ունի, որի ծծերից կաթ-կաթ ջուր է հոսում: Սակավակաթ կանայք այդտեղ աղոթում էին, մոմ վառում, այդ ջրից քսում իրենց կրծքերին, եւ կաթը իսկույն առատանում էր: Ավանդության համաձայն՝ մի անխիղճ մայր այս ժառի մոտ արձակել է իր ծծկեր երեխային եւ փախել: Աստված ժայռին ծծեր ու կաթ տալու շնորհք է պարգևել, որ երեխան սովից չմեռնի [2(96.բ)]: Իրենց շուրջը հյուսված պատմություններով հայտնի են նաեւ մի շարք այլ քարեր ու ժայռեր, ինչպես նաեւ սարեր, բլուրներ, ձորեր, դաշտեր, կամուրջներ, տեղամասեր, ճանապարհներ [2(82-128)]:

Դեռեւս պահպանվում են ջրի պաշտամունքի մնացուկները. մի քանի աղբյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդությունների բժշկող: Դրանցից մի քանիսն ամենայն տեսակ, իսկ մյուսները միայն որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Որպես ամեն տեսակի հիվանդությունների բժշկող՝ հայտնի է Հաղորտի գյուղի **Ջըրավուր ախպփորը**, որին այցելելով՝ հիվանդները ջրից խմում եւ քսում են իրենց մարմնին ու կազդուրվում [2(165)]: Դիզափայտ լեռան ստորոտի գյուղերում մեծ համբավ ունի լեռան վրա գտնվող **Արջին ախպփորը**: Ավանդությունը, ըստ որի՝ աղբյուրը բխել է ծարավից տոչորվող արջի՝ երկնքին ուղղված խնդրանքի արդյունքում, հիմա էլ պատմվում է այդ գյուղերում: Պաշտվում է նաեւ աղբյուրից վերեւ գտնվող քարայրը, որտեղ կայծակը խոցել է արջին [2(161)]:

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ [2(156-181)]: Որոշ պատումներ են պահպանվել նաեւ այլ ջրերի մասին [2 (176), 2(180)]:

Արցախում յուրահատուկ է բույսերի եւ կենդանիների պաշտամունքը: Ծառապաշտության մեջ նախապատվությունը տրվում է **պըռըշնի** (բռնչենի) ծառին, որին կարելի է հանդիպել կալատեղերում, գերեզմանոցներում, սրբավայրերում: Հատկապես պաշտվում են այս վերջինները, քանի որ ժողովրդի մտածողությամբ Աստծու զորությունը տված է սրբերին եւ նրանց մոտ գտնվող ծառերին: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ու սրբավայր ունի նման ծառեր, որոնց հանդեպ խոր հավատով են լցված բոլոր բնակիչները: Մեծ մեղք է համարվում սրբազան ծառերը կամ նույնիսկ նրանց փոքր ճյուղերը կտրելը. հանդգնողը ժողովրդի դատողությամբ անպայման պատժվում է:

Հաղորդի շրջանի Պլեթանց գյուղի եկեղեցու բակի մեծ պռշնու մասին ասում են, որ մի անգամ գյուղի պատանիներից մեկը համարձակվել է բարձրանալ ծառը եւ պարսատիկի համար երկճյուղ կտրել, սակայն իջնելուց ընկել է ժայռի վրա եւ իսկույն մահացել: Հետագայում մահացել են նաեւ նրա եղբայրները եւ քույրերը: Պատահական չէ, որ մինչեւ հիմա ոչ ոք չի համարձակվում օգտագործել անգամ ծառի չորացած եւ թափված ճյուղերը, դրանցով միայն մատաղ են եփում, կամ ծերունիները աչքի ուլունքներ են պատրաստում նորածինների համար [2(130)]: Նույն գյուղի մեկ այլ սրբավայրի՝ **Նըհատակի** մասին պատմում են, որ գյուղի՝ գավակ չունեցող բնակիչներից մեկը Աստծու պատվերով մի գերեզմանաքար է տարել եւ կանգնեցրել այդտեղի թեքնի սուրբ ծառի տակ, եւ ինը ամիս հետո նրա ընտանիքում տղա է ծնվել: Մի գյուղացի՝ համագյուղացիների բնորոշմամբ խելքը հացի հետ կերած մի հայ, անտեսելով պաշտամունքը, սուրբ ծառի՝ կայծակից չորացած եւ ընկած ճյուղը կտրտել եւ օգտագործել է տան կարիքների համար, որի պատճառով էլ նրա աջ ձեռքը չորացել է [2(131)]:

Բացի պռշնուց եւ թեքնուց պաշտվում են կաղնին, սոսին, ընկուզենին, տանձենին եւ այլ ծառեր: Այդ ծառերի տակ մատաղ են անում, մորթված անասունի կամ աքլորի գլուխն ու ոտքերը դնում ծառի փչակում, մոմ վառում, թաշկինակ կամ հագուստի մի կտոր կապում ծառի ճյուղին եւ վերադառնում: Նման ծառերը չորանալուց հետո էլ մնում են՝ որպես պաշտամունքի առարկա: Դրանց փտած ճյուղերի փոշին, որ կոչվում է **խընսթուն**, ջրի մեջ լուծում եւ խմում են հիվանդություններից զերծ մնալու համար:

Ավանդություններ կան նաեւ սովորական բույսերի մասին [2 (182-185)]:

Թռչուններից ամենից տարածվածը ծիծեռնակի պաշտամունքն է, որի

մասին եղած պատմություններն այժմ էլ տարածված են տարբեր գյուղերում [2(186 ա, բ)]: Մեծ մեղք է համարվում ծիծեռնակին սպանելը, անգամ նրա բույնը քանդելը, թեկուզ այն լինի տան մեջ կամ նույնիսկ օջախի գլխին: Ժողովրդի կարծիքով՝ ծիծեռնակի բույնը քանդողի տունը անպայման կավերվի:

Ավանդություններ են պահպանվել ուրիշ թռչունների մասին [2(187-206)]:

Սողուններից պաշտվում է լորտուն (լօկը): Ժողովրդի հավաստմամբ լորտուն հայ է, իսկ օձը՝ թուրք: Պատահական չէ, որ լորտուն միշտ սպանում է հանդիպած օձին, որպեսզի վերջինս հայերին չխայթի: Պաշտվում է նաև տան օձը, որը համարվում է *դծվնթ* (հաջողություն բերող): Իշխում է այն կարծիքը, որ, եթե շահմար օձը մեկի բերանում թքի, վերջինս իմաստուն կդառնա: Նման պատվի արժանացել է *Օվջի Փիրումը* [2(222)]:

Կաթնասուններից կատվի մասին ասում են, որ նա Քրիստոսի թաշկինակն է: Իբրեւ մի անգամ Յիսուսը հյուրընկալվել է մի տան եւ, տեսնելով, որ մկները խանգարում են ճաշել, հանել է թաշկինակը, խաչակնքել եւ արձակել: Այն իսկույն կատու է դարձել ու հալածել մկներին [2(214)]: Կատուն համարվում է սուրբ, նրան սպանելը՝ մեծ մեղք. իզուր չեն ասում.

- Յու վեր մին կատու ըսպանէ, բեղմա օխտը յը՛խծէ շինի, հանցու մէխկա միզվի:

Մի ավանդության համաձայն՝ արջը ժամանակին ազահ ջրաղացպան է եղել: Մի անգամ նա գողացել է բազմազավակ որբեւայրու այլուրի մի մասը եւ վերջինիս անեծքով դարձել արջ [2(215)]: Յուզիչ պատմություն է *Պըսկէս պէրք* եկեղեցու բակում թաղված արջի մասին եղած ավանդությունը: Երախտապարտ արջը կամովին գնում է վանք եւ օգնում իր վերքը բուժած տերտերին՝ եկեղեցու կառուցման համար քարեր կրելով: Յերթական անգամ հեռվից քար բերելով՝ նա իր փրկիչին մեռած է գտնում եւ, վշտից գլուխը խփելով հանգուցյալի տապանաքարին, ինքնասպան լինում: Արջին թաղում են եկեղեցու բակում, որը եւ դառնում է սրբատեղի: Չբեր կանայք չորքէչոք պտտվում են արջի գերեզմանաքարի շուրջը, Աստված ասում է՝ *պըսկըվին, չըպէրք*, եւ նրանք պտղավորվում են: Այստեղից էլ ժողովրդի ստուգաբանությամբ առաջացել է վանքի անունը [2(150)]: Նմանատիպ մի գերեզման էլ կա Խնապատ գյուղի մերձակայքում՝ Նըհատակ տեղամասում: Ասում են՝ այստեղ մի գայլ է թաղված, որը սնել է պաշտպանել է գաղթի ժամանակ մորը կորցրած մի մանկան [2(151)]:

Գեղեցիկ պատումներ են հյուսվել նաև կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների մասին [2(207-219)]:

Երկնային լուսատուներից պաշտվում են հատկապես արեւն ու լուսինը: Ըիշտ է՝ դրանց առաջ այլեւս ծունր չեն իջնում եւ չեն աղոթում, ինչպես

առաջներում, բայց շարունակում են դրանցով երդվել.

- Էն անրճվը, թա էտ պէնը ըրած ինիմ, Էն լինսինսգան ինձ քուռըցընէ, թա սըճտ ինիմ:

Ծեր կանայք երբեմն դիմում են այդ լուսատուներին՝ խնդրելով պահապան լինել իրենց հարազատներին:

Ավանդություններ կան նաեւ աստղերի, կայծակի, անձրեւի, որոտի, գիշերվա ու ցերեկվա, օրվա, երկրաշարժի մասին [2(1-8)]:

Մի շարք ստեղծագործություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի եւ հատկապես Քրիստոսի հանդեպ ունեցած մեծ հավատը. կռապաշտների զորավարը, տեսնելով սպանված քրիստոնյա գեղեցկուհու վրա երկնքից իջած լույսը, իր գինվորների հետ ընդունում է նրա կրոնը [2(81ա)], հովիվը, հրաժարվելով Քրիստոսին կաթ տալուց, նրա անեծքով իր հոտի հետ քարանում է [2(117)], Քրիստոսը զայրանալով անիծում է ջորուն, եւ վերջինս զրկվում է պտղաբերելու հնարավորությունից [2(213)]:

Արցախյան ավանդություններում մեծ արձագանք է գտել ժողովրդի ներքին կյանքը՝ զբաղմունքը, կենցաղը, հասարակական հարաբերությունները: Ջբաղմունքներից հատկապես արտացոլվել են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, այգեգործությունը, որսորդությունը, որոնք կենսական մեծ նշանակություն ունեն արցախցու կյանքում: Կենցաղային ավանդությունների մեջ տեղ են գտել մի շարք սովորույթներ, հարաբերություններ, ծեսեր: Դարեր շարունակ ազատ սիրուն եւ ամուսնությանը խոչընդոտել են սիրող զույգերի սոցիալական տարբեր ծագումն ու հասարակական դիրքը, ընչքային դրությունը՝ ստիպելով սիրահարներին զաղտնի հեռանալ հայրենի օջախներից, ինչը եւ հաճախ ոճրագործությունների եւ ողբերգությունների տեղիք է տվել: Այսպես, Վանք գյուղի բեկի աղջիկը՝ Զուռումը, անտեսելով հոր կամքը, փախչում է սիրած տղայի հետ եւ բնակվում գյուղից հեռու՝ անմարդաբնակ մի վայրում, որտեղ եւ հոշոտվում է զազանների կողմից: Զետագայում այդ վայրում գյուղ է հաստատվում, որն էլ Զուռումի հիշատակին կոչվում է **Զուռումէն թաղ**, իսկ հետո՝ **Զուռաթաղ** [2(52 գ)]: Սակայն միշտ չեն ծնողները պարտադրում իրենց կամքը զավակներին, երբեմն նրանք տեղի են տալիս՝ հարգելով անկեղծ զգացմունքները: Մի ավանդության համաձայն՝ Դիզակի մելիք Սաջումը չի ընդդիմանում իր միևնուճար աղջկա՝ Գայանեի սիրուն եւ նրան ամուսնացնում է ծառա Գագիկի հետ՝ մելիքությունը կտակելով վերջինիս [2(225)]: Նարեշտար գյուղի անունը ստուգաբանող ավանդության մեջ քուրդ բեկի միևնուճար աղջիկը, հակառակ հոր կամքին, փախչում եւ ամուսնանում է իրենց տան հայ ծառա Առստամի հետ: Զետագայում հայրը ներում է աղջկան՝ տալով մեծ օժիտ եւ ծառաներ [2(63)]: Սրտառուչ մի պատմություն է Մեծ Թաղեր եւ Տող գյուղերի խաչմերու-

կում գտնվող Արզուման վանքի մասին եղած ավանդությունը. ռուս զինվորները իրենց հետ Ռուսաստան են տանում կռվի ժամանակ մորը կորցրած մի հայ մանկան՝ Արզուման անունով, որը, կրթություն ստանալով եւ մեծ հարգանքի արժանանալով, դառնում է գեներալ: Վերադառնալով Շուշի՝ նա ամուսնանում է իրենից տարիքով մեծ մի հայ կնոջ հետ: Մի օր էլ ամուսնու ոտքերը լվանալիս կինը տեսնում է նրա ոտքի նշանը եւ հեծկլտալով ուշաթափվում. պարզվում է՝ ամուսինները մայր եւ որդի են, որոնք տարիներ առաջ կորցրել են իրար: Խոր հիասթափություն ապրելով՝ նրանք այդ ամենը պատմում են տերտերին, որն էլ խորհուրդ է տալիս մեղքերը քավելու համար մի եկեղեցի կառուցել եւ մեջը աղոթել, ինչը եւ սիրով կատարում են [2(132)]: Նման դեպք է կապված Տումի գյուղի մերձակայքում՝ **Իքակ** գետի վրա, գտնվող կամուրջի կառուցման հետ. քույր ու եղբայր, մանկուց իրար կորցնելով, օտարության մեջ հանդիպում են եւ, անտեղյակ իրականությանը, ամուսնանում: Տարիներ հետո, պառավ կնոջից իմանալով եղելությունը, նրանք դիմում են Գոխչ վանքի տերտերին՝ մեծ մեղքը քավելու խնդրանքով, եւ նրա խորհրդով մի թանկարժեք նվեր-հիշատակ են թողնում հայրենի գյուղի ժողովրդին. կառուցում են այդ կամուրջը [2(92)]:

Մի շարք ավանդություններում արծարծվել են օտար բռնակալների նվաճողական նկրտումները, կատարած ավերածություններն ու թալանը եւ արցախցիների անզիջում պայքարը նրանց դեմ: Ըստ ավանդության՝ Յադրուֆի շրջանի գյուղերից մեկը ստացել է **Թեզխարաբ** (հաճախակի փչացող) անունը, քանի որ այդ տեղով անցնող օտար բռնակալներից յուրաքանչյուրը ավերել է թալանել է այն [2(12)]:

Արցախցին առանձնապես վրիժառու է դառնում, երբ փորձում են պղծել նրա սուրբ զգացմունքները: Նման մի հուզիչ պատմություն է ներկայացնում Ճարտար եւ Սոս գյուղերի մոտակայքում գտնվող **Ղիշա վանքի** մասին եղած ավանդությունը. օտար բռնակալ խօշանբանձը, չբավարարվելով կատարած ավերածություններով եւ կողոպուտով, օրենք է սահմանում, որի համաձայն՝ իրեն է վերապահվում յուրաքանչյուր նոր ամուսնացող աղջկա հետ առաջին գիշերն անցկացնելու իրավունքը: Կտրիճ երիտասարդ եղիշեն՝ ժողովրդի հավաստմամբ՝ Գրիգոր Լուսավորչի թոռը, չկարողանալով տանել նման անպատվությունը, հարսի շորերով ներկայանում է բեկին եւ գիշերը խողխողում նրան՝ ինքն էլ նահատակվելով հետագայում իր անունը կրող վանքի տեղում [2(137)]:

Առանձնակի շարքով են ներկայանում Թեւան Ստեփանյանի մասին պատմվող ավանդազրույցները: Նշանավոր հայդուկապետն իր ամբողջ կյանքը նվիրել է արտաքին եւ ներքին թշնամիների դեմ մղվող պայքարին: Մի ավանդության մեջ իր փոքրաթիվ քաջերով նա հաղթում է թուրքական

գործին՝ կանխելով արյունահեղությունն ու թալանը [2(220 դ)], մի այլ դեպքում գնդակահարում է հայ կնոջ պատվի հանդեպ ոտնձգություն կատարած իր զինվորին [2(220 ա)], մի ուրիշ դեպքում ծեծում է հայ գյուղացուն, որը համարձակվել է գովել սպանված թուրքի արտաքին գեղեցկությունը:

- *Լավ գիղանցեք, թորքը հինչ էլ ինի, հային վրճնանը տակե ցրճիսըն էլ չնրճի*, - այսպես է խրատում ազգային հերոսը իր հայրենակիցներին [2(220 բ)]:

Սակայն միշտ չէ, որ արցախցին կարողացել է զինված պայքար մղել թշնամու դեմ. երբեմն նա բռնակալներին հակադրվել է իր ստեղծագործ եւ շինարար ոգով՝ ապավինելով Աստծո եւ սրբերի զորությանը: Մի ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Լենկ Թեմուրը, խոճի խայթ զգալով, թույլատրում է չկոտորել այնքան հայ, որքան կտեղավորի տեղի եկեղեցին: Մարդիկ, մտնելով եկեղեցին, գաղտնի ետնադռնով փախչում են անտառը եւ ազատվում [2(142)]: Չկարողանալով գրավել Գտիչ բերդը՝ արաբ զորավար Բուղան ավերում է հայկական սրբավայրերը: Նույն ժամանակ՝ կռվի թեժ պահին, հայերը կառուցում են նոր եկեղեցի՝ նրան տալով ***Թիժ յըճիսը*** անունը [2(133)]: Պողոսագոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները եւ փրկվում: Յետագայում, երբ խաղաղություն է տիրում, ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում՝ այն անվանելով ***Ամէնափրկիչ*** [2(141)]:

Վերոհիշյալ ազգային ավանդությունների կողքին տեղ են գտել նաեւ միջազգային որոշ ստեղծագործություններ, որոնք իրենց զուգահեռներն ու տարբերակներն ունեն մի շարք ժողովուրդների մեջ: Դրանցից Արցախում լայն տարածում ունի համաշխարհային ջրհեղեղի մասին եղած պատմությունը, որի համաձայն՝ Նոյ նահապետը, կանխազգալով զալիք մեծ ջրհեղեղը, շինում է մի տապան եւ իր ընտանիքով ու կենդանիներով տեղավորվում նրա մեջ [2(9)]: Նման բնույթ ունի նաեւ տարբեր շինվածքների փլուզումը կանխելու նպատակով շինվածքի մեջ կենդանի վիճակում մարդ թաղելու պատմությունը [2(199 բ)]:

Արցախյան առակները (***Մնննյլ***) փոքր ծավալի բարոյախոսական փոխաբերական ստեղծագործություններ են, որոնք մեծ աղերսներ ունեն ժողովրդական բանահյուսության այլ ժանրերի, ինչպես նաեւ հայ ազգագրական մյուս շրջանների համապատասխան ստեղծագործությունների հետ: Որոշներն էլ պարզապես համընկնում են նշանավոր առակագիրների, հատկապես Եզոպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակներին: Արցախի առակախոսները, սերնդեսերունդ վերապատմելով, դրանց հիման վրա ստեղծել են նորանոր տարբերակներ՝ հարմարեցնելով ժամանակաշրջանի երեւոյթներին եւ տեղական վարք ու բարքին, սոցիալական ու

քաղաքական իրադարձություններին, հասարակական փոխհարաբերություններին: Առակներում սովորաբար մարդկային բնավորության եւ հասարակական, կենցաղային արատները ներկայացվում ու ծաղրվում են կենդանիների, երբեմն՝ բույսերի գործողությամբ ու վարքագծով՝ արտահայտելով բարոյախոսական եւ խրատական որեւէ գաղափար: Նրանց մեջ գործողն ըստ էության մարդն է՝ այս կամ այն կենդանու կերպարանքով: Բազմազան են արցախյան առակներում արծածված թեմաները, գաղափարներն ու մոտիվները: Մի շարք ստեղծագործություններում ժողովուրդը մարդուն հատուկ խորամանկությունը, շողոքորթությունն ու քծնանքը ներկայացրել է աղվեսի կերպարի մեջ: Պատահական չէ, որ միջնադարում հայկական առակների ժողովածուները կոչվել են «**Աղվեսագիրք**», իսկ Ղարաբաղի բարբառում, ինչպես ընդհանուր հայերենում, աղվես բառը փոխաբերաբար նշանակում է նաեւ «**խորամանկ, շողոքորթ, նենգադավ մարդ**»: Իր բնատուր խորամանկության, շողոքորթության եւ այլ հատկանիշների շնորհիվ աղվեսին հաջողվում է խույս տալ անհաջողություններից [3(9), 3(15)], վրեժխնդիր լինել իր հանդեպ դավադրություն կազմակերպած արջին [3(31)], շահել արքայի՝ առյուծի սիրտը [3(23)]: Սակայն ոչ միշտ է դա նրան հաջողվում, եւ ի վերջո նա պարտվում է, ինչպես ժողովուրդն է ասում. «**Ժուլիճ աղվեսը ճօխտ վրէժնակ թնկնկ կըղնէ**»: «**Անգրն ա աղվեսը**» առակում խորամանկ ու երախտամոռ կենդանին փորձում է ուտել թակարդում հայտնված իր մտերիմ անգղին, սակայն վերջինս կտուցով խփում եւ հանում է նրա մի աչքը՝ մյուսն էլ թողնելով, որպեսզի դրանից հետո կարողանա ճանաչել եւ իրարից տարբերել բարեկամին ու թշնամուն, հարազատին ու օտարին [3(70)]:

Որոշ պատումներ ստեղծվել են գայլի շուրջ, որտեղ այլաբանորեն վեր են հանվում մարդուն հատուկ խարդախությունն ու երախտամոռությունը: Պիղծ՝ հարամ է գայլը, ահա թե ինչու՝ ի տարբերություն ոչխարի ցնկնելով մի քանի ձագ, նա հոտ չի կազմում [3(84)], նրա ձագի ապագա խարդախությունը գուշակում է անգամ կույր հովիվը [3(62)], իրեն մահվան ճիրաններից ազատած ագռավին վարձահատույց լինելու փոխարեն նա վերջինիս խորհուրդ է տալիս շնորհակալություն հայտնել, որ գլուխն իր երախից կենդանի է հանել [3(8)]: Որոշ ստեղծագործություններում էլ գայլը ներկայանում է խորամանկությամբ [3(47)], վախկոտությամբ [3(59)] ու սնապարծությամբ [3(66)]: Կյանքում մի անգամ իր անօրինություններով հայտնի կենդանին փորձում է լավություն անել ու բժիշկ ձեռնալով՝ փրկել էջին, բայց այս անգամ էլ ինքն է երախտամոռության զոհ դառնում եւ զոջալով արածը՝ ասում. «**Էս ինձ խըրէճ ա, ախէրամ յէս աթաղան-բարբաղան դասաբ ի, խը՛լթէս հինչ փըջի՛ց, վէր հնքի՛մ տը՛ռէ՛**» [3(30)]:

Այսպես իրենց տարբեր հատկանիշներով հանդես են գալիս նաեւ առյուծը, արջը, էջը, ձին, ուղտը, նապաստակը, արծիվը, աղավնին, սագը, շնաճանճը, օձը, կրիան, սոսենին, բոխենին եւ այլն:

Քիչ չեն այն առակները, որոնցում քննադատվում ու պախարակվում է պարծենկոտությունն ու մեծամտությունը. այսպես, նապաստակը, իմանալով, որ արջը թակարդ է ընկել եւ չի կարողանում դուրս գալ, աքացում է նրան եւ մոծակ կոչելով՝ հրամայում այլեւ իր ճանապարհը չփակել [3(43)], արջի մեծահոգության շնորհիվ արժանանալով պատվի՝ մուկը վերջինիս հրամայում է այդուհետ իրեն «աղա» կոչել [3(36)], ավանակները իրենց են արժանի համարում անտառի թագավորի տիտղոսին, քանի որ առյուծին գերազանցում են ձայնի, հասակի, ոտքերի բարձրությամբ ու աշխատասիրությամբ [3(39)], լուսն ցանկանում է գոմեշի հետ լուծ քաշել, քանի որ իրենք նույն գույնն ունեն [3(29)]: Սակայն հաճախ մեծամիտներն արժանանում են հպարտությամբ ու համեստությամբ աչքի ընկնող իրենց խոսակիցների ծաղրին. երբ օձը պարծենում է իր՝ ամեն տարի շապիկը փոխելով, համեստ ձին պատասխանում է. «**էտքան շնետ-շնետ հալավըտ փօխում ըս, ամմա մին հէտի էլ ա գիդնում չըս՝ խասայթըտ փօխես**» [3(44)], երբ ագռավը նախատում է աղավնուն ամբողջ տարվա մեջ ընդամենը երկու ձու ածելու համար, վերջինս ասում է. «**Իմ ծուվէնասս խրղըդոթունս պիրոդ դօնէգնէ յըն տնու կամ, քունան՝ կըռկըռոդ քաշէր**» [3(32)], նույն ձեռով արծիվը ծաղրում է սագին [3(53)], բոխենին՝ սոսենուն [3(82)]:

«**Վըհնըտ յորղանըտ ըգժրն մըհկնէ**», - խորհուրդ է տալիս ժողովրդական առածը, իսկ ով չի ճանաչում իր չափը, անպայման տուժում է: Նման գաղափար է արտահայտված որոշ առակներում. չհետեւելով աղվեսի խորհրդին՝ գետն անցնել կամրջով, առյուծը փորձում է այն անցնել լողալով, որի արդյունքում վիշապ ձուկը պոկում է նրա ազդրը [3(69)], շնաճանճի հանդգնությունն այն աստիճանի է հասնում՝ **աշկը ունքան էնքան ա պըցրնննում**, որ որոշում է խայթել ու սպանել առյուծին եւ դառնալ թագավոր, սակայն վերջինս կուլ է տալիս նրան [3(49)], տեսնելով մեծ ոսկոր կուլ տալու պատճառով ցավից գալարվող բագեին՝ բուն խորհուրդ է տալիս. «**էտ քըհգ խըրատ, միհէնգասս տէնը վըհնէտ չափը ճինաննչի, հանց վըսկըռ կօլ տօ, վէր վըհնավըտ վէր քըցիս**» [3(10)]:

Յուրաքանչյուրը պետք է ձգտի ընկերանալ եւ գործել իրեն համապատասխան անձի հետ, այլ կերպ ասած՝ ամեն ոք **նրան ճըպատը բիդի նրան քօլան կըտըրէ**, այլապես անհաջողությունն ու ձախողումն անխուսափելի են: Նման գաղափար է արտահայտված «**Մարթըն ա կօրեն**» առակում. աշնանացանի ժամանակ ընկերանում են մարդն ու կրիան, մարդը ցանում է արտը, իսկ ընկերոջը պատվիրում է աղբյուրից կուլայով ջուր

բերել, սակայն դանդաղաշարժ կրիան պատվերը կարողանում է կատարել միայն ամիսներ անց՝ այն էլ շտապելուց կուլան գետնին գցելով եւ ջարդելով [3(75)]: Մեկ այլ դեպքում, համաձայնության գալով, ոզնին ու կրիան ամուսնանում են, բայց չեն կարողանում գրկախառնվել, ինչին խանգարում են առաջինի ցցված փշերը եւ երկրորդի ոսկրե պատյանը [3(72)]: Որոշ ստեղծագործություններում այլաբանորեն ներկայացվում են մարդկային բնավորության այլ հատկանիշներ:

Պատվախնդրության գաղափարն է արտահայտված *«Օղտէն ջողաբը»* եւ *«Ասլանըն ա մուկըն»* առակների մեջ, որոնցից առաջինում մահամերձ ուղտը պատրաստ է ներելու իր հանդեպ տիրոջ կատարած բոլոր անարդարությունները, բացի նրանից, որ մի անգամ տերը ստորացրել է իրեն՝ սարը բարձրանալիս կապելով ավանակի հետեւից [3(14)], իսկ երկրորդում պատվախնդիր առյուծը գերադասում է մեռնել որսկանի արձակած գնդակից, քան ազատվել մկան ձեռքով [3(56)]: Մյուս ստեղծագործություններում արծածվում են ծուկության [3(4)], անճարակության [3(11)], կատարած սխալ քայլի զղջման [3(12)], ուրիշին օգնության չհասնելու հետեւանքով տուժելու [3(25)], միայն սեփական շահի համար մտածելու ու գործելու [3(67)], միաբանության [3(18)] եւ զանազան այլ գաղափարներ:

Սակայն ոչ բոլոր առակներում է մարդկային էությունը այլաբանորեն վերհանվում կենդանիների գործողությամբ ու վարքագծով: Մի շարք ստեղծագործություններում ուղղակի հանդես է գալիս մարդը՝ հիմնականում իր բացասական հատկանիշներով՝ հատկապես ազահությամբ: *«Թամաքնարը»* ստեղծագործության մեջ ազահ մարդը վազելով անցնում է երկար տարածություն, որն ըստ պայմանի իրեն պետք է պատկանի, սակայն շնչակտուր լինելով՝ չի բավարարվում այդքանով եւ վերջին շնչում աջ ձեռքը մեկնում է առաջ՝ ջանալով այդ մի թիզ հողն էլ յուրացնել [3(1)], *«Թաննարնար մարդը»* առակում, երբ Գաբրիել հրեշտակապետը, տեղի տալով հարյուրամյա ծերունու աղաչանքին ու սպառնալիքին, առաջարկում է բութ մատը դնել եզան վրա՝ դրա տակ եղած մազերի քանակով տարիների կյանք ստանալու պայմանով, մարդը պառկում է եզան վրա, իսկ ձեռքերով գրկում նրա գլուխը [3(41)], աչքածակ պառավ կինը, Աստծո ողորմածությամբ ապրելով երկար, մեռնելիս անիծում է նրան, որ թույլ չի տվել մի քանի տարի էլ ապրել ու ամուսնացնել թռռների թռռներին [3(42)]:

Ազահությանը զուգընթաց քննադատվում է ժլատությունը եւ խաբեությունը. մի դեպքում մոլլան է օրեցօր պակասեցնում էջի կերը, որի պատճառով կենդանին սատկում է [3(22)], մի այլ դեպքում տերտերներն են իրենք իրենց ժլատության ու խաբեության արդյունքում տուժում [3(3)]:

Իրականում բոլոր կենդանիներից առավել չար ու դաժան է մարդը, որի դատաստանը ի վերջո կատարվում է մահից հետո [3(79)]:

Արցախի վիպական բանահյուսության ժանրերից դեռևս լայն կենցաղավարում ունեն զվարճախոսությունները, դեռ ավելին՝ ժամանակի ընթացքում ստեղծվում են նորերը: Աչքի ընկնելով բարոյախրատական ու դաստիարակչական բնույթով, դրանք ժողովրդի կողմից սիրված երգիծական ստեղծագործություններ են, որ պատմվում են ե՛ւ տարեցների, ե՛ւ երիտասարդների, ե՛ւ պատանիների ու նույնիսկ դեռահասների կողմից: Զվարճախոսությունների թեմաները բազմազան են՝ ընդգրկելով մարդկային կյանքի տարբեր բնագավառներ՝ առօրյա զանազան հարցերից մինչև սոցիալական այլեայլ իրադարձություններ ու կենցաղային հարաբերություններ³⁹: Ընդ որում, եթե նյութերի մի մասի հերոսներն առանձնանում են սրամտությամբ, հանպատրաստից սրախոսելու արվեստով, ապա մյուսներն էլ իրականում կատակի նյութ են դառնում իրենց պարզամտության, չափից դուրս շիտակության, հոգեկան անհավասարակշիռ վիճակի, տարօրինակության, տարբեր արատների եւ այլ պատճառներով: Երգիծական գրույցներից շատերն ունեն միայն տեղական տարածվածություն. ստեղծված լինելով այս կամ այն անձի շուրջ՝ դրանք հաճախ պատմվում են տվյալ կամ հարեւան բնակավայրերում: Մի շարք պատումներ էլ ստացել են ընդհանուր արցախյան գործածություն: Վերջիններիս մեջ առանձնանում են Պըլը-Պուղու զվարճախոսությունները, որոնք տարածվել են նաեւ Արցախի սահմաններից դուրս⁴⁰: Պատահական չէ, որ այս կամ այն գյուղերում զվարճախոսներին կոչում են հենց **Պըլը-Պուղի** մականունով, իսկ **Պըլը-Պուղուն առուտօրը** (անշահավետ գործ), **Պըլը-Պուղուն դըզդանը** (ծգծգված գործ) արտահայտությունները Ղարաբաղի բարբառի կենսունակ դարձվածներից են: Մեծ զվարճախոսի անվան շուրջ ստեղծված գրույցներն այնքան են ծավալվել, որ հաճախ նրան են վերագրվում նաեւ հայտնի եւ անհայտ այլ զվարճախոսների մասին պատմվող պատումները: Իրականում հայ բանահյուսության մեջ նա ժողովրդական էպոսի հերոսներից հետո ամենից հայտնի կերպարն է⁴¹, որի մասին ստեղծվել են նաեւ գեղարվեստական գործեր, նրա անունով իրատարակվել երգիծական հանդես⁴²:

39. Վարդանյան Ա., *Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1971, № 8, էջ 92

40. Ղազիյան Ա., *Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1978, № 9, էջ 60

41. *Նույնը*, էջ 61

42. Աբելյան Ա., *Պըլը-Պուղի (Օպերետ չորս արարով)*, Նոր Նախիջեւան, 1923, Բարսեղյան Ա., *Պըլը Պուղի (Յերոսական կոմեդիա չորս գործողությամբ)*, Երեւան, 1963, Օվյան Վ., *Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց*, Ստեփանակերտ, 1993, «Պըլը-Պուղի», Ստեփանակերտ, 1991-2014

Պըլը-Պուղին արդարամիտ է ու անկեղծ, ազնիվ ու շիտակ, հնարամիտ ու սրամիտ, նաեւ խորամանկ: Մի շարք գրույցներում զվարճախոսն իր հնարամտությամբ կարողանում է օգնել իրեն դիմած մարդկանց՝ այս կամ այն հարցն արդարացի լուծելով. տեղի տալով ձիթավաճառի կնոջ թախանձանքին՝ Մելիք-Շահնազարի հրամանով տասնհինգ մարդկանց կտրած քթերի մեջ ճարելու իր ամուսնու քիթը, նա խորհուրդ է տալիս մեկմեկ հոտոտել եւ ձեթի հոտից ճանաչել [4(6)], մեկ այլ դեպքում իրեն դիմած լեզվանի կնոջը խորհուրդ է տալիս ամուսնու կողմից չծեծվելու համար նրան չհակաճառել [4(65)]:

Զվարճախոսի սրամտությունը բնատուր է, որը դրսևորվում է դեռեւս մանուկ հասակից: Զրույցներից մեկում պատմվում է այն մասին, թե ինչպես փոքրիկ Պուղին պապի հետ անտառում հանդիպում են գայլերի: Պապը թռռանը առաջարկում է շան նման հաչել, սակայն սրամիտ փոքրիկն ասում է, որ եթե ինքը հաչի, գայլերը կարծելու են, թե շան ձագ է, ուրեմն ավելի լավ է պապը հաչի, որ գայլերն իմանան, թե մեծ շուն է ու փախչեն [4(76)]:

Ընդհանրապես Պըլը-Պուղու յուրաքանչյուր խոսք, լինի հանդիմանական, խրատական, թե այլ բնույթի, ուղեկցվում է սրամտությամբ. երբ նա հասնում է իր տունը թալանած գողերի հետեւից, վերջիններիս այն հարցին, թե ուր է գնում, զվարճախոսն ասում է. **«Պա մէր տօնը քուչուցունում չը՛ք»** [4(78)], երբ հորթերից մեկը արձակվում է փախչում է, նա սկսում է ծեծել կապած մյուս հորթին՝ ասելով. **«Վէր սա պէց ընգնէ, էն մինին անա ք՛ծիւնն ա փըխչիւնն»** [4(71)], երբ դատավորը, Պուղու սրախոսությունից զգուշանալով, նրան հրավիրում է թուֆ ուտելու, զվարճախոսն ասում է. **«Զէ՛, կըռէք՛ չօնիմ, լըրիա մին ըստաքան արադ տօ՛, խըմիմ»** [4(81)], տեսնելով երեխայի փոխարեն խանձարուրի մեջ փաթաթած գողացված գառը՝ Պուղին գողացողին ասում է. **«Ղա՛զնր, տը՛ս հիշկան ա յէ՛ ք՛ը՛գ նըման, հանց ա լիհնն քըթատ վէր ընգած ինի** [4(21)]:»:

Պըլը-Պուղու սրախոսության նյութ են դառնում բոլորը՝ անկախ դիրքից, սոցիալական վիճակից, իր հետ ունեցած հարաբերությունից: Սակայն դրանց մեջ առանձնանում է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարը, որի ապարանքում որպես կատակաբան, իր կյանքի մեծ մասն անց է կացրել մեծ զվարճախոսը: Ռաժան ու հզոր է Մելիքը, բայց նա երբեք չի կարողանում սաստել Պըլը-Պուղուն եւ ամեն անգամ, փորձելով ծաղրել նրան, ինքն է պարտվում՝ դառնալով ծաղրի առարկա: Որոշ պատումներ պարզապես երկխոսություններ են Մելիքի եւ զվարճախոսի միջեւ: Այսպես, երբ Մելիքը հարցնում է, թե ինչից է, որ Պուղու գլուխն է սպիտակել, իսկ իր՝ բեղերը, վերջինս ասում է. **«Մէլիք՛ըն ապրած կէնա, էտ ընդըրանա յա,**

վեր տու ըռխավրտ ըս կօրծ ընէս, յը՛ս կըլխավրս» [4(11)], Մելիքի այն հարցին, թե որ տարիքում է մարդ *խը՛լքակադար* դառնում, կատակաբանը պատասխանում է, որ ով իր նման է, խելոք է ծնվել, ով Մելիքի նման է, հնարավոր է՝ հարյուր տարի ապրի, այդպես տհաս էլ մեռնի [4(12)], մեկ այլ դեպքում Մելիքի հարցին՝ կընդունի արդյոք դրախտը իրեն մեռնելուց հետո, պատասխանում է. «*Տըրախտը գ՛իդնս չըմ, ամմա տըժօխկը հէտատ գ՛իլլն կըքըցի»* [4(9)]: Մի շարք դեպքերում զվարճախոսը ծաղրում է Մելիք-Շահնազարի արտաքինն ու անմիտ արարքները: Պատումներից մեկում Մելիքը տասը ռուբլի է տալիս Պուղուն՝ այն պայմանով, որ նա հարսանիքի ժամանակ չծաղրի իրեն, սակայն վերջինս, տեսնելով տիրոջ կարմրատակած քիթը, չի համբերում եւ վերադարձնելով «կաշառքը»՝ բարձրաձայնում է. «*Տասսը մանէթըտ քէգ ինի, ամմա քըթէտ հնլը հնլ չի»* [4(61)], Մելիքի այն հարցին, թե ինչո՞վ են իրենք իրարից տարբերվում, Պուղին պատասխանում է, որ իրենց միջեւ մեծ տարբերություն կա. ինքը խելոք է, բայց իրեն հիմարի տեղ է դնում, մինչդեռ Մելիքը հիմար է, բայց ձգտում է խելոք ձեւանալ [4(62)]: Պըլը-Պուղու սրամտությունն ավելի անողոք է դառնում, երբ խոսք է գնում Մելիք-Շահնազարի՝ ժողովրդին ճնշելու եւ հայրենիքը դավաճանելու մասին: Նա չի խնայում Մելիքին՝ ասելով, որ աշխարհի ամենալավ բանը ոչ թե փողն է, այլ ազատ խոսքը, որ չկա նրա տանը [4(51)], մեկ ուրիշ դեպքում, երբ իշխանը խորհուրդ է տալիս քիչ մեղր ուտել, թե չէ կարող է մեռնել, զվարճախոսը պատասխանում է, որ ավելի լավ է ասեն՝ մեղր է կերել ու մահացել, քան թե ասեն՝ Ղարաբաղը վաճառել է թուրքերին, սոված մահացել [4(31)]: Սակայն Մելիքն ու Պուղին թշնամիներ չեն, ընդհակառակը, նրանք լրացնում են իրար. զվարճախոսը անչափ համարձակ է, քանի որ ունի Շահնազարի նման հզոր հովանավոր, իսկ իշխանն էլ հպարտ է, որ ունի Պուղու նման հնարագետ ու սրամիտ կատակաբան, ով ծաղրելուց բացի, հարկ եղած դեպքում կարող է պաշտպանել իրեն [4(50)]: Որոշ պատումներում Պըլը-Պուղու սրամտության հետ երեւան է գալիս նրա միամտությունը [4(29), 4(38)], որոշներում՝ խորամանկությունը [4(4), 4(5), 4(20)] եւ այլն:

Արցախում գրեթե յուրաքանչյուր գյուղ ունի իր զվարճախոսը⁴³: Դրանցից է Բուղին՝ Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղից: Ինչ խոսք, որ նա չունի Պըլը-Պուղու վառ արտահայտված հատկանիշները եւ ամենից առաջ աչքի է ընկնում իր միամտությամբ եւ ազնվությամբ: Նա հրաժարվում է համազրույցուն միս վաճառելուց, քանի որ վերջինս իր խոզերը մսամթերման է հանձնել [4(310)], հրաժարվում է թերթ բաժանորդագրվելուց, քանի

43. Ղազիյան Ա., *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-73թթ. գրառումների հիման վրա*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, № 4, էջ 238

որ ինքը թերթ չի կարդում [4(318)], հրաժարվում է բամբակաքաղին մասնակցելուց, քանի որ ինքը բամբակ չի ցանել [4(322)]: Որոշ պատումներում Բուդին համարձակ պատասխաններ է տալիս իշխանավորներին. երբ կոլտնտեսության նախագահն ասում է, որ համաձայն օրենքի՝ Բուդին իրավունք չունի երկու կով պահել, զվարճախոսն ընդդիմանում է. **«Պա վեր տու երկու կընէ՞ք ըս պահում, իրավունք օ՞նիս»** [4(321)], կամ երբ դատախազը մեղադրում է նրան, թե ինչու չի համաձայնում հովիվ դառնալ, պատասխանում է. **«Խէ տանըմ չը՞ս քու պաշտօնըտ սըվըրցընում, չըբընօթուն ըս սըվըրցընում»** [4(320)]:

Ավելի սրամիտ է նույն շրջանի ճարտար գյուղի բնակիչ Սապօժնիզ՝ Վաղօն, ով կարողանում է ցանկացած դեպքում տալ այնպիսի կտրուկ պատասխաններ, որ խոսակիցն այլևս չի հակաճառում: Մի անգամ, երբ ավտոտեսուչը մեղադրում է վարորդին՝ Վաղոյի որդուն, թե ինչու մեքենան ամրագոտիներ չունի, Վաղոն ասում է. **«Պօ՛, պա էտ հինչ գ՛իդն՞ցեր, թա վըրհա ք՛ննողմ ընք ունէն ինք՝ օսինք՛»** [4(254)], մեկ այլ դեպքում, երբ զնացքում ադրբեջանցին ու վրացին, իբր Վաղոյին ձեռ առնելու համար սկսում են վիճել՝ յուրաքանչյուրը պնդելով, թե Ղարաբաղը իրենցն է, զվարճախոսն ասում է, որ ինքը արհեստավոր է ու կծառայի ե՛ւ ադրբեջանցիներին, ե՛ւ վրացիներին, իսկ ոգետրված ուղեկիցների այն հարցին, թե ինչ արհեստավոր է նա, պատասխանում է. **«Յէս մըռալու դուրթի շինծո ում, մըհալը՛ ծըզանա, դուրթին՝ ինձննա»** [4(246)]: Դետաքրքիր են Վաղոյի եւ Արցախի հերոս, հրամանատար Ավոյի՝ Մոնթե Մելքոնյանի երկխոսությունները. Ավոյի հարցին, թե որտեղ է Վաղոյի տղան, զվարճախոսը հարցով է պատասխանում. **«Քու ապէր քու տըհըրտ գ՛նողմ ա՛»**, եւ ստանալով բացասական պատասխան՝ ասում է. **«Պա վեր չէ, յէս հինգի՞դնմ՛ տըղասս ըշտէղ ա՛»** [4(249)], կամ երբ պատերազմի թեժ պահին իմանալով, որ Վաղոն թաքուն գինի է վաճառում՝ Ավոն գալիս եւ բացում է գինու տարայի ծորանը, որ թափի գինին, Վաղոն ասում է. **«Մէր տըղէրքըն էլ ըն կիլնն պօստ, հալն յըս էլ ում կիլնն, մինակ թա էտ կըռանը կապէ՛»** [4(248)]:

Մի շարք զվարճախոսություններ ստեղծվել են Մարտակերտի շրջանի Վանք գյուղի բնակիչ Ղըլէջի Միշայի անվան շուրջ. երբ Միշան, էջի վրա նստած, գնում է Շամխոր, շամխորեցիների այն հարցին, թե որտեղացի է, պատասխանում է. **«Քըմատաղ, յէս դարաբաղէ յում, ամա տակէնըս շամխօրէցի յա՛»** [4(489)], երբ շրջկոմի քարտուղարը այցելում է Միշայի տուն, որտեղ տասներեք երեխա կար եւ աթոռ չի ճարում, որ նստի, զվարճախոսն ասում է. **«Յընգէր Բաղունց, շատ խըլըշկօտէ մի՛, տաբրէթկա չօնէմ, խօցան մինը քա՛շի տակըտ, նըստէ՛»** [4(487)], մեկ այլ դեպքում էլ, երբ Միշայի տանը հյուրընկալված Սիլվա Կապուտիկյանը բաժան է վերցնում կենաց

առաջարկելու համար, Միջան սաստում է նրան՝ ասելով. «**Յավաջ է, Սիլվա, Ղարաբաղ տրիէնց աննիթ չըկա, մէր քըշտէն վէրցակըն ա կանչում, հավը վար օգում ա կանչի, մօրթում ըն**» [4(490)]:

Ի տարբերություն նշված գվարճախոսների՝ Սարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչ Տիկօշը պարզամտությամբ ու կենցաղային տարբեր հարցերի նկատմամբ արտահայտած միամիտ վերաբերմունքով ինքն է դառնում ծիծաղի առարկա⁴⁴. Երբ մայրը կորած էշը փնտրող Տիկոշին հայտնում է, որ էշը ճարել են, նա ասում է. «**Մանա, ասա թօղ օրիշ տըհ չըբինն, մի ծծր ա մընացել, էս մի ծծրըն էլ յնշէմ, սօր կամ**» [4(464)], երբ գյուղացիները հարցնում են, թե ինչու է գլխարկը թարս դրել, Տիկոշը պատասխանում է. «**Վէջինչ, մին ա, էս ա յէտ ըմ տնննող**» [4(468)]:

Մյուս գվարճախոսներից հայտնի են Ավանքի մամին [4(123) 4(124), 4(126)], Յէղի դային [4(233-239)], Աշոտը [4(384-386)], Թեւոսը [4(402), 4(411), 4(413)], Թոնի դային [4(430-440)], Վարսէնիգ հնսին [4(502-511)] եւ ուրիշներ:

Բազմաթիվ գվարճախոսություններում ներկայացվում է բնակիչների միամտությունը. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, կյանքում առաջին անգամ լինելով Ֆիզուլի քաղաքում եւ զարմանալով նրա մեծությամբ, Հէյրան աքերը գյուղի կանանց հավաքում է գլխին եւ հավաստիացնում, որ Հիտլերի նպատակը հենց այդ քաղաքը գրավելն է [4(122)], կուսակցական օրիորդը դատավորի այն հարցին, թե ինչու է համաձայնել կենակցել կուսկազմակերպության քարտուղարի հետ, զարմացած պատասխանում է. «**Պա վէր պարթկօմէն ասածը անիմ վուչ, պա հողր ասած անիմ**» [4(211)], ի պատասխան որդու մեղադրանքի, թե ինչու է ինքն իր գերեզմանոցը փորել, ինստունչորսամյա ծերունին պատասխանում է. «**Ըսօր-էքրօծ մընըլական ում, իմ հննգիստըս տըհսնամ վէհ, յըտնան մըհնիմ**» [4(282)], միամիտ երիտասարդը իր սերը համարում է հիսուն տոկոսով ստացված, քանի որ ինքը սիրում է, իսկ աղջիկը՝ ոչ [4(377)]:

Մի շարք ստեղծագործություններում կատակի առարկա է դառնում մարդկանց շփոթմունքը. ցանկանալով սփոփել կինը մահացած եղբորը՝ Կարօ դային շփոթվում է եւ ասում. «**է, այ ախպեր, հինչ ըս գիողող, բնլքանս լնվը էտ ա**» [4(497)], շփոթված ծերունին նստում է էշի վրա եւ գնում՝ նույն էշը փնտրելու [4(103)], նկատելով, որ կինը գոմը մաքուր չի սրբել, զայրացած ամուսինն ասում է. «**Պա յըհ սիրփիմ ըստի կողգածըմը**» [4(149)], ճանապարհելով հիվանդանոց գնացող բարեկամին՝ շփոթված կինն ասում է. «**Քիննլըտ ինի, կնլըտ չինի**» [4(505)], մեկ այլ դեպքում նույն կինը թռռանն ասում է. «**Վազ տօ փըհսան կանկէ, շօնը կա**» [4(506)]:

44. Վարդանյան Ս., *Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1971, № 8, էջ 92

Որոշ պատումներ ներկայացնում են ստախոսություններ. մի գյուղացի պատմում է, թե ինչպես է Ստալինն իրեն հրավիրել Կրեմլ եւ խնդրել ամբողջ երկրում տարածելու նպատակով այժը տարեկան երեք անգամ ծնեցնելու գաղտնիքը հայտնել [4(108)], մեկը, չնայած չի մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին, պատմում է այդ պատերազմի ժամանակ գերի ընկնելու եւ իր վաղեմի ծանոթ Հիտլերին հանդիպելու մասին [4(517)], մյուսը փորձում է համոզել, որ ինքը սպանել է գայլին եւ մորթազերծ արել, բայց գայլը վերակենդանացել է ու սկսել քայլել [4(427)], մեկ ուրիշը, չկարողանալով հավատացնել համագյուղացիներին, որ իրենց տան մոտ հարյուր գայլ է տեսել, դրանց թիվն աստիճանաբար կրճատում է եւ դարձյալ հանդիպելով խոսակիցների թերահավատությանը՝ ճարահատյալ ասում է. «*Ղուզըն ասած, մինը տը՛սալ ըմ, ամմա հաստադ գ՛իդնս չըմ՝ կ՛իլ ա լմ՛լ, թա շո՛ն*» [4(146)]:

Արցախյան ժողովրդական խաղիկները հիմնականում քառատող լիրիկական երգեր են՝ հորինված հոգեկան տարբեր վիճակների եւ հասարակական բազմազան երեւույթների անմիջական ազդեցության տակ, որոնցից ամեն մեկն արտահայտում է մի ամբողջական միտք, տրամադրություն եւ ունի հանգավոր ու գեղարվեստորեն ավարտուն կառուցվածք: Դրանց մեծամասնությունը վիճակի երգեր (*ջանգ՛իլի՛նմ*) են, որոնք ներկայացնում են երիտասարդ սիրահարների ներքին ապրումները եւ սովորաբար երգվել են համբարձման տոնին՝ վիճակախաղերի ժամանակ⁴⁵.

*Ալավը տուվավ վըններէն,
Վը՛սկէ ջամը կուռներէն,
Սնհրի՛նմ մընա էն տըղան,
Վէր ինձ թօղից տըռներէն* [5(3)]:

*Սէրը ծաղէ՛ գի, վէր քաղիս,
Սէրը սը՛րմը չի, վէր վարիս,
Սէրը թնմ՛նիզ ախպի՛նր ա,
Սէրը սըրտավ բիդի սիրիս* [5(193)]:

Բազմազան են արցախյան խաղիկներում արծարծված թեմաները՝ սեր, աշխատանք, հայրենիք, բնություն, պանդխտություն, սոցիալական խնդիրներ եւ այլն: Գերազանցում են սիրո պատումները, որոնք արտահայտում են երիտասարդ աղջիկների ու տղաների, հարս ու փեսաների, երբեմն էլ՝ ամուսինների սիրո զգացմունքը՝ տարբեր նրբերանգներով: Մի շարք երգեր նվիրված են յարի գովքին, որ ասվում են աղջկա կամ տղայի կողմից: Գովվում են աղջկա չինար բոյը, ալագյոզ աչքերը, քաղցր լեզուն, շեկ ու թուխ մազերը, ծամերը, շամամ ծծերը, հագուստը, քայլվածքը, տղայի բոյն ու բուսաթը, ուժը, բեղերը, քյաքյուլը.

45. *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծափազարդությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի)*, Երեւան, 1971, էջ 438-441

**Իմ յարքս աննըման ա,
Օնքը թէվու մընան ա,
Ամմէն յէշօղ էրվում ա,
Սըբրտ բիդի, վէր տըմանա** [5(80)]:

**Ալին տըղա,ալին տըղա,
Ա՛ք՛նք՛նը դալին տըղա,
Ա՛ սէր տըված,սէր ինք՛ կալնծ,
Տու իմ հնըննց կալին տըղա** [5(5)]:

Սակավաթիվ խաղիկներում արտահայտվում է աղջկա բողոքը ժամանակի սովորությունների եւ բարքերի հանդեպ: Աղջիկներին հաճախ ամուսնացնում էին փոքր հասակում՝ արդեն տարիքն առած տղամարդու հետ՝ հաճախ հիմք ընդունելով տղայի հարուստ լինելը եւ անտեսելով նրա թերությունները: Ծնողների որոշումն օրենք է աղջիկների համար, սակայն պատահում են նաեւ համարձակները, ովքեր ընդդիմանում են այդ որոշման դեմ՝ գերադասելով աղքատ, բայց սիրած տղային.

**Բախճա-բըհար ըն կապալ,
Աղու գիհնը ըն կապալ,
Սըբրտըս էն տըղէն յըրա չի,
Զօռնավ յըրա յըն կապալ** [5(36)]:

**Անիք ա, հա մնիք ա,
էն տըղան ինձ նմսիք ա,
Տանավ-տըղավ ք՛նսիք ա,
Յինչ ա՛նիմ, թա ք՛նսիք ա** [5(30)]:

Սիրո պատումներում սիրված մոտիվներից է յարին տեսնելու, նրա մոտ լինելու, շուտափույթ ամուսնանալու, նրան ծաղիկ կամ խնձոր ուղարկելու, նրա կրծքին հանգչելու, նրա վրայի գարդը դառնալու, հանուն նրա կյանքը նվիրաբերելու ցանկության արտահայտությունը: Ներկայացվում են նաեւ սիրո վիշտն ու թախիծը, սալդաթ գրված յարի կարոտը, ամուսնության խոչընդոտները, առաջին սերը.

**Նըստիմ քարէն,
Յիշիմ յարէն,
Մաղբուն մընա էն տարէն,
Վէր բանակ տարէն իմ յարէն** [5(180)]:

**Յննդը քը՛ցէն հարսէրը,
Թմնիւզ-թնքնիւզ վարսէրը,
Մարթին մըննան հունց ընզէ՛
Ո՛ւրան առաջի սէրը** [5(123)]:

Առանձնակի ճոխությամբ են հանդես գալիս մայրական եւ որդիական սերն արտահայտող երգերը, որտեղ անփոխարինելի են որդին մոր, իսկ մայրը՝ որդու համար.

**Ղարաբաղում ախ չի կա,
Առանց բար թաղ չի կա,
Ըշտը՛դ շօռ կ՛աս, հինչ տըբսնաս,
Բալից քախճըր պէն չի կա** [5(137)]:

**Սօրը քննիլը վէրըն ա՛,
Սօրը մնիլը վէրըն ա՛,
Սօրան մնգիզ մարթ չի կա,
Սօրը մնիլը վէրըն ա՛** [5(167)]:

Բազմազան ձեւերով արտահայտված սիրո հետ ներկայացվում է գյուղական աշխատանքը՝ իր տարբեր տեսակներով, եւ դա հասկանալի է. այդ խաղիկները հիմնականում ասել են գեղջկուհիները, իսկ նրանց սի-

րածները գյուղական աշխատանքին, հատկապես երկրագործությանը նվիրված գեղջուկ երիտասարդներ են, որոնք ներկայացվում են աշխատանքի գործընթացում.

*Բաղէրումը թօթ ըս թափում,
Յէս քու թափջի ջանէտ մատաղ,
Ըրէվէն տակէն հծնծ ըս անում,
Յէս քու հրնձմծ արտէտ մատաղ* [5(39)]: *Յանդը ք'իսիմ ըրըվկալ'ին,
Լէն-բօլ վարիմ ցօրէն, կ'անրին,
Յըրսանէք'ըս փըռնիմ կալ'ին,
Ծափ-ծըծաղավ լըցնէ տարին* [5(124)]:

Մի շարք պատումներում արծարծվում է հայրենիքի թեման: Արցախցին սիրում է իր հայրենիքը, սիրում է նրա քարն ու ծառը, ջուրն ու հողը, իր մանկության վայրերը, անտառները, սարերը, աղբյուրները, այն վեր է դասում ամեն մի երկրից եւ ուր էլ լինի՝ հիշում է իր ծննդավայրը, կսկիծով ողբում նրա վիճակը:

*Յը'ս աշըղ ըմ, վարթին թաղը,
Շնք'ի, Շիրվան նան շարմաղը,
Թէհրանը ջէնյաթ էլ տը'ռնա,
Սօռանալ ջըմ Ղարաբաղը* [5(169)]: *Ճըռէք'ած գ'անքըտ հօր ա',
Խօսըմ ջըս՝ դանրդըտ խօր ա,
Էրված, տըրտակված Շուշին,
Իմ սը'րտըս խըրած թօր ա* [5(139)]:

Հայրենիքը ներկայացվում է իր բնությամբ, գեղեցկությամբ ու տարբեր բարեմասնություններով.

*Տիզնփնի պէցնիր սար ա ,
Սնն նան կ'էրանը քար ա,
Յէս մը'ռնիմ էն Տիզնփնի սարէն,
Չըրք'ըպնիլ'նիր անտառ ա* [5(216)]: *Սէր հինդէրէն արտէր ա,
Չնրք'նկալ'նիր վարթէր ա,
Ըշխըղօղէն ջանէն մատաղ,
Բաղ ու բախճա բարէր ա* [5(153)]:

Անհնար է խոսել արցախյան քնարական բանահյուսության մասին՝ առանց դիտարկելու պանդխտության թեման: Դարեր շարունակ արցախահայությունը բռնել է գաղթի եւ պանդխտության ճանապարհը, եւ եթե գաղթի հիմնական պատճառը օտար գավթիքների կողմից Արցախի նվաճումն էր, ապա պանդխտությունը հիմնականում արդյունք էր սոցիալական կարգերի հետեւանքով ստեղծված կենսական դժվար պայմանների: Ոգետրված օտար ափերում հարստանալու գաղափարով՝ արցախցի երիտասարդը թողնում է հարազատ վայրերը եւ դիմում պանդխտության: Սակայն երկար չի տեւում այդ ոգետրությունը, վրա է հասնում հիասթափությունը, եւ կործանված համարելով իր երիտասարդ կյանքը՝ նա փափագում է գոնե թաղվել հայրենի հողում՝ իր հարազատների կողքին.

*Յըղըցէք'ը քարօտ կինի,
Ղարիբը միշտ կարօտ կինի,
Վը'ր մը'ռնիմ, տարէք' Շուշի թըղը'ցէք',
Ընդը'դ ա նգիզ վանթանըս, յարըս,*

*Աշկը էն ա ջլավ մարթու յորա,
Զօրս դօլը վիրըվհորդ անօղ կինի*
[5(130)]:

*Ջրհննդանը, թա կրկուդանան քարըս,
Ընդդհ ըն թաղված հնրըս ու մարըս*
[5(206)]:

Այլ նմուշներում հերոսը պանդուխտի սիրածն է, ով մնացել է անտեր, շատացել են յարի թշնամիները, սակայն նա չի կորցնում հույսը, մերժում է բոլոր առաջարկողներին՝ երագելով այն պահը, երբ սիրածը կվերադառնա եւ իր դուռը կբախի.

*Քիսի՛, կ'ալ չըմ, կարել չըմ,
Ղնրդըս խօր ա, կարել չըմ,
Յը՛ռէ տը՛դ մին յար օնիմ,
Ուրհնշն՛ կ'ալ չըմ, կարել չըմ* [5(231)]:

*Կարունք ա կ'ամ պըպակի,
Պոն կըտինի թըռչնակի,
Յիբ կինի՛ յարըս կըկա,
Իմ կապ տօռնը կըթակի* [5(116)]:

Առավել ողբերգական է պանդուխտ որդուն տարիներ շարունակ սպասող մոր վիճակը, ով դեղնել ու հալումաշ է եղել, վառվել ու խանձվել, ինչպես հայրենի Շուշի քաղաքը, սակայն, երբ ստանում է որդու վերադարձի լուրը, աշխարհը անմիջապես փոխվում է նրա աչքերի առաջ, եւ սեւ օրերը դառնում են կարմիր՝ լցված երգ ու խաղով.

*Իմ ջլավ բալա, տօն յէ՛ք,
Ճըրմքըտ վառ ա, տօն յէ՛ք,
Իմ սը՛րտըս էրվալ, խանձվանլ,
Տը՛ռալ ա Ղալա, տօն յէ՛ք* [5(79)]:

*Իմ վնթանըս ա Ղարաբաղ,
Նախշուն սարէր, կանանչ բաղ,
Ղարիբ դուշըս տօն ա կ'ամ,
Կնրմնր օրէր, յը՛րք նան հաղ* [5(81)]:

Եվ այսպես, պանդխտության բոլոր երգերում այդ երեւույթը որակվում է որպես մեծ չարիք, որը դարեր շարունակ ուղեկցել է ողջ հայությանը, ահա թե ինչու օտար ակերում դեգերող արցախցին, գգալով մոտալուտ վախճանը, իր խորհուրդն է հղում այդ դաժան ճանապարհը դեռեւս չբռնած հայրենակիցներին.

*Վախըմ ըմ՛ շնտ մը՛ռնիմ,
Խօսկերքըս պըռատ մընա,*

*Ղարիբօթուն մի՛ք քիսիլ,
Ինձանա ծը՛գ խըրատ մընա* [5(203)]:

Որոշ խաղիկներում արծարծվել է պատերազմի թեման: Ծանր են պատերազմի թողած վերքերը, անտեր են մնացել արտն ու տունը, աղջիկներն ու կանայք, եւ հերոսուհին երագում է միմիայն խաղաղություն.

*Ախճիգ, կընէգ՛ լօխ անմարթ,
Մընաց անդար տօն նան արտ,
Օր նան քըշէր հօքսէն մաչին,
Կընանէքը՛ տըղամարթ* [5(9)]:

*Մէխկ ըն, խը՛դճ ըն բալէքը,
Ղաշանգ՛, նախշուն բալէքը,
Աշխարքըս խաղաղ ինի,
Պակաս չինի հաց նան յէրքը* [5(146)]:

Կան նաեւ խրատական եւ խոհափիլիսոփայական խաղիկներ, որտեղ ներկայացվում է աշխարհի անցողիկությունը, մարդկանց ազահոությունը, կարճամտությունը, պախարակվում անբարոյականությունը, չգրված սուրբ օրենքների ոտնահարումը:

**Ընսանէն աշկը միշտ ծակ ա,
Ամէն օր էլ տուրըթակ ա,
Էն աշխարքը պէն չի տանէլ,
Մարթը խը՛քթավ հանլն խակ ա** [5(61)]:

**Նալը քըցիմ քըթօցը,
Յէր կիսի գընգօցը,
Յը՛ս տը՛սալ չըմ, թա նի մըննէ
Մարթ ձընն քէնուն ծօցը** [5(179)]

Քնարական բանահյուսության՝ մեր կողմից գրառված մյուս ժանրերի նյութերը հիմնականում առանձին անհատների կողմից հորինված ստեղծագործություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել:

Բանահյուսության մեջ իրենց դիպուկ արտահայտությամբ առանձնանում են ասույթաբանական բանահյուսության ժանրերը:

Արցախյան առած-ասացվածքներն ուղղակի եւ փոխաբերական իմաստ ունեցող կարճ ու պատկերավոր ասույթներ ու դատողություններ են, որոնցում կյանքի տարբեր երեւոյթներ բնութագրվում են սրամտորեն ու կատարյալ ամբողջականությամբ: Դրանց մեջ արտահայտված են բազմաթիվ ու բազմաբնույթ երեւոյթներ: Առանձին խումբ են կազմում այն ստեղծագործությունները, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի արցախյան հատվածի ապրած միջավայրը, բնավորության գծերը, կենսական պայմանները, քաղաքական կյանքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Դարեր շարունակ արցախահայությունը կենաց ու մահվան պայքար է մղել օտար զավթիչների դեմ՝ հաճախ ստիպված լինելով դիմել հարկադրական տեղաշարժերի: Դրա վառ արտահայտությունն է **«Ալին քը՛ցավ, Վնլին յը՛կավ»** առածը, որի ուղղակի իմաստը արտահայտում է օտար նվաճողների՝ իրար փոխարինելը: Բազում դարերի կենսափորձով արցախցին հանգել է մի հետեւության. թշնամու բարեկամությունը կեղծ է եւ ցանկացած պահի կարող է վնասել, պետք է զգույշ լինել. **«Թօրքէն նըհը՛տ հընգըրօթուն ըրա՛, մըհակը ծը՛րքատ վեր մէլ տինիլ»**: Թշնամին անողոք է, բայց եւ վախկոտ, նրան պետք է պատժել, միայն այդ դեպքում նա կարող է հաշվի նստել քեզ հետ. **«Թօրքէն չըքերանը թակիս վէչ, աշնա չի տը՛ռնալ»**:

Սոցիալ-քաղաքական կյանքն արտացոլող առած-ասացվածքների մեջ առանձնանում են պանդխտության վերաբերյալ եղած ստեղծագործությունները, որտեղ ներկայացվում է հայրենիքից ու ընտանիքից հեռացած պանդուխտի ծանր ողբերգությունը. **«Ղարիբը օրիշին վը՛ղումը մինակ ըրտասունք կըթօղէ»**, **«Ղարիբին հացը լըղէ յա, ճնլըր՛ աղու»**, **«Ղարիբին**

հը՛տէ մին օրը մին տարէ յա», «Ղարիբին օշը միշտ դըբէտ կինի», «Ղարիբ մարթին վէզը ծօռ կինի», «Ղարիբին հմնգ՛խտը առանց քար կինի»: Սակայն, չնայած կյանքի ծանր պայմաններին, արցախցին հոռետես չէ, չկորցնելով պայծառ ապագայի հեռանկարն ու հույսը՝ նա պայքարում է իր անկախության ու ազատության համար, անդադրում աշխատում. *«Յայը ումէղավ ա ապրում», «Յայը մինչը՛վ նըղանա վէջ, յը՛տ չի տը՛ռնալ»:*

Մի շարք բանաձեւերում ներկայացվում է հայրենի բնաշխարհը՝ լեռներն ու ձորերը, գետերն ու առուները, դաշտն ու արոտը, քարն ու հողը. *«Սարէն սըվը՛ր կավը սարումը կըծընէ», «Սարերը ըրուտալին տը՛ղ ծծըրըն ըն ըրօտում», «Սարը հիշկան պէցնիր ինի, կըլխէ ծննը էնքան շատ կինի», «Յանդէրը շօռ ածած հացը քախծըր կինի», «Ըրասխէն դըրադէն վեր էշ թմվիլ տա, մօխէրը ինձանավ կըտա», «Քուռըն էլ ա մարդ իլնլ, մըհէնգ ա նըմըրդացալ», «Քուռէն դմրդը Քուռան վարար ա»:*

Հատկանշական է, որ առած-ասացվածքներում տեղ են գտել հիմնականում այն բույսերն ու կենդանիները, որոնք աճում ու ապրում են Արցախի հողում եւ արցախցու կյանքում կարեւոր դեր ունեն. *«Խաղուն վեր հըսավ, ծըմէրուկէն մըհալ քըցծղ չինիլ», «Ղարաբաղցունը օթըն ա, թօթը, թիյին կօթը», «Ճըղպօրէ ծառէն քարավ տըվօղ շատ կինի», «Արտը վեր նըմըրդօթուն անէ, կավը տօնը կըպահէ», «Էշը վեր կա, վը՛սկէ յա թըրքում», «Յը՛գևանը քաշմծը մինակ նըրմն կաշին ա գ՛նդնում», «Շօնը վեր շօն ա, նըրմն թըզնըլնտը՛ղը թմմնղ ա պահում», «Կ՛նըլը ընգավ վըխճարէն սնըրն, վա՛յ մինատար», «Օխճան էլ ըն ճար շինում»:*

Առած-ասացվածքները հստակորեն ներկայացնում են արցախցու կյանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորույթներն ու հայացքները: Դարեր շարունակ աշխատավոր գյուղացին ճնշվել ու հարստահարվել է ոչ միայն օտար զավթիչների կողմից, այլև իր ազգային տերերից՝ քաջ գիտակցելով հարուստների եւ աղքատների անհավասարությունը. *«Ապըրէլ կա՛ յը՛ղ ա, ապըրէլ էլ կա՛ լըղէ յա», «Ապըրէլ կա՛ արծաթ ա, ապըրէլ կա՛ արկաթ ա», «Ապըրէլ կա՛ մըռնէլա փիս ա», «Յարուստը ջուբէն ա թըխում, ք՛նսիբը՛ ծույնանը», «Յարուստը ք՛ըսիբին աշխադանքավը կապըրէ՛ ք՛ըսիբին մինննթու տակէ թուղէլավ, ընդըրա վիզին կօռ տինիլնլ»:*

Բազմաթիվ ստեղծագործություններում արտացոլված են կենցաղային հարաբերությունները: Հատկապես ակնառու են արյունակցական-ազգակցական եւ ընտանեկան հարաբերություններն ու դրանց հետ առնչվող երեւույթները ներկայացնող առած-ասացվածքները, որտեղ ժողովուրդը տվել է ծնողի ու զավակի, եղբոր ու քրոջ, ամուսնու ու կնոջ, հարսի ու կեսրոջ բնութագիրը՝ բացահայտելով նրանց միջեւ եղած փոխհարաբերությունը. *«Մօրը աշկէն խօխան մըճանալ չի», «Մօրը անէսկը փըռնէլ չի,*

ծրծէն կաթնէն տէմ կըղնէ», «Մօրը մին օրթանանքը օխտը վըրթըբէդու անէսկ կը քանդի», «Մօրը բախտը ըխճըկանը կ'օտկումը կիկի», «Յօրը-մօրան կըման ըշխարքումըս ամմէն հինչ կըքըթէնվա», «Յօրը-մօրը դա-դիրը չըգիդօղը Ըստուծէն դադիրը գիդմլ չի», «Ախճիգը տոնսի պատ ա», «Տըղան տանը սըթոնըն ա, ախճիգը՝ նըխշընըգմը», «Քուրըն ասում ա՝ ախպէր օնիմ, ախպէրըն ասում ա՝ քուր չօնիմ», «Ախպէրը ախպօրը մը՛ռնէլը օգիլ չի, փիս ապըրէլը կօգի», «Կընգանը պադէվը մարթը կը-պահէ, մարթինը՝ կընէգը», «Մարթինը կընէգըն ա, կընգանէնը՝ մարթը», «Յարթնը պըլօթուն ըրավ, ըսկը՛սվօրը քը՛թը դըդէցէն», «Ըսկը՛սուրը ընգուճէն մինը քառ կըպահէ» եւ այլն:

Մեծ տեղ ունեն նաեւ մարդու անձնական ու հասարակական հատկություններին, բնավորությանն ու խառնվածքին նվիրված բանաձեւերը, որոնցում ամենից առաջ վեր են հանվում մարդու դրական հատկանիշները: Ժողովուրդը խորհուրդ է տալիս գործ ունենալ բանիմաց, խելոք, անշահախնդիր մարդկանց հետ. *«Խէլոնը մարթին նըհը՛տ քար կըրէ, կիժին նըհը՛տ փըլավ մէլ օտէլ», «Խէլոնը դոնշմանը կէս պարիկամ ա»:* Այլ ստեղծագործություններում ներկայացվում են մարդու բացասական հատկությունները՝ ագահությունը, շահամոլությունը, անբարոյականությունը, գողությունը եւ այլն. *«Տանձը՝ ինձ, խընձձորը՝ ինձ, շըվթանլի վէլ ա ըշտանիըս տամ», «Մինին տօնը նի կացավ, էն մինը կըրակէն յըրա խըրաված ըրավ», «Ղըխպին օխտը լիւզի կիկի», «Կօղը ասից՝ հոնը օնէ, իմըն ա»:*

Իմաստուն ու խորն են արցախցու դատողություններն աշխատանքի ու հասարակության՝ ժողովրդի մասին: Պետք է գնահատել աշխատանքը (*«Ըշխըդանքէն կիկը գիդձղը մարթինըն էլ կըգիդմ»*), որը պահանջում է մեծ դժվարություններ (*«Աշխադանքը էն ա շանը վը՛ռումը, հու տըղա յա, կըծէ տոնս օնէ»*): Աշխատանքը ժողովրդի զբաղմունքն է, ժողովուրդն է աշխարհի բոլոր բարիքների ստեղծողը, եւ մարդը միայն հասարակության մեջ կարող է հաջողության հասնել. *«Ժըղուվութան տոնս կըվօ-դէն յա՛ վէգը կըկօտըրէ, յա՛ պօգը»:*

Մի շարք ստեղծագործություններում արտացոլված է Աստծո կերպարը: Ժողովուրդը հավատում է ամենակարողի գորությանը, ապավինում նրա արդարադատությանը, բարին ընդունելու ու չարը պատժելու հատկությանը. *«Աստուծ ընօղէն ա տամ», «Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա ա-նում», «Աստուծ հըրօտօղ կըվէն պօգէր չի տամ», «Աստուծ էրկու ծը՛րքավ ա տամ», «Աստուծ դանրղը տըվալ ա՛ դանրմանըն էլ նըհը՛տը»:* Սակայն ոչ միշտ է Աստված արդար, եւ երբեմն նա էլ է թույլ տալիս անարդարություններ. *«Աստուծ վեր Աստուծ ա, էլիա դաթումը ծօռ պէնէր ա անում», «Աստուծ լ՛ավէն տանում ա, փիսին՝ թօղում», «Աստուծ մինին յը՛ղում ա, մինին՝*

դադում»: Ահա թե ինչու արցախցին խորհուրդ է տալիս երկնային տիրոջը. **«Աստուծ, թա կարում չքս մը՛գ պահիս, քըջաց՝ մունք քը՛գ ճըղպօրու մացու նըման պահինք՛»:**

Համառ ու արդար է դարաբաղցին, կողքահաստ, խոսքը երեսին ասող, նա չի սիրում շողոքորթել, ասում է այն, ինչ մտածում է, անկախ նրանից՝ դա վիրավորակամ՛ն, թե՛ հաճելի կլինի դիմացինին. **«Ղարաբաղէն ըստըղավ-ընդըղավ չի ընգընում, խօսկը ք՛նսմն՝ յա ասում»:** Ահա թե ինչու նրա խոսքը հաճախ է համեմվում անեծքներով, օրհնանքներով եւ բարեմաղթանքներով, որոնց ամենանահին եւ տարածված ըմբռնումը դրանց գերբնական ուժի հավատն է, որի համաձայն՝ անպայման իրագործվում են դրանցում արտահայտված ցանկությունները: Այդ են վկայում առայսօր պատմվող ավանդությունների, գրույցների, հեքիաթների եւ այլ ժանրերի ստեղծագործություններում տեղ գտած դիպվածները, որոնցում առանձնապես շեշտվում է Աստծո անեծքի եւ օրհնանքի ազդեցության զորությունը: Իրականություն են դառնում նաեւ հոր, մոր, կեսուրի, հարսի, աղքատ մարդու անեծքներն ու օրհնանքները, իսկ չքեր կանանց անեծքներից զգուշանում են բոլորը. **«Սօնգարգ կընգանը անէսկը փըռնօղ կինի»:**

Անեծքները, օրհնանքներն ու բարեմաղթանքներն ամենից առաջ մե-նախոսություններ են, որոնք արտահայտվում են խոսողի կողմից, եւ որտեղ խոսակցի ներկայությունն ու խոսքը ամենեւին էլ պարտադիր չէ: Դրանց մեջ պարզապես խոսողը իր ցանկությունն է ուղղում խոսակցին՝ լավ թե վատ, բարի թե չար, եւ այդ ցանկությունը, կախված լինելով խոսողի կամքից, ի վերջո արդյունք է արտաքին որոշ դրդապատճառների: Տվյալ դեպքում խոսակիցը, նախքան անեծքի կամ օրհնանքի եկթարկվելը, խոսողի հանդեպ կատարում է որեւէ վատ կամ լավ արարք, որից ելնելով էլ՝ խոսողը նրան է ուղղում իր անեծքը կամ օրհնանքը: Կախված այն հանգամանքից, թե հոգեկան ինչպիսի գրգռվածության է հասցրել խոսողին խոսակցի արարքը, նույնքան չարությամբ կամ բարությամբ է նա արտահայտում իր անեծքներն ու օրհնանքները: Համեմատության դեպքում դժվար չէ որոշել **«Աղու օտիս»**, **«Փավուր մընաս»**, **«Աշկըտ հը՛ռա»**, **«Ապըրիս տու»**, **«Պէրանըտ քախծըր կէնա»**, **«Շուքըվէր ինիս»** եւ **«Բալատ թաղիմ»**, **«Ազկավ-ծուպավ ճինջվիք՛»**, **«Սազ՛էրըտ տըխտակէն սանդըրիմ»**, **«Ծառըտ ծաղկէ ասթխէր յօր օնէ»**, **«Օխտը հարթնավ սուփրա-սէղան նըստիս»**, **«Աստուծ քը՛գ թէվէր տա, թըռչըցընէ»** բանաձեւերի հեղինակների գրգռվածության աստիճանը: Այսպես, երբ մեկը հակաճառում է կամ ցուցաբերում իր խստասրտությունը, դիմելով նրան՝ երբեմն նույնիսկ ընկերաբար հանդիմանում են **«Հաստ կօխկըտ կըտըրվէ»**, **«Աստուծ կըտըրցընէ շան խասյաթըտ»** եւ այլ անեծքներով, որոնք կարելի է որակել նաեւ խրատական

հանդիմանություններ, մինչդեռ նենգ ու խարդախ արարքը արժանանում է բոլոր սահմաններն անցնող՝ **օխտը ըտըժանէ**, հայիոյանքների ու անեծքների, որոնց հեղինակները ամեն կերպ ձգտում են տալ արարքին համապատասխան եւ նույնիսկ գերազանցող պատասխաններ. **«Ընըճիճըճի տըճնաս»**, **«Մէյիտ յըրա պըպըլ՛պապալ՛ անիմ»**, **«Մադարըտ տափումը տիևիմ»**, **«Տըփէրան փուշի հըվաքիս»** եւ այլն: Ասել է թե՛ յուրաքանչյուր անեծք իր իմաստով պայմանավորված է անիծվողի՝ տվյալ պահի որոշակի վարքագծով, խոսքով, արարքով, վերաբերմունքով:

Ըստ էության լինելով պատժի ցանկություններ՝ անեծքները իմաստային տիպաբաժանման դեպքում վերածվում են պատժի ցանկության տեսակների, որոնք չորսն են՝ մարմնական պատիժների ցանկություն, սոցիալ-քաղաքացիական պատիժների ցանկություն, բարոյամարմնական պատիժների ցանկություն, հոգեկան պատիժների ցանկություն⁴⁶: Արցախյան անեծքներում ավելի հաճախ արտահայտվում է մարմնական պատիժների ցանկությունը: Ինչ խոսք, որ ամենախիստ պատիժը անիծվողին մահվան դատապարտելն է: Անիծողը փափագում է անիծվողի բնական մահով մեռնելը՝ **«Զօս ինիս, յէր չի կէնաս»**, սպանվելը՝ **«Պիւլլիխարավ տըճնաս»**, մանուկ կամ ծաղկուն հասակում մեռնելը՝ **«Վէչ մըժանաս, վէչ ծաղկիս»**, հարազատների մահը՝ **«Մարթըտ թաղիմ»**, **«Աճիզըտ մըճնէ»**, **«Բալատ չծրչուրանս»**: Բազմաթիվ անեծքներում արտահայտվում է անիծվողին հիվանդությամբ, մարմնական ցավերով, կուրացած, անդամալուծված, մարմնական տանջանքների եւ փորձանքների ենթարկված տեսնելու տենչը՝ **«Չանը պըկէտ վեր կ՛ա»**, **«Զուռանաս, չուլխանաս, քըռանաս»**, **«Ցանքը ջըլակիս, շէմբաշէն շօռ կ՛աս»**, **«Օխձը կըձէ ք՛ըճ»**:

Սոցիալ-քաղաքացիական անեծքներում ներկայացվում են հակառակորդի ունեզրկման եւ ծայրահեղ աղքատացման, ինչպէս նաեւ անտեր, անընտանիք, անսերունդ մնալու գաղափարները, որոնք կարելի էր նախապայմաններ են մարդկության գոյատեւման համար՝ **«Տօնըտ էրվի, պըրիշակ տըճնաս»**, **«Տանըտ խէրըն ա բարաք՛անթը կըտըրվէ»**, **«Միևըտ էրկու չըտըճնաս»**, **«Սըճրմըտ կըտըրվէ»**, **«Պէճիևքըտ կապած մընա»**, **«Օգ՛օղ տըճնաս ըղնիս տըռները, մին կուտուր հաց չի քըթէնաս»**, **«Անդար մընաս»**, **«Սըրթամըճն մընաս»**, **«Խուխու իրըճս չի տըճնաս»**:

Բարոյամարմնական պատիժներ ակնկալող անեծքների նպատակն է անիծողին ենթարկել բարոյական եւ մարմնական պատիժների: Անիծողը փափագում է տեսնել նրան աստվածային պատժի ենթարկված՝ անհիշատակ ու անմուրազ, անպատված, հարազատների հիշատակը պղծված՝

46. Հարությունյան Ա., *Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ*, Երեւան, 1975, էջ 199

«Աստուծ դուվանըտ անէ», «Յէռնայինը քը՛գ պատժի», «Աստուծ անումըտ կըտորէ», «Բէյմուրագ մընաս», «Մը՛հալըտ շըները քաշ-քաշ անին», «Մը՛վ վը՛ղէն արժան չի տը՛ռնաս», «Խազ-խայտառակ տը՛ռնաս»:

Հոգեկան պատժի անեծքները ընդգրկում են անիծվողին կամեցվող հոգեկան տանջանքների, տառապանքների ցանկություններ՝ հոգու կորստյան եւ տանջանքի, տխրության եւ վշտի, սգո եւ սգավորության՝ **«Ջըհաննամը քիսիս», «Հուքիտ ըռըխավըտ տոնս կա», «Օրախ օր չի տը՛սնաս», «Աշըղ տը՛ռնաս, ըղնիս չծլէրը», «Շուվանը ըղնէ տօնըտ»:**

Օրինանքները եւ բարեմաղթանքներն իրենց արծարծած գաղափարներով բաժանվում են երկու խմբի՝ ապահովության եւ պահպանության⁴⁷:

Առաջին խմբի օրինանքներում եւ բարեմաղթանքներում հիմնականը օրինվող անձի կամ նրա մերձավորների վիճակը մեկ այլով՝ ավելի լավով փոփոխելու ապահովության փափագն է, իսկ երկրորդ խմբի օրինանքներում՝ տվյալ վիճակի պահպանության ապահովության:

Արցախի բանահյուսության մեջ եւ՛ քանակով, եւ՛ բազմազանությամբ աչքի են ընկնում ապահովության բնածեւերը, որտեղ խոսողը խոսակցին ցանկանում է երկար ու ապահով, բարեկեցիկ կյանք, հաջողություն, հոչակ, իղծերի իրականացում, բարեհաջող ամուսնություն, երջանկություն ու սեր, ողորմածություն, հոգեկան հանգիստ, օջախի շենացում, բազմազավակ ընտանիք՝ **«Ումբուրըտ էրկան ինի», «Օը՛րքըտ սիպտակ մըրքավըտ անց կըցընիս», «Տաշտըտ միշտ լիզը ինի», «Անիս՝ օտիս, անիս վէ՛ էլիս օտիս», «Մինըտ հըզգար տը՛ռնա», «Տօնըտ շէն կէնա», «Ընըմավուր տը՛ռնաս», «Ըշտը՛ղ կօխիս՝ կընանչի», «Աստուծ մուրագըտ կըղարէ», «Պարավ կընընչկ՛մըմիւրըտ կապիս», «Մին պէրցու ծըրանաք», «Ըղօրմի քա հօր», «Աստուծ համփէրութիւն տա», «Օջաղըտ շէն կէնա», «Թուռնատար, ծուռնատար տը՛ռնաս»:**

Պահպանության օրինանքների մեջ օրինվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ունեցվածքի պահպանման գործի, չարից ու փորձանքից ազատ լինելու, Աստծո, սրբերի, Քրիստոսի, հրեշտակների հովանավորությունն վայելելու գաղափարների արտահայտումն է՝ **«Աստուծ պահէ քը՛գ», «Աստուծ պահէ մաղարըտ», «Ըստուծէն ծը՛րքը տանըտ յըրա ինի», «Շառա, փուրցանքա հը՛ռէ ինիս», «Վը՛ննըտ քարու նի չի կ՛ա», «Աստուծ էզզանան կօխկէտ ինի», «Նըհատակը դըլվումըտ ինի»:**

Հանելուկի (*պընզըլ*) ժանրը եկթադրում է ավարտուն ու պարզ բանածեւեր, կուռ, հակիրճ շարադրանք, փոքր ծավալ՝ սեղմ ձեւակերպումներով ներկայացնելով ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կացութեւնը,

47. *Նույնը*, էջ 249

աշխարհայացքը, բարոյահոգեբանական առանձնահատկությունները: Հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսեւորումներին, համախմբվում են որոշակի ոճական ձեւի մեջ, որի պարզագույն տարբերակը հարցն է, որը պահանջում է պատասխան: Արցախյան հանելուկները պահպանել են հարցադրման եղանակը, որը դրսեւորվում է մի շարք հարցական բանաձեւերի ձեւով՝ *էն հինչըն ա՛, էն հինչ պէն ա՛, էն հու վա՛* եւ այլն: Ամեն մի հանելուկ բաղկացած է հանելուկի բուն նշանակությունից եւ արտաքին պատկերից, որոնք որոշակիության իմաստով տարբերվում են իրարից, չնայած ունեն նաեւ ներքին ինչ-որ կապ: Գուշակողի խնդիրն է բացահայտել իրենից անկախ գոյություն ունեցող նմանությունները, ինչը հենց հանելուկի լուծումն է: Հանելուկային բուն նշանակության եւ արտաքին պատկերի կերպավորման ամենատարածված եղանակը այլաբանությունն է, որը Ս.Հարությունյանը բաժանել է հետեւյալ տեսակների⁴⁸.

ա) Այլաբանություն ըստ արտաքին նմանության, երբ արտաքին պատկերի եւ բուն նշանակության միջեւ նկատվում է արտաքին որեւէ ընդհանուր գիծ՝ *«Ծին քինաց, թանքը մընաց»* (գետ եւ կամուրջ): Այստեղ այդ արտաքին նմանությունը շարժման հանգամանքն է, եւ գետի հոսելու հատկանիշը փոխաբերվել է գնալու հետ.

բ) Այլաբանություն ըստ գործառական նմանողության, երբ հանելուկային եւ այլաբանական առարկաները համընկնում են որեւէ հատկությամբ, գործառությամբ, ինչպես՝ *«Ալ յը՛զնը, չալ յը՛զնը, հիշքան պէռնիմ՝ տար յը՛զնը»* (գդալ), որտեղ գդալը այլաբանվել է եզան հետ իր մի բան կրելու, տանելու հատկության պատճառով.

գ) Այլաբանություն ըստ հատկանիշների հակաբնական զուգորդման, երբ արտաքին աշխարհի առարկաների գծերն ու հատկանիշները դասավորվում են այնպես, որ այլաբանական պատկերը վեր է ածվում անիրական, արտասովոր, ոչ տրամաբանական երեւոյթի կամ հասկացողության՝ *«Մըսէ շամփուր, ըրկաթէ խըրաված»* (մատ եւ մատանի) *«Ծիք՝ ըմ տամ, ծիք՝ կըրճանում ա»* (ծխախոտ).

Սրանցից էապես տարբերվում է հանելուկների մի շարք, որտեղ բուն նշանակության եւ արտաքին պատկերի միջեւ որեւէ տարբերություն չկա, եւ հանելուկի երեւոյթն ու էությունը համընկնում են իրար: Դրանք իրենք անվանում են իրենց լուծումը. *«Կա՛ թէս, կա՛ թէս, անըմը տամ՝ գիղմնս վէչ»* (բահ, թի), *«Տիյը՛ր քաշ ա, տիվեր քաշ ա»* (ագռավ (քաշ), *«Ալագ, փալագ, անըմը տամ՝ չըգիղմնս»* (փալաս):

Ընդհանուր առմամբ, հանելուկներում առարկաների բազմակողմանի

48. Հարությունյան Ս., *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երեւան, 1965, էջ 16

բնութագրումներ չեն տրվում, եւ հաշվի է առնվում առարկայի ոչ էական, երկրորդական նշանակություն ունեցող որեւէ կողմը կամ հատկանիշը: Յենց դա է պատճառը, որ նույն առարկայի վերաբերյալ կազմվել են տարբեր հանելուկներ, որոնցից յուրաքանչյուրում հիմք է ընդունվել այս կամ այն հատկությունը. օրինակ՝ *«Մին պուլիզ՝ մաշին էրկու ջուռռա ճիւր»*, *«Յիլլծր ա, պիլլծր ա, մնգ օնէ, ծակ չօնէ»*, *«Մին տօն օնիւք՝ պատէրը արծաթ, մաշը վը՛սկէ, վեր քընդէցէ, էլ շինվիլի չի»* ստեղծագործությունները բնութագրում են ձուն, ընդ որում՝ առաջինի մեջ նկատի է առնվել սպիտակուցի եւ դեղնուցի առկայությունը, երկրորդի մեջ՝ ձվի՝ անցք չունենալը, բայց նրանից մազավորի՝ ճտի առաջանալը, երրորդի մեջ՝ ձվի կեղեւի արծաթագույն, իսկ դեղնուցի ոսկեգույն լինելու երեւոյթը: Դրան հակառակ՝ արցախցին ստեղծել է հանելուկներ, որոնք կարող են ասվել տարբեր, նույնիսկ սեռով, տեսակով իրարից հեռու առարկաների վերաբերյալ: Դրանք այնուամենայնիվ ունեն ինչ-որ ընդհանուր գիծ. *«Տիւսը՝ վը՛սկըռ, մաշը՝ մէս»* (կրիա, ընկույզ), *«Ալալա, բալալա, տար խահ ըրա, պեր կախ ըրա»* (սագ, թառ, մաղ): Երբեմն հանդիպում են նաեւ բազմակի լուծման առարկաներ ունեցողներ, ինչպես. *«Մին թումբ տը՛դ, թումբէն տակէն մին դիւզ տը՛դ, դիւզին տակէն էրկու ծառ, ծառէն տակէն էրկու գ՛օլ, գ՛օլէն տակէն էրկու նօվ, նօվէն տակէն մին ճեղաց, ճըղացէն տակէն մին թումբ»* (գլուխ, ճակատ, հոնքեր, աչքեր, քիթ, բերան, դունչ):

Բազմազան ու բազմաբնույթ է արցախյան հանելուկների թեման: Յանտելուկային առարկաների եւ բանաձեւերի մեջ արծարծվել են արցախցուն շրջապատող բուսական եւ կենդանական աշխարհը, տնտեսական զբաղմունքները, երկրային ու երկնային մարմիններն ու երեւոյթները, այն, ինչ հնարավոր է տեսնել, լսել, զգալ: Պատահական չէ, որ այս ժանրում առաջին հերթին արտացոլվել են գյուղատնտեսւոյթյան տարբեր բնագավառներ՝ կապված երկրի տնտեսական բնույթի հետ: Արցախցու համար կարեւոր բնագավառ է երկրագործությունը, որ հնուց ի վեր հանդիսացել է հիմնական զբաղմունքներից առաջնայինը: Այսպես՝ *«Մին արտ օնիմ՝ վարվէլ չի, մաշի քարէրը հըմբարվէլ չի»* (երկինք եւ աստղեր) հանելուկի մեջ ժողովուրդը երկնքի անծայրածիր լինելը կապել է մեծ հողատարածւոյթյան, իսկ աստղերի առատութունը՝ արցախյան հողերում այնքան տարածված քարերի հետ: Կամի եւ եզների նկարագրւոյթյունն է տրված *«Կըլծիւր՝ փնի, տակը՝ քար, օթ վըննանէ էրկու սար»* ստեղծագործւոյթյունում: Սովոր թիվ են կազմում հողագործական տարբեր գործիքների նվիրված հանելուկները. *«Յիլի տամ, հիլի-միլի տամ, տափէն տակավը ծիլի-միլի տամ»* (գութան), *«Մին կութանէ, հնրիւր ըռխանէ, կօտէ, կօտէ, էլիա լըղար»* (մանգաղ), *«Մին ջանավար կա՝ հիշկան ըռը՛խըն ընք տամ, քուշտանում չի»* (ջրաղաց):

Տարածված են նաեւ այգեգործությանը եւ բանջարաբուծությանը նվիրված ստեղծագործությունները, որտեղ բնութագրվում են բազմաթիվ մրգեր, պտուղներ, բանջարեղեններ, ինչպիսիք են ընկույզը, նուռը, մասուրը, մոշը, մորին, հոնը, թութը, խաղողը, դդումը, ձմերուկը, բողկը, գազարը, սոխը, եգիպտացորենը. «**Տնւար աղու, մաչը քախծըր**» (ընկույզ), «**Շծրերը հանիմ, նըստիմ լնց ինիմ**» (սոխ), «**Քօսուտ թուլա՝ լըվաշավ պէռնած**» (եգիպտացորեն), «**Հնրը՝ դիք՝ մարը՝ կը՞ռ, խօխան՝ խէլի՞նք, թօռնը՝ պը՞լ**» (խէչմար, վագ, խաղող, գինի):

Երկրագործությանը զուգընթաց արցախցին զբաղվել է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, շերամապահությամբ՝ ստեղծելով տասնյակ հանելուկներ, որտեղ որպէս հանելուկային առարկա կամ արտաքին պատկեր հանդես են գալիս եզը, կովը, գոմեշը, էշը, ոչխարը, այծը, ուղտը, հավը, շերամորդը, մեղուն. «**Սը՞վ յը՞գնը լուխը՞ցէն, խօխէնք՞ը ուրխացէն**» (բով եւ հաց), «**Ինքը՝ սարէն յըրա, սարը՝ մաշկէն յըրա**» (ուղտ), «**Սէգ մինըն օնինք՝ մըռնէյիս ինքը՞ ձորանն հանգիստը կըտըրում ա**» (շերամորդ) եւ այլն:

Որոշ պատումներում արձագանք են գտել Արցախում տարածված արհեստները: Օրինակ՝ «**Կանանչ հինիմ, սպիտակ թիլ տամ, կնրմի՞ր կօրծիմ, թօխ կըտըրիմ**» (մոշ), «**Հէնգ՝ ախպեր՝ մինը քար ա կըրում, մը՞կալը պատ ըն շարում**» (գուլպայի ճաղեր) հանելուկներից առաջինում տրվում է ոստայնագործության, իսկ երկրորդում՝ որմնադրության ընդհանուր նկարագրությունը: Առավել հաճախակի են հանդիպում կենցաղում գործածվող տարբեր առարկաներ՝ բով, մաղ, շերեփ, գդալ, ճախարակ, կուժ, ասեղ, գուլպա, սանդեղք, փափախ եւ այլն:

Հանելուկային առարկա են դարձել նաեւ երկինքը, երկնային մարմինները, բնության տարբեր երեւոյթները՝ աստղերը, ամպը, որոտը, անձրեւը, կարկուտը, կայծակը, ծիածանը, ձյունը, քամին: Առավել ընդգծվում են արեւն ու լուսինը, որոնք ներկայանում են մերթ քրոջ ու եղբոր, մերթ հով ու տաք բովի, մերթ անծայրածիր արտում վազվզող երկու կաքավների, մերթ էլ՝ պղնձե կաթսայի մեջ դրված ձվերի տեսքով. Որոշ ստեղծագործություններում հանդես են գալիս ժամանակի միավորները. «**Մին ծառ օնիմ՝ տըսնըէրկու ճըղնանէ, ամմէն ճըղնանը ձորօսսնն տիրը՞վ՝ կէսը սիպտակ, կէսը սը՞վ**» (տարի, ամիսներ, օրեր), «**Շըմը՞ռն ա՝ կարունքը պատէն, ամը՞ռն ա՝ կարունքը պատէն**» (գորգ), «**Սը՞վ կըծէգը հնրթըն ի վեր քըցիմ, քա մօր պօրտըն ի վեր քըցիմ**» (գիշեր):

Արցախում լայն տարածում ունեն մականունները (*փօթ անում*): Գյուղերի ու քաղաքների մականուններն այս կամ այն բնակավայրին եւ նրա բնակիչներին հարեան բնակավայրերի բնակիչների կողմից տրված

մականուններ են, որոնք ուղղակի կամ փոխաբերական իմաստով արտացոլում են նրանց հետ կապված զանազան հանգամանքներ: Մի շարք բանաձեւերում ներկայացվում է տվյալ բնակավայրի դիրքը. «**Ծըմակում ապրող հրկուկվը՛ցեք՛**», «**Ծծրում ապրող պիլթընը՛ցեք՛**», «**Քարում կորած ըռչծուրը՛ցեք՛**», «**Ղիքում տըռոտող խիրխընը՛ցեք՛**»: Հաղորուփ շրջանի Մելիքաշեն (Միրիշկալու) գյուղը տեղադրված է բարձունքի վրա, եւ տարվա բոլոր եղանակներին քամին անպակաս է այդ տեղանքից, ինչը եւ հիմք է հանդիսացել «**Քամե կօլ տըվօղ միրիշկուկվը՛ցեք՛**» մականվան համար: Նույն շրջանի Սարէն շէն (Շաղախ) գյուղը սարի վրա է՝ այնքան բարձր, որ գյուղացիները վերեւից են տեսնում ագռավի (քաշ) թռիչքը («**Քաշէն փօրէն հասըրաթ սարէնշինը՛ցեք՛**»), իսկ Թաղասեռ գյուղը, ընդհակառակը, տեղակայված է սարի ստորոտում (**Քաշեն մաշկէն հասըրաթ թըխսըռը՛ցեք՛**):

Առանձին խումբ են կազմում այն բանաձեւերը, որտեղ ներկայացվում է տվյալ բնակավայրում տարածված արհեստը՝ «**Ղանրգի սըղնըխը՛ցեք՛**», «**Պողոնտ կապօղ ղըվըխընը՛ցեք՛**», «**Սազ կիզօղ հիրիըրը՛ցեք՛**», տնայնագործական կամ երկրագործական զբաղմունքը՝ «**Քծմիր շիսօղ թըղըրը՛ցեք՛**», «**Թըխմըջար բիջմրօղ գիշըցեք՛**», «**Սօթալ կապօղ խըծըպըրթը՛ցեք՛**», «**Լաւ կումաշ լըծօղ սէյիշիննցեք՛**»:

Բազմաթիվ մականունների համար հիմք են հանդիսացել բնակիչների բացասական հատկանիշները. անհյուրընկալ լինելը՝ «**Հացում քօռ քըրըհունը՛ցեք՛**», «**Ղօսաղ խըռեզ տըվօղ կըսըպըռեցիք՛**», «**Հննամ օր կա, յըրընցեք, սէյիշիննցեք՛**», ժլատությունը՝ «**Ըսկըպօյ սօրշիննցեք՛**», «**Տօրէնը ծախօղ, կմրի օտօղ նուրուկըրը՛ցեք՛**», խենթությունը՝ «**Ղննի կալիսօզաշիննցեք՛**», «**Պըլ ղըզղըրը՛ցեք՛**», «**Պըրիհնըտըրի խընսկըցեք՛**», գազրախոսությունը՝ «**Լակ-լակ խօսօղ խընըբըրը՛ցեք՛**», «**Վիրնննչ տըվօղ խընըծըխը՛ցեք՛**», անլրջությունը՝ «**Սննիլզ սուսըցեք՛**», միամտությունը՝ «**Ղօնգի նինգըցեք՛**», «**Քննի խընուշինըկը՛ցեք՛**», հայիոյասիրությունը՝ «**Ուշունցատու ըշընը՛ցեք՛**», կռվարար լինելը՝ «**Կըռվարար ճիրըկուսը՛ցեք՛**» եւ այլն:

Որոշ մականուններում էլ ծաղրվում են խոսվածքային առանձնահատկությունները՝ «**Նա՛ ասօղ ղըզըխը՛ցեք՛**», «**Ռուսօվուր խօսօղ կուլըթըղեցիք՛**», այս կամ այն ուտելիքի հանդեպ հակում ունենալը՝ «**Կըլօլակ օտօղ շուշըրըցեք՛**», «**Շիլծր օտօղ չայլուկեցիք՛**», «**Պնննս օտօղ թըղըվըրթը՛ցեք՛**», «**Սատաղ օտօղ վընըրըցեք՛**», մարմնական թերությունները՝ «**Փուրընէն տըռնծզ մըղըվուզեցիք՛**», իսկ «**խօյլու մէտիշիննցեք՛**» մականունը վկայում է Ասկերանի շրջանի Մեհտիշեն գյուղի բնակիչների նախնիների՝ Պարսկաստանի Խոյի գավառից գաղթած լինելը:

Ի տարբերություն գյուղերի եւ քաղաքների մականունների՝ մարդկանց մականունները տրվում են հիմնականում ոչ թե հարեան գյուղերի բնակիչների, այլ համագյուղացիների կողմից: Հիմք ընդունելով ստեղծման հանգամանքները՝ մարդկանց մականունները պայմանականորեն կարելի է բաժանել հետեւյալ տարբեր խմբերի⁴⁹.

1. Ֆիզիկական արտաքին հատկանիշներով պայմանավորված մականուններ՝ **Բալշոյ** (մեծ), **Բեղլի** (թավ բեղեր ունեցող), **Գորդլ** (կարճահասակ), **Դոյդաղ** (նիհար եւ բարձրահասակ), **Զըռկի** (խոշորամարմին), **Ընծուղտ** (երկարավիզ), **Թնփի** (վտիտ), **Ճըկըռ** (թզուկ), **Քաջալ** (ճաղատ), **Քառ** (խուլ), **Քօռ** (կույր)։

2. Բնավորության տարբեր հատկանիշներով պայմանավորված մականուններ՝ **Աղվէս** (խորամանկ), **Բըկլիկ** (շատակեր), **Դօբրի** (բարի), **Դիլիսոբ** (տխուր), **Դըզըլ** (հիմար), **Բըստրախոթ** (արագաշարժ), **Դէմագօզ** (ամբոխավար), **Զըռըկըլծիս** (հանդուգն), **Ըսկըպօյ** (ժլատ), **Հնրիփի** (անգետ), **Մըսմըս** (մսմսացնող), **Մուրտառ** (խարդախ), **Պը՛լ** (չարածճի), **Ցակաստ** (խստաբարո), **Քածի** (վախկոտ, կնամարդի), **Քըչէղակ** (թեթեւտլիկ ու շատախոս), **Օթապարիկ** (սուտասան)։

3. Մասնագիտություններով կամ դրանց հետ կապված աշխատանքային գործիքներով եւ տարբեր առարկաներով պայմանավորված մականուններ՝ **Բայթալ** (անասնաբույժ), **Բուխալտեր** (հաշվապահ), **Դնմհւրջի** (դարբին), **Դօխտուր** (բժիշկ), **Զալօղջի** (օղի թորող), **Խուլզնրնծ** (խոզապահ), **Ծնկունջի** (ձկնորս), **Ղասաբ** (մսավաճառ), **Ղըլէջի** (կլայեկագործ), **Շօփեր** (վարորդ), **Սանախջի** (կտրվածքներ բուժող), **Վնրծնբեդ** (ուսուցիչ), **Ճուվարան** (կողով գործողին), **Նամակ** (փոստատարին), **Շարքացան** (հողագործին), **Շծջիկ** (էլեկտրացանցի աշխատողին), **Պնլնու-մինուս** (մաթեմատիկայի ուսուցչին), **Թալաշա** (պատշարին), **Շօլօբ** (թիթեղագործին), **Սատօր** (մսավաճառին), **Խալաղէլիկ** (սառնարան նորագողին), **Փօբս** (դարբենին)։

4. Այս կամ այն երկրի կամ ազգի հետ որեւէ կապ ունենալու, այդ ազգի ներկայացուցիչներին արտաքին տեսքով կամ բնավորության որեւէ գծով նմանվելու եւ այլ հանգամանքներով պայմանավորված մականուններ՝ **Ափրիկա** (թխադեմ լինելու համար), **Թօրք** (ոչ մաքրակենցաղ լինելու համար), **Յապօն** (նեղ աչքեր ունենալու համար), **Սալդավան** (կինը մոլորվացի լինելու համար), **Նէմէց** (դաժան լինելու համար), **Քնրդ** (անգութ լինելու համար), **Յէվրէյ** (ժլատ լինելու համար), **Փըրանսյա** (Ֆրանսիայում բարեկամներ ունենալու համար)։

49. Հմմտ. Ղազիյան Ա., *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973թթ. գրառումների հիման վրա*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, N 4, էջ 240, Գալստյան Ա., Թեյլան Լ., *Մականունների գործածությունը ժամանակակից հայերենում*, «Զահուկյանական ընթերցումներ», Երեւան, 2006:

5. Պատմական տարբեր դեմքերի, նշանավոր մարդկանց ստեղծագործությունների ու կինոնկարների հերոսների հետ ունեցած տարբեր կարգի նմանություններով ու դիպվածներով պայմանավորված մականուններ՝ **Բէնլադէն** (երկար միրուք ունենալու համար), **Պարբաջով** (ճաղատ գլխին խալ ունենալու համար), **Պէմօկրիտ** (գրագետ լինելու համար), **Կուտուզով** (մի աչքը կույր լինելու համար), **Մանթաշով** (ունետր լինելու համար), **Պըը-Պուդի** (զվարճախոս լինելու համար), **Պուշկին** (բանաստեղծություններ գրելու համար), **Բըրէժնէվ** (Լեոնիդ Բրեժնեվի հեռուստաճառերը մեկնաբանելու համար), **Բօբի** (հնդկական համանուն կինոհերոսուհու նման գեղեցիկ լինելու համար), **Մաուզի** (ճարպիկ լինելու համար), **Վերգօ** (վախկոտ լինելու համար), **Պէպօ** (ձկնորսությամբ զբաղվելու համար), **Պիքօր** (խեղճ լինելու համար)։

6. Անունների աղավաղումներով, կրճատ արտասանությամբ կամ վերջնամասնիկների հավելումով կազմված մականուններ՝ **Աբի** (Աբրիկ), **Ազծկ** (Ազնիկ), **Ավիս** (Ավետիս), **Ծանի** (Աստվածատուր), **Ծանիկ** (Արծովիկ), **Մասի** (Մարտիկ), **Սութծ** (Մխիթար), **Տիլօշ** (Տիգրան), **Սօջի** (Սերգեյ), **Քանի** (Քնարիկ)։

7. Զանազան այլ հանգամանքներով եւ դիպվածներով պայմանավորված մականուններ՝ **Լըսիր** (որեւէ բան պատմելիս անընդհատ խոսակցին հորդորում էր լսել), **Յէս** (միշտ գովում էր իրեն), **Յէրէսուկորը՛ք** (պատերազմի ժամանակ՝ որպէս հրամանատար, այդ ծածկանունը ունենալու համար), **Յօպ** (որեւէ բան անելիս շարունակ արտասանում էր այդ բառը), **Փանման** (ոչ տեղացի՝ եկվոր, լինելու համար), **Պայօղի** (բոլոր տղամարդկանց այդպէս էր դիմում), **Ջանէն մատաղ** (հաճախ էր խոսքը ընդմիջում այդ կապակցությամբ), **Չօրէնց** (տունը կառուցել էր ձորի պռնկին)։

Բազմաթիվ մականուններ էլ պայմանավորված չեն որեւէ հանգամանքով եւ որեւէ իմաստ չեն արտահայտում՝ **Ազմօ**, **Բալլար**, **Պարաջիդ**, **Պօմալ**, **Խըստան**, **Ճուխտուրուրու**, **Ճիմպուլ**, **Սօպուր**, **Փաղասուխտա** եւ այլն։

Ասույթաբանական բանահյուսության ժանրերից են նաեւ շուտասելուկները եւ հանգախաղերը, որոնք սովորաբար մանկական եւ պատանեկան կատակային ասույթներ են։

Շուտասելուկները կազմված են նույն հնչյուններով սկսվող կամ նույնահունչ բառերից։ Խոսակիցը, փորձելով արագ կրկնել խոսողի առաջարկածը, հաճախ շփոթվում եւ աղավաղում է այն։ Օրինակ, փոխանակ ասելու՝ «**Ծնկունը քրցիմ, ծնկունը կօլ տամ, մուկունը քրցիմ, ծնկունը կօլ տամ**», ասում է՝ «**Ծնկունը քրցիմ, ծնկունը կօլ տամ, մուկունը քրցիմ, մուկունը կօլ տամ**», ինչը շրջապատում ծիծաղ է առաջացնում։

Հանգախաղերը հիմնականում երկխոսություններ են. մեկն արտասանում է որեւէ բառ կամ բառակապակցություն, իսկ մյուսը ձգտում է տալ սրամիտ ու ծիծաղաշարժ հանգավորված պատասխան, ինչպես՝ **«Տանձի, Կըլծխըտ տակէն խընծ'ըմանծ'ի»**, **«Փնբան ածիմ պըտերավը, Օխծը կօլ տաս ճուտերավը»** եւ այլն:

Սրանցով չեն սպառվում Արցախի բանահյուսության ժանրերն ու այդ ժանրերի ստեղծագործություններում արծարծված թեմաներն ու հանգամանքները: Իրականում դրանք բազմաթիվ են ու բազմազան: Սակայն ամենակույ ժամանակն իր բացասական ազդեցությունն է ունեցել նաեւ այս բնագավառում, եւ աստիճանաբար պատմության գիրկն են նետվում ժողովրդական բանահյուսության գոհարները, ինչն ավելի հրատապ է դարձնում դրանց հավաքագրումը եւ հրատարակումը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Ս., *Ժողովրդական խաղիկներ, Երեւան, 1940, 584 էջ*
(Բաղկացած է «Ներածությունից» (էջ 7-107), «Առաջաբանից» (էջ 109-119) եւ բուն ժողովածուից (էջ 121-582): «Ներածության» մեջ քննության են առնվում հայկական ժողովրդական խաղիկների եւ նրանց տարատեսակների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, նրանցում արծարծված թեմաները, խաղերի հորինվածքի, տաղաչափության, աղճատումների ու փոփոխությունների, զարգացման, խաղերից երգերի առաջացման եւ այլ հարցեր: «Առաջաբանում» ներկայացվում են ժողովածուի կազմման հանգամանքները, կառուցվածքը եւ աղբյուրները, տեղեկություններ են հաղորդվում Կոմիտասի ունեցած մասնակցության մասին: Բուն ժողովածուն ընդգրկում է հեղինակի ու Կոմիտասի գրառած եւ տպագիր տարբեր աղբյուրներից հավաքած 3433 խաղիկ՝ իրենց տարբերակներով, որոնց շարքում տեղ են գտել նաեւ Արցախից գրառված նմուշներ: Դրանք հիմնականում Արամ Դադյանի՝ 1903թ. եւ նրա եղբոր՝ Նշանավոր ժողովրդագետ Խաչիկ Դադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաեւ Դիգակի ու Խաչենի գյուղերից Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի գիտական տառադարձությամբ) գրառած ժողովրդական վիճակի երգերն են (229 միավոր), որ Ա. Դադյանը «**Վարանդայի բանաւոր գրականութիւնից**» վերնագրով տպագրել է «Ազգագրական հանդեսի» XVII - XIX գրքերում):

2. Աբրահամյան Յ., *Քերթ, Երեւան, 2010, 176 էջ*
(Արխիվային վավերագրերի, մատենագիտական աղբյուրների եւ այլ նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը ներկայացնում է Մարտունու շրջանի Քերթ գյուղի պատմությունը, մշակութային կյանքը, կենցաղն ու սովորությունները, տեղանունների բացատրություններ, հուշեր, լուսանկարներ եւ: Առանձին ենթաբաժնում ներառված են գրական հայերենով գրառված՝ գյուղացիների հետ տեղի ունեցած զվարճալի պատմություններ՝ զվարճախոսություններ (էջ 131-148):

3. Ադելա (Սարգսյան Ա.), *Սըրերորս լիզն ա, լափու վա տամ, Ստեփանակերտ, 2003 64 էջ*

(Յեղինակի՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրած բանաստեղծությունների ու քառյակների ժողովածու: Դրանց մեծ մասը գրված է բանահյուսական եւ ազգագրական մոտիվներով):

4. Աթայան Ա., *Ազգային բանարվեստի նոր հիշատակարան, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ 1, էջ 10-11:*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «**Արցախի բանահյուսությունը**» (Երեւան, 2015, 748 էջ) ժողովածուի մասին: Ներկայացվում են ժողովածուի արժանիքները՝ վիպական, քնարական եւ ասույթաբանական տարբեր ժանրերի բազմաթիվ նմուշների ընդգրկում եւ նպատակային դասակարգում, բարբառային տառադարձության խիստ պահպանում, ընդարձակ առաջաբանում անդրադարձ Արցախի բանահյուսության գրառման եւ ուսումնասիրության պատմությանը, առանձին ժանրերի գիտական վերլուծություններ, Ղարաբաղի բարբառի համակողմանի ուսումնասիրություն, ժողովածուի վերջում ծանոթագրությունների, բառարանի, անձնանունների, տեղանունների ու մատենագիտական ցանկերի տեղադրում եւ: Գրախոսությունը տպագրվել է նաեւ «**Լուսարար**» /Ստեփանակերտ, 05.04.2016, թիվ 8-9 (437-438)/ թերթում):

5. Աթայան Ա., **Արցախի բանահյուսության հինգ նշխարները**, «Մերոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2013, N 1, էջ 172-180

(Քննության են առնվում բանահավաք Լ. Չարությունյանի «**Նշխարներ Արցախի բանահյուսության**»՝ հինգ հատորներից (Երեւան, 1991, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, 2004, երրորդ գիրք, Ստեփանակերտ, 2007, չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009, հիգերորդ գիրք, Ստեփանակերտ, 2011) կազմված ժողովածուում ընդգրկված բանահյուսական նյութերի (հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, զրույցներ, առած-ասացվածքներ, խաղիկներ եւն) ժանրային առանձնահատկությունները, դրանց վերաբերյալ առաջաբաններում բանահավաքի արտահայտած տեսակետները: Բարձր գնահատելով Լ. Չարությունյանի բանահավաքչական գործունեությունը՝ հողվածագիրը արժեւորում է նաեւ հատորներում տեղ գտած ազգագրական նյութերն ու բարբառային բառերի եւ դարձվածների բառարանները):

6. Աթայան Ա., **Բանահյուսությունը դաս ու դպրոց**, «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն. Մերոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 2017) հողվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2017, էջ 247-254

(Շեշտելով ժողովրդական բանահյուսության դերը երեխաների դաստիարակության գործում՝ հողվածագիրը հանգամանորեն անդրադառնում է բանահավաք Լ. Չարությունյանի «**Նշխարներ Արցախի բանահյուսության**»՝ հինգ հատորներից կազմված ծողվածուում ընդգրկված տարբեր ժանրերի ստեղծագործություններին, հատկապես՝ օրորոցային երգերին, խաղերին, մտային հետաքրքրաշարժ վարժանքներին, հանգախաղերին, խրախճանականներին, շուտասելուկներին, մանկական երգերին, հանելուկներին, առած-ասացվածքներին, առակներին, ավանդություններին,

գրույցներին, հեքիաթներին են՝ նշելով, որ դրանք անգնահատելի դեր ունեն մեր բանարվեստի պատմության մեջ եւ արժեքավոր նյութեր են նաեւ մանկական գրականության ու մանկական ընթերցանության համար: Զողվածը՝ **«Մանկական գրականության բանահյուսական ժանրերը Լ. Զարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքերում»** վերնագրով, տպագրվել է նաեւ «ԱրՊՀ. Հայագիտական ուսումնասիրություններ» /Ստեփանակերտ, 2016, էջ 152-164/ հանդեսում):

7. Աթայան Ա., **Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները Լ. Զարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուներում**, «ԱրՊՀ. Հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2014, էջ 150-165

(Արժեւորելով Լ. Զարությունյանի դերը Արցախի բանահյուսության գրառման եւ ուսումնասիրության պատմության մեջ ու նրա «Նշխարներ Արցախի բանահյուսության»՝ հինգ հատորներից կազմված ծողվածուն համարելով հայ բանահյուսության ամենանշանակալից հուշարձաններից մեկը՝ հեղինակը հանգամանորեն քնության է առնում դրանցում ընդգրկված մանրապատում ստեղծագործություններն ու բանաձեւումները՝ առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները, կենացները, մաղթանքները, սպառնալիքները, երդումները, ցանկությունները, դարձվածները, ծիսական արտահայտությունները, շուտասելուկները, սուրասելուկները, հանգախաղերը, հանելուկները, խաղիկները են):

8. Աթայան Ա., **Լ. Զարությունյանի «Նշխարներ..»- ի հեքիաթային աշխարհը**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2016, էջ 261-269

(Արցախի բանահյուսության գրառման պատմության մեջ անգնահատելի համարելով բանահավաք Լ. Զարությունյանի ներդրումը՝ հողվածագիրը քնության է առնում նրա «Նշխարներ Արցախի բանահյուսության»՝ հինգ հատորներից կազմված ծողվածունում տեղ գտած հեքիաթները, հանգամանորեն անդրադառնում դրանց տեսակներին, որպես սկիզբ, միջանկյալ եւ վերջաբան գործածված բանաձեւներին, ժանրային եւ կառուցվածքային առանձնահատկություններին, կերպարներին, արծարծված թեմաներին՝ կատարելով անհրաժեշտ մեջբերումներ: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաեւ դրանց ճանաչողական եւ դաստիարակչական նշանակությանը):

9. Աթայան Ռ., **Ղարաբաղյան հորովելները Կոմիտասի գրառումներում**, «Սովետական Հայաստան», Երեւան, 1988, N7, էջ 29-30

(Տեղեկություններ են տրվում Կոմիտասի գրառումներում առկա արցախյան հորովելների մասին: Առանձնակի ուշադրություն է դարձվում Վարանդայից գրառված «Ձիգ տու, քաշի» ու Ջրաբերդից գրառված «Հրեն,

հրեն թումբումը» հորովելներին ու դրանց տարբերակներին, ներկայացվում է որոշ հատվածների նոտագրությունը: Վերջում նշվում է, որ խոսքային բանահյուսության համեմատությամբ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդական երաժշտությունը դեռ շատ քիչ է հավաքված եւ դեռ շատ անելիք կա, որպեսզի այն երեւան բերվի գոնե իր համեմատական լրիվությամբ: Այս թեմային հեղինակն անդրադարձել է նաեւ իր *«Спасем от забывания народные песни Арцаха» /«Советский Карабах», Степанакерт, 1991, 12 апреля/* հոդվածում՝ կոչ անելով հավաքել եւ կորստից փրկել Արցախի ժողովրդական երգերը):

10. Ալեքսանյան Ն., **Հայացք ի ներս, Ստեփանակերտ, 2012, 208 էջ**

(Հեղինակի ստեղծագործությունների ու տարբեր մտավորականների հետ վարած հարցազրույցների ժողովածու: *«Ավանդապատումներ»* բաժնում (էջ 193-205) ընդգրկված են Արցախի տարբեր բնակավայրերի (հիմնականում՝ Մարտակերտի շրջանի) սրբավայրերի, աղբյուրների, հանդամասերի եւն շուրջ ստեղծված ավանդություններ, որ գրական հայերենով գրառել ու մշակել է հեղինակը: Բաժինն ունի նաեւ գծանկարազարդումներ (*նկարիչ՝ Ն. Մանուկյան*):

11. Ահյան Ս., **Ծիծաղի հարյուր ակնթարթ, Ստեփանակերտ, 1995, 54 էջ**

(Ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով գրառած եւ մշակած անեկդոտներ, զվարճապատումներ, սրախոսություններ, որոնց շարքում կան Արցախյան պատերազմի թեմայով մի շարք զվարճախոսություններ: Ժողովածուն ունի նաեւ նկարազարդումներ (*նկարիչ՝ Լ. Քոչարյան*):

12. Աղաջանյան Ս., **Հաթերք. Պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Ստեփանակերտ, 2012, 688 էջ**

(Ներկայացվում են Մարտակերտի շրջանի պատմական Հաթերք գյուղի պատմությունը, նրա տնտեսությունը, կրթական, մշակութային, առողջապահական օջախները, բնակչության շարժը, խոսվածքը, նիստն ու կացը, սովորույթները, ծեսերը, տոները եւն: Առանձին ենթաբաժիններում հեղինակն ընդգրկել է գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառի Հաթերքի խոսվածքով (տառադարձության խախտումներով) իր գրառած մի շարք հավատալիքներ, պաշտամունքի ձեւեր, ավանդություններ, մոզական հնարներ եւն (էջ 551-562), հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, օրհնանքներ, անեծքներ, աղոթքներ, ծաղր ու հեզանքներ (էջ 563-570), հաթերքցիների մասին երգիծական զրույցներ, ասույթներ, զվարճախոսություններ, առանձին մարդկանց սրախոսություններ (էջ 570-602):

13. Այվազյան Գ., **Ղարաբաղի հեքիաթները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1967, 22 մարտի**

(Գրախոսություն «*Հայ ժողովրդական հեքիաթներ*» մատենաշարի 5-րդ հատորի մասին: Արժեւորվում է ժողովածուն, որում ընդգրկված բոլոր նյութերը շուրջ 30 տարիների ընթացքում գրառել եւ տպագրության է պատրաստել բանահավաք Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը):

14. Առաքելյան Մ., ***Ժողովրդական բանահյուսության դաստիարակչական նշանակությունը***, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1970, 1 օգոստոսի

(Արցախի բնակավայրերից գրառված բանահյուսական տարբեր ժանրերի որոշ նյութերում արծարծված հայրենասիրության, մարդասիրության, ազնվության, աշխատասիրության, խելամտության եւ այլ գաղափարների ընդգծմամբ հեղինակը արժեւորում է ժողովրդական բանահյուսության դաստիարակչական նշանակությունը):

15. Առաքելյան Մ., ***Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը***, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1987, 30 սեպտեմբերի

(Ներկայացվում է Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի (հեքիաթներ, առակներ, ավանդություններ, զրույցներ, վիճակի երգեր, առածասացվածքներ եւն) ընդհանուր նկարագիրը: Առանձնակի ուշադրություն է դարձվում հեքիաթների եւ ավանդությունների ժանրային եւ իմաստային որոշ առանձնահատկությունների եւ գրառման պատմությանը: Հոդվածը տպագրվել է Նաեւ ռուսերենով «*Фольклор Нагорного Карабаха*» /«*Советский Карабах*», Степанакерт, 1987, 6 октября/):

16. Առաքելյան Մ., ***Լեռնային Ղարաբաղի ջանգլուումները***, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 7 հունվարի

(Ներկայացվում են արցախյան ժողովրդական վիճակի երգերի՝ ջանգլուումների ժանրային եւ իմաստային յուրահատկությունները, նրանցում արծարծված թեմաները: Առանձնակի ուշադրություն է դարձվում Նաեւ դրանց գրառման եւ հրատարակման պատմությանը, բերվում են բնագրային օրինակներ):

17. Առաքելյան Մ., ***Հայտնաբերել եւ գրի առնել ժողովրդական ավանդությունները***, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 28 հունվարի

(Կարեւորելով Արցախի ժողովրդական ավանդություններն ու ավանդագրույցները, որոնցում դրսեւորվում են ժողովրդի ստեղծագործական վառ երեւակայությունն ու պատկերավոր մտածողությունը, եւ հաճախ կարելու տեղեկություններ են պահպանվում պատմական նշանավոր դեպքերի ու դեմքերի, կենցաղի ու բարքերի եւն մասին՝ հեղինակը կոչ է անում հավաքել դրանք, քանի դեռ լիովին չեն մոռացվել):

18. Առաքելյան Մ., **Մեր երախտավորները**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 17 հունիսի

(Արժեւորվում է Արցախի բանահյուսության գրառման գործում Առաքել եւ Գրիգոր Բահաթրյանների, Մակար Բարխուդարյանի, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի, Սարգիս Իսրայելյանի, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի, Սամվել Ղուկասյանի, Մաքսիմ Մխիթարյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Լեւոն Յարութիւնյանի եւ այլ երախտավորների դերը, համառոտ տեղեկություններ են հաղորդվում նրանց բանահավաքչական գործունեության մասին):

19. Առաքելյան Մ., **Օսմանյան արշավանքների արձագանքները Լեռնային Ղարաբաղի ավանդություններում**, «Յնագիտության եւ ազգագրության ինստիտուտի 1974-1975 թթ. ազգագրական-բանահյուսական դաշտային աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ, դեկտեմբերի 23-24, 1976», Երեւան, 1976, էջ 18-19

(Արժեւորվում են օսմանյան արշավանքների դեմ ուղղված Ղարաբաղի մելիքության շրջանի ժողովրդաագատագրական պայքարն արտացոլող ավանդությունները, որոնք օգնում են պարզելու դեպքերի, իրադարձությունների, դեմքերի, տեղանունների հետ կապված տարբեր հարցեր):

20. Ավագյան Ս., **Արցախի ժողովրդական բանահյուսությունը**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 28 հունվարի

(Յամառոտ անդրադառնալով Արցախի բանահյուսության գրառման պատմությանը՝ հեղինակն առանձնակի ուշադրության է արժանացնում Մ. Առաքելյանի եւ Ռ. Ղահրամանյանի կազմած «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությանից» /Երեւան, 1978/ եւ Ս. Գրիգորյան-Սպանդարյանի կազմած «Յայ ժողովրդական հեքիաթներ» /հ.Վ, Երեւան, 1966/ ու «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» /Երեւան, 1971/ ժողովածուներին՝ արժեւորելով դրանք):

21. Ավագյան Ս., **Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1972, 30 ապրիլի

(Գրախոսություն Մ. Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը», (Երեւան, 1971, 478 էջ) ժողովածուի մասին: Ներկայացվում են ժողովածուի արժանիքները՝ բազմաժանր (ժողովրդական խաղիկներ՝ ջանգլույմներ, հեքիաթներ, ավանդություններ, հեքիաթհանելուկներ, երգիծական զրույցներ, զվարճապախոսություններ եւ) նյութի, ընդարձակ ծանոթագրությունների, բարբառային բառարանի ընդգրկում, Ղարաբաղի բարբառի յուրահատկությունների պահպանում, տվյալ ժամանակահատվածի տնտեսական եւ հոգեւոր կյանքի մակարդակի մասին տեղեկություններ եւն: Գրախոսությունը տպագրվել է նաեւ «Գրական թերթ» /Երեւան, 1972, 5 մայիսի/ թերթում):

22. Ավետիսյան Ն., *Իմ Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 2002, 36 էջ*

(Յեղիևակը ներկայացնում է Արցախի նշանավոր գվարճախոս Պըլը Պուղու անվան շուրջ ստեղծված բանահյուսական մի շարք նյութերի իր մշակումները: Ժողովածուում տեղ են գտել նաեւ հեղինակի ստեղծած պատումները, որոնց գլխավոր հերոսը դարձյալ Պուղին է: Ընդհանուր առմամբ ընդգրկված է 34 պատում՝ գրական հայերենով, իսկ առանձին դեպքերում (հատկապես՝ հերոսների խոսքը)՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով): Որոշ նմուշներ ուղեկցվում են երգիծական գծանկարներով (*Նկարիչ՝ Ս. Առստամյան*):

23. Բալայան Զ., *Բանագիտական արժեքավոր ուսումնասիրություն, «ԱրՊՅ. Հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2015, էջ 173-185:*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «*Արցախյան ավանդություններ*» (*Ստեփանակերտ, 2007, 112 էջ*) ժողովածուի մասին: Ներկայացվում են ժողովածուի արժանիքները՝ Ղարաբաղի բարբառի 80 խոսվածքներով գրառված 266 ավանդության եւ ավանդագրույցի ընդգրկում՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը գրավոր ներկայացվում է առաջին անգամ, բոլոր նմուշների դասդասում ըստ տիպերի (ստուգաբանական, բացատրական, վարքաբանական) եւ թեմաների, ներածական մասում արցախյան ավանդությունների ժանրային եւ իմաստային յուրահատկությունների վերլուծություն, ընթերցողին օգնելու նպատակով գրական հայերենում բացակայող եւ Ղարաբաղի բարբառին բնորոշ հնչյունների վերաբերյալ մեկնաբանություններ, բանասացների կենսագրական տվյալներն արտացոլող ծանոթագրությունների կցում են: Գրախոսությունը առավել ամփոփ տպագրվել է նաեւ «*Լուսարար*» /*Ստեփանակերտ, 15.03.2008, թիվ 5(167), էջ 8/* թերթում):

24. Բալյան Ս., *Կարդա, չես փոշմանի, «Լուսարար», Ստեփանակերտ, 31.12.2015 թ., N 36 (429):*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «*Արցախյան գվարճախոսություններ*» (*Ստեփանակերտ, 2014, 172 էջ*) ժողովածուի մասին: Գրախոսն արժեւորում է ժողովածուն՝ այն համարելով իր տեսակի մեջ առաջինը: Առանձնապես շեշտվում են ընդգրկված նյութերի քանակը (շուրջ 600 միավոր), դրանց դաստիարակչական նշանակությունը, ոչ միայն Ղարաբաղի բարբառի, այլեւ յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների պահպանումը են: Մեջբերվում են նաեւ որոշ նմուշներ):

25. Բաղդասարյան Է., *Արցախյան բանահյուսական արվեստի գնահատության փորձ, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1993, N2, էջ 187-192*

(Ներկայացվում են արցախյան հեքիաթների եւ ավանդությունների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները: Քննության առ-

նելով դրանցից որոշների սյուժեն եւ կատարելով մեջբերումներ՝ հեղինակը ուշադրություն է դարձնում ժողովրդական այդ ստեղծագործություններում արծարծված թեմաներին ու երեւոյթներին (կենցաղ, սովորություններ, աշխատանք, հայրենիքի պաշտպանություն, մարդկային բազմատեսակ հարաբերություններ, պատմական ու կրոնական իրողություններ, պատմական դեմքերի, դեպքերի նկարագրություններ եւն), առանձնակի անդրադառնում դրանց դաստիարակչական նշանակությանը: Անդրադարձ է կատարվում նաեւ այդ ժանրերի նյութերի գեղարվեստական արժանիքներին ու պատկերավորման միջոցներին):

26. Բաղդասարյան Է., **Էթնոմանկավարժության գաղափարները արցախահայ բանահյուսության մեջ**, «Կանթեղ», Երեւան, 2007, N2, էջ 227-233

(Արտահայտելով այն տեսակետը, որ դաստիարակության ազգային հայեցակարգ ստեղծելիս պետք է մեծ նշանակություն տրվի նաեւ էթնոմանկավարժության ուսումնասիրման հարցերին, եւ ազգային դպրոցի նոր հայեցակարգը պետք է հիմնվի մեր ժողովրդի հարուստ պատմության, այդ թվում՝ ժողովրդական բանահյուսության պատշաճ գնահատման վրա՝ հողվածագիրը ներկայացնում է Արցախի բազմաժանր բանահյուսության մեջ արտացոլված էթնոմանկավարժության գաղափարները՝ միաժամանակ շեշտելով, որ Արցախի բանահյուսությունը, դարերի ընթացքում իր վրա կրելով սոցիալ-պատմական իրադարձությունների եւ ազգային հոգեբանության խոր դրոշմը, ոչ միայն ձեռք է բերել հարուստ ճանաչողական նշանակություն, իմաստուն կենսափիլիսոփայություն, այլեւ նրանում արտացոլված շատ գաղափարներ հարստացրել են հայ դասական մանկավարժության գանձարանը եւ կարելոր են նոր ու հաջորդ սերունդների դաստիարակության համար: Զոդվածը՝ «**Արցախյան բանահյուսության դաստիարակչական առանձնահատկությունները**» վերնագրով, տպագրվել է նաեւ «Մեսրոպ Մաշտոց համասարան. Լրատու» / Ստեփանակերտ, 2007, N 2, էջ 227-234/ հանդեսում:

27. Բաղդասարյան Է., **Յամամարդկային արժեքներն արցախյան ժողովրդական բանահյուսության մեջ**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ1, էջ 250-256

(Արցախյան բանահյուսությունը համարելով բարոյական եւ գեղագիտական արժեքների շտեմարան՝ հեղինակն անդրադառնում է տարբեր ժանրերի ժողովրդական ստեղծագործություններում նկարագրված արցախցու հոգեբանական կերտվածքին, աշխարհընկալմանը, մարդու եւ մարդկային հարաբերությունների հումանիստական գաղափարներին: Զեքիաթներից, խաղիկներից եւ այլ ժանրերի նյութերից կատարված մեջբերումներով հաստատելով դրանցում արտահայտված վեհ գաղափարները, բարոյական հատկանիշները, մարդասիրությունը, ազնվությունը,

աշխատասիրությունը, հայրենասիրությունը, խաղաղասիրությունը եւն՝ հողվածագիրը փորձում է ցույց տալ, որ արցախի բանահյուսությունն ունի ոչ միայն ազգային, այլեւ համամարդկային նշանակություն, որտեղ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ժողովրդական մանկավարժության գաղափարները: Թեմային հողինակն անդրադարձել է նաեւ «**Հայրենասիրության գաղափարը արցախահայ բանահյուսության մեջ**» հողվածում /«Արցախ», Ստեփանակերտ, 1991, N3, էջ76-78/):

28. Բաղդասարյան Է., Սարգսյան Ե., **Արցախի ժողովրդական հեքիաթների ճանաչողական-դաստիարակչական արժեքը**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ1, էջ 243-249

(Անդրդառնալով Արցախի բանահյուսության գրառման եւ ուսումնասիրության պատմությանը եւ բանահյուսության նշանակությանը կրթա-դաստիարակչական գործում՝ հեղինակը քննության է առնում արցախյան տարբեր հեքիաթներում ներկայացված թեմաները: Փորձ է արվում վեր հանել դրանց ճանաչողական, բարոյախրատական, դաստիարակչական արժեքը՝ ցույց տալով, որ ժողովուրդը հեքիաթների միջոցով դարեր շարունակ մատաղ սերնդի մեջ դաստիարակել է հայրենասիրություն, մարդասիրություն, գթասրտություն, ազնվություն, աշխատասիրություն, խիզախություն, դժվարությունները հաղթահարելու կամք եւն՝ միաժամանակ խարազանելով ծուլությունը, վախկոտությունը, չարությունը, շահամոլությունը):

29. Բաղդասարյան Ս., **Խճանկար ծիծաղի եւ մտքի սալիկներով**, Ստեփանակերտ, 2006, 232 էջ

(Իրապատում, շրջիկ, դպրոցական հումորների, ժողովրդական գրույցների, հանելուկների ժողովածու: Առաջին գլխում՝ «Իրապատումներ» (էջ 7-136), ընդգրկված են Ստեփանակերտ քաղաքի եւ Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի, Հաղրուօթի շրջանների տարբեր բնակավայրերի բանասացներից հեղինակի՝ հիմնականում գրական հայերենով (որոշ դեպքերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած գլարճախոսությունների եւ այլ գրույցների մշակումներ (ընդամենը՝ 372 պատում):

30. Բաղդյան Բ., **Նա ոգեղեն արցախցի էր**, «Ստեփանակերտ», Ստեփանակերտ, 2001, 10 ապրիլի

(Սկզբում որոշ տեղեկություններ հայտնելով Ստեփանակերտ քաղաքում մեծ հեղինակություն վայելող կատակաբան Արտեմ Հարությունյանի (Արտեմ քեռի) մասին՝ հեղինակը ներկայացնում է նրա անվան հետ կապված գրական հայերենով գրառված չորս գլարճախոսություն):

31. Բարխուդարեանց Մ. (Ուստա Գէորգ Բարխուտարեանց), **Բարոյական առածներ**, Թիֆլիս, 1898, 52 էջ

(Ղարաբաղի բարբառով (հիմնականում գրականացված) գրառված ասույթաբանական բանահյուսական նյութերի ժողովածու: Հիմնականում ընդգրկում է առած-ասացվածքներ: Բացի նրանից, որ դրանք իրենց մեջ մեծ թվով դարձվածներ են պարունակում, «*Այլաբանական իմաստներ*» բաժինը իրականում դարձվածների հավաքածու է: Մակար Բարխուդարյանը հեղինակ է նաեւ պատմահնագիտական նշանավոր «*Արցախ*» /*Բագու, 1895/* ու «*Աղուանից երկիր եւ դրացիք /հ. Ա-Բ, Թիֆլիս, 1893/* աշխատությունների, որոնցում ընդգրկված են մեծ թվով ավանդություններ, եւ Ղարաբաղի բարբառով (հիմնականում գրականացված) գրած գեղարվեստական ստեղծագործությունների՝ «*Միրզա եւ Աննա*» /*Զմյուռնիա, 1876/*, «*Արագը տարին կտարի*» /*Շուշի, 1883/*, «*Չորանն ու նշանածը*» /*Թիֆլիս, 1896/*):

32. Բարխուդարեանց Ա., *Պըլը - Պուղի, Թիֆլիս, 1883, 190 էջ*

(Ներածական մասում՝ «*Յառաջաբան*» (էջ Գ-ԻԳ), համառոտ տեղեկություններ են տրվում 18-րդ դարի Արցախի նշանավոր գվարճախոս Պըլը-Պուղու կենսագրության ու ժողովածուի նյութերի հավաքման մասին, առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկություններ, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում հոլովման ու խոնարհման հարացույցներին: Բուն ժողովածուն (էջ 2-169) ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ) ծերունիներից գրառած՝ Պըլը-Պուղու անվան շուրջ ստեղծված 189 գվարճախոսություն: Ժողովածուին կցված է նաեւ Ղարաբաղի բարբառին հատուկ բառերի բացատրական բառարան (էջ 171-190):

33. *Բաքվի հայոց բանահյուսությունը (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը), Երեւան, 2004, 380 էջ*

(«*Ներածություն*» բաժնում (էջ 5-29) ներկայացվում են Բաքվում հայերի հաստատման պատմությունը, տեղեկություններ նրանց հոգեւոր եւ նյութական արժեքների վերաբերյալ, քննության են առնվում բանահյուսական նյութերի ժանրային առանձնահատկությունները, ժամանակի եւ տարածության մեջ նրանց կրած տարաբնույթ ձեւափոխություններն ու ավանդապահության մակարդակը: Բուն ժողովածուի (էջ 30-311) առանձին ենթաբաժիններում ընդգրկված են հեքիաթներ (41 միավոր), ավանդություններ (10 միավոր), հանդատեղերի, աղբյուրների, ջրաղացների եւ սրբավայրերի անուններ (50 միավոր), սնահավատական գրույցներ եւ հավատալիքներ (20 միավոր), երգիծական, կենցաղային եւ կենդանական գրույցներ (157 միավոր), հուշապատումներ (39 միավոր), առած-ասացվածքներ (36 միավոր), օրհնանք-բարեմաղթանքներ եւ աղերսանքներ (30 միավոր), անեծքներ (31 միավոր), հանելուկներ (14 միավոր), խաղիկներ

(32 միավոր), երգեր (16 միավոր), շուտասելուկներ (3 միավոր), հանգավոր ասելուկներ (8 միավոր), բարքեր եւ վարքի կանոններ (8 միավոր), մանկական խաղեր (4 միավոր), աշուղական երգեր (6 միավոր), հիշատակի, խրատի խոսքեր եւ քառյակներ (8 միավոր), որոնց մեծ մասը Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) հեղինակները, ինչպես նաեւ Բ. Ղազիյանը եւ այլ բանահավաքներ գրառել են բաքվաբնակ ու բաքվից բռնագաղթված արցախցիներից: Ժողովածուն ունի նաեւ բարբառային բառերի ու դարձվածների բառարան (էջ 312-318), կյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 319-367), ռուսերեն (էջ 368) եւ անգլերեն (էջ 369-370) լեզուներով ամփոփումներ):

34. Բեգլարյան Յ., *Արցախ-Նամե, գիրք չորրորդ, Ստեփանակերտ, 2005, 648 էջ*

(Յեղինակային հոդվածների, էսսեների, ակնարկների ժողովածու: «Տոհեր Պըլը-Պուղու դիվանից» բաժնում (էջ 547-642) ընդգրկված են հեղինակի՝ գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած եւ մշակված՝ արցախցի նշանավոր առակախոսի անվան հետ կապված զվարճախոսություններ, ինչպես նաեւ արցախյան հանելուկներ, խաղիկներ, ավանդություններ, հավատալիքներ, գուշակումներ, նախապաշարմունքներ, ակնարկներ Պըլը-Պուղու ու բանահավաքներ Գարեգին Սրվանձոյանցի եւ Մակար Բարխուդարյանի մասին):

35. Բեգլարյան Յ., *Արցախ-Նամե, գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, 2007, 640 էջ*

(Յեղինակի՝ տարբեր տարիների գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած եւ մշակված բանահյուսական (առավել՝ երգիծական) կյութերի ժողովածու: Առանձին բաժիններով ներկայացվում են ակնարկ Պըլը-Պուղու կյանքի եւ գործունեության մասին, նրա անվան հետ կապված հարյուրավոր զվարճախոսություններ, արցախյան խաղիկներ, երգեր, ուտեստների մասին ակնարկներ, հավատալիքներ, գուշակումներ, նախապաշարմունքներ, հանելուկներ, անեծքներ, ասացվածքներ, դարձվածներ, բարբառային բառերի բառարան):

36. Բեգլարյան Յ., *Կատակում է Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 1998, 240 էջ*

(Բաղկացած է ներածական մասից՝ «Յեղինակի խոսքը» (էջ 5-10), եւ բուն ժողովածուից: Ներածական մասում անդրադարձ է կատարվում արցախցի մեծ առակախոսի կերպարին, նրա շուրջ ստեղծված բանահյուսական կյութերի հավաքման պատմությանը, ժողովածուի կառուցվածքին: Բուն ժողովածուն ընդգրկում է հեղինակի կողմից շուրջ 30 տարիների ընթացքում բազմաթիվ բանասացներից հիմնականում գրական հայե-

րենով (Ղարաբաղի բարբառի բառերի եւ արտահայտությունների գործածությամբ) Պլըր Պուդու մասին գրառած եւ մշակած զվարճախոսությունները (334 միավոր): Որոշ պատումներ նկարագարված են (*Նկարիչ՝ Ա. Ղուկասյան*):

37. Գաբրիելյան Գ., *Ղարաբաղի հորովել, Ստեփանակերտ, 2003, 144 էջ*
(Հեղինակի ստեղծած երգերի ժողովածու: Առաջին բաժնում՝ «Արցախական» (էջ 7-36), ընդգրկված են արցախյան բանահյուսական մոտիվներով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրված «Ղարաբաղի հորովել», «Կալին երգը», «Ճըղացեն երգը», «Ըրկանքեն երգը», «Խընեցուն երգը», «Ուրուրուցեն երգը», «Այանեն երգը», «Հացթուփ կընգանը երգը», «Հընգերեն երգը», «Ըխպիրին ապծիգը», «Այան ու ախծիգը», «Օյորեն խնձորին», «Ճախարակի երգը», «Որբեւայրու երգը», «Ղարաբաղյան խաղեր» երգերի տեքստերն ու նոտագրությունները):

38. Գալստյան Ա., *Հաղթանակ, Ստեփանակերտ, 2000, 252 էջ*
(Գրքում ներկայացված են Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի պատմության, հայտնի տոհմերի, տեղանունների, Նոր Նորագյուղի կառուցման, նրա «Հաղթանակ» կոլտնտեսության զարգացման, վերջինիս մեջ միավորված Սարդարաշեն, Ռեւ, Ղշլաղ գյուղերի, տարբեր բնակիչների եւն մասին ակնարկներ, տեղեկություններ, նկարագրություններ, վերլուծություններ, հուշեր, լուսանկարներ եւ: Առանձին ենթաբաժիններում հեղինակն ընդգրկել է գրական հայերենով ու տեղական խոսվածքով (տառադարձության խախտումներով) իր գրառած՝ մի շարք մարդկանց ու գյուղերի մականուններ (էջ 221-224) եւ գյուղացիների հետ տեղի ունեցած զվարճալի պատմություններ՝ զվարճախոսություններ (էջ 225-239):

39. Գրիգորյան Գ., *Սոխրաթաղյան ժպիտներ, Ստեփանակերտ, 1998, 44 էջ*

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի հայրենի՝ Սարտակերտի շրջանի Սոխրաթաղ գյուղի բնակիչների հետ կապված իրական դեպքերի նկարագրություններ՝ զվարճախոսություններ, անեկդոտներ, սրամիտ զրույցներ (ընդամենը՝ 112 միավոր): Նյութերը գրառված են գրական հայերենով, որոշ դեպքերում (հատկապես՝ հերոսների խոսքը) տեղական խոսվածքով (տառադարձության մասնակի խախտումներով): Որոշ նմուշներ ուղեկցվում են երգիծական գծանկարներով (*Նկարիչ՝ Ա. Գրիգորյան*):

40. Գրիգորյան Լ., *Արցունք եւ ժպիտ, Ստեփանակերտ, 2003, 64 էջ*
(Ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով գրառած եւ մշակած զվարճախոսություններ (181 պատում), որոնք հիմնականում Արցախյան շարժման ակտիվիստների, մտավորականների, դպրոցականների, զինվորականների հետ կապված դեպքեր են):

41. Գրիգորյան Լ., **Շուշին՝ ժողովրդական խաղիկներում**, «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, հունիս, 2000թ.

(Հեղինակը քննության է առնում Շուշի քաղաքին սվիրված արցախյան ժողովրդական խաղիկները, վերհանում դրանցում արտահայտված գաղափարները՝ համապատասխանաբար մեջբերելով բնագրային օրինակներ):

42. Գրիգորյան-Սպանդարյան Մ., **Ղարաբաղի հեքիաթները**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 31 օգոստոսի

(Հեքիաթները համարելով Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության ամենազարգացած ու ամենատարածված տեսակը, որոնք իրենց մեջ պարունակում են ժողովրդի տնտեսական ու սոցիալական վիճակը, նրա զարգացումը, նիստն ու կացը, սովորությունները, հեղինակն անդրադառնում է արցախյան հրաշապատում եւ իրապատում հեքիաթների ժանրային, իմաստային ու լեզվական առանձնահատկություններին, նրանցում արտահայտված գաղափարներին, դեպքերին ու կերպարներին):

43. Գրիգորյան-Սպանդարյան Մ., **Ղարաբաղի ջանգյուլումները**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 6 մայիսի

(Ներկայացվում են արցախյան ջանգյուլումների՝ ժողովրդական տաղիկների իմաստային որոշ առանձնահատկություններ, տեղեկություններ են տրվում Համբարձման եւ Վարդավառի տոների ժամանակ դրանք երգելու հանգամանքների մասին):

44. Գեւորգյան Թ., **Վարդուտ գավառի բառ ու բանը. Կազմող՝ պ.գ.թ. Կիմ Ղահրամանյան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 278 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 2011, N3, էջ 254-255**

(Գրախոսություն: Արժեւորվում է ժողովածուն, որում ընդգրկված են պատմական Վարդուտ գավառից (Գյուլիստան, Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջան) բռնազաղթված հայերից Կ. Ղահրամանյանի գրառած բանահյուսական նյութերը, ինչպես նաեւ առաջաբան, ծանոթագրություններ, բառարան: Գրախոսը նշում է նաեւ, որ լեզվամշակութային նոր միջավայրում կորստյան վտանգի տակ են պատմական Վարդուտ գավառում ստեղծված այդ արժեքները, որոնք հավաքելով ու հրատարակելով՝ հեղինակը հույս ունի կորստից փրկելու դրանք):

45. Ռադեան Ա., **Վարանդայի բանաւոր գրականութիւնից**, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89

(Ներկայացվում են հեղինակի՝ 1903թ. եւ նրա եղբոր՝ Նշանավոր ժողովրդագետ Խ. Ռադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաեւ Ռիզակի ու Խաչենի գյուղերից Ղարաբաղի բարբառով գրառած (տվյալ ժամանակաշրջանի գիտական տառադարձությամբ) ժողովրդական վիճակի երգեր՝ ջանգյուլումներ: Առաջին մասի ներածականում՝ «Երկու խոսք» (էջ

37-40), տեղեկություններ են տրվում նյութերի գրառման հանգամանքների մասին, լուրջ դիտարկումներ են արվում Ղարաբաղի բարբառի որոշ օրինաչափությունների, ինչպես նաև բարբառային տառադարձության վերաբերյալ: Բուն ժողովածուն ընդգրկում է 229 ջանգյուլում (մի քանիսի համար նշված են նաև տարբերակները՝ տարբերվող տողերի ներկայացմամբ): Դրանք գերազանցապես սիրո եւ պանդխտության երգեր են: Կան նաև այլ բնույթի ջանգյուլումներ, որոնցում ներկայացվում են հայրենի բնաշխարհը, գյուղական աշխատանքը, աշխարհի անցողիկությունը, մարդկային վեհ եւ ստոր արարքները են: Ժողովածուում գործածված դժվարհասկանալի գրեթե բոլոր (հիմնականում՝ բարբառային եւ փոխառյալ) բառերը համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով):

46. Դադեան Խ., *Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից*, «Արարատ», Ս. Էջմիածին, 1895, N12, էջ 469-471

(Ընդգրկում է Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի գիտական տառադարձությամբ) հեղինակի գրառած՝ Վարանդա գավառի Ավետարանոց (1 միավոր) եւ Ճարտար (1 միավոր), Խաչենի գավառի Առաջածոր (1 միավոր) եւ Դիզակի գավառի Հադրուֆ (1 միավոր) գյուղերի շրջակայքում ժամանակին տարածված արցախյան ժողովրդական ջրօրհնյաց երգեր, ինչպես նաև Դիզակի գավառում տարածված հայատառ թուրքերեն նմանատիպ մեկ նմուշ: Ըստ հեղինակի՝ վերջում թողած ծանոթագրության՝ նման երգերն այնքան շատ են ու բազմազան, որ եթե յուրաքանչյուր գյուղի տարբերակները հավաքվեն, հնարավոր կլինի հատորներ կազմել: Նյութը վերահրատարակվել է Խաչիկ Ծ. Վարդապետ Դատյանի «*Հողվածների ժողովածու*» /Ս. Էջմիածին, 2007/ գրքում (էջ 115-122):

47. Դավթյան Բ., *Ղարաբաղյան զվարճախոսություններ*, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1970, 4 հոկտեմբերի

(Հեղինակը ներկայացնում է իր՝ գրական հայերենով գրառած 11 զվարճախոսություն, որոնք հիմնականում կապված են Հադրուֆի շրջանի Արփազյաղուկ գյուղի բնակիչ Բենիկի անվան հետ):

48. Դավթյան Կ., *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Երեւան, 1966, 508 էջ

(Ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գործող բոլոր բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների՝ լեզվաբանական աշխարհագրության մեթոդով կատարված հանգամանալից քննությունը: Աշխատության չորրորդ՝ «*Բարբառային խմբավորումներ եւ նմուշներ*» բաժնի (էջ 236-296) երկրորդ՝ «*Նմուշներ*» ենթաբաժնում բերվում են Ղարաբաղի տարածքի 40 գյուղերի խոսվածքներով գրառված նմուշներ, որոնցից որոշները բանահյուսական նյութեր են):

49. Թագակցյան Զ., *Արցախյան հռոտվելներն ու դրանց տեղը հայոց երկրագործի աշխատանքային երգերի համակարգում*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջագային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երեւան, 2006, էջ 179-181

(Տեղեկություններ են տրվում Արցախից տարբեր ժամանակներում հավաքված հորովելների մասին, որոնցից 7-ը գրառվել է Կոմիտասի, իսկ 7-ը՝ այլոց կողմից: Ժողովրդական այդ երգերը բաժանելով երեք խմբի՝ եռալար առանցքով փռյուզիական ձայնակարգում շարադրված, քառալար առանցքով հարմոնիկ ձայնակարգում շարադրված, եռալար-հնգալար առանցքով հարմոնիկ ձայնակարգում շարադրված, հեղինակը ներկայացնում է դրանց եւ հայ ազգագրական այլ շրջաններից գրառված հորովելների համեմատական քննությունը):

50. Իսրայելյան Ս., *Ղարաբաղի գվարճախոս Պըլը Պուղին*, Երեւան, 1956, 86 էջ

(Բաղկացած է ներածական մասից՝ «Ղարաբաղի գվարճախոս Պըլը Պուղին» (էջ 3-4) եւ բուն ժողովածուից: Ներածական մասում համառոտ տեղեկություններ են տրվում Պըլը Պուղու մասին: Բուն ժողովածուն ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով գրառած եւ մշակած 40 գվարճախոսություն, որոնք հյուսված են արցախցի մեծ առակախոսի անվան շուրջ: Ժողովածուն ունի բարձրորակ նկարագրողումներ, որ կատարել է Ս. Իսրայելյանի որդին՝ նշանավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Ժողովածուն Վ. Հակոբյանի առաջաբանով վերահրատարակվել է /Երեւան, 2008, 96 էջ/):

51. Լալայան Ե., *Վարանդա. Նյութեր ապագայ ուսումնասիրության համար*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, *Վարանդա, նշանատր տօներ*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349

(Ազգագրական ժողովածու: Հիմնականում իր, ինչպես նաեւ իր հանձնարարությամբ այլ մտավորականների՝ պատմական Վարանդա գավառի բնակավայրերից հավաքած ու տպագիր նյութերի ուսումնասիրության արդյունքում հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է գավառի պատմական անցյալը, տեղագրությունը, վիճակագրական տեղեկություններ, տնտեսական դրությունը, արհեստները, գործարանային արդյունաբերությունը, լուսավորությունը, ընտանեկան բարքը, ընտանեկան կյանքը, հավատքը, նշանավոր տոները: Ազգագրականի հետ միասին տարբեր բաժիններում ընդգրկված են գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված տարբեր ժանրերի բանահյուսական նմուշներ՝ բարեմադրություններ ու օրհնանքներ, անեծքներ, այլ բանաձեւումներ, չափածո ստեղծագործություններ, աղոթքներ եւն:

«Հավատք» բաժնում ընդգրկված նյութերում ներկայացված են տարբեր լեռների, քարերի ու ժայռերի, կրակի, ջրի, ծառերի, թռչունների ու կենդանիների, երկնային լուսատուների ու տարբեր երեւոյթների, քաջքերի ու սատանաների, տարբեր սրբավայրերի մասին եղած տասնյակ ավանդություններ: Ժողովածուն Ա. Նազիկյանի խմբագրությամբ վերահրատարակվել է հետագայում՝ ընդգրկվելով Ե. Լալայանի «**Երկեր**» /հատոր 2, *Երեւան, 1988/* հինգհատորյակում):

52. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Ս. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971, 478 էջ

(Ժողովածուն ընդգրկում է բանասեր-բանահավաք Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի՝ 1920-60-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի տասնյակ բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառած բանահյուսական բազմաժանր նյութեր: Համառոտ առաջաբանում՝ «*Ինստիտուտի կողմից*» (էջ 5-6), տեղեկություններ են տրվում հեղինակի բանահավաքչական գործունեության եւ ժողովածուի կառուցվածքի մասին: Բուն ժողովածուն կազմված է տարբեր բաժիններից, որտեղ ընդգրկված են համապատասխան ժանրերի բնօրինակները՝ վիճակի (ջանգյուլումի) երգեր (1804 միավոր), հեքիաթներ եւ ավանդություններ (28 միավոր), հեքիաթ-հանելուկներ (9 միավոր), ավանդություններ (7 միավոր), երգիծական գրույցներ (31 միավոր), Պըլը-Պուղու գվարճախոսություններից (24 միավոր), հանելուկներ (243 միավոր), շուտասելուկներ (13 միավոր), առած-ասացվածքներ (461 միավոր), օրհնանքներ (26 միավոր), անեծքներ (53 միավոր), աղոթքներ (2 միավոր), ոճավոր ծաղր ու հեգնանք (62 միավոր): Ժողովածուին կցված են «*Ծանոթագրություններ*» (էջ 437-454), որտեղ տրվում են նյութերի գրառման, հարակից այլ հանգամանքների ու բանասացների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ՝ ջանգյուլումի երգերի հետ կապված համբարձման ծիսական տոնակատարության նկարագրությունը, եւ «*Բառարան*» (455-474), որտեղ ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածական բազմաթիվ բառերի ու դարձվածների բացատրություններ:

53. Լեռնեց Ա., Ղարաբաղյան գվարճախոսություններ, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1971, 31 հունվարի

(Ներկայացվում է արցախցի առակախոս Սահակի անվան հետ կապված 10 գվարճախոսություն, որ գրական հայերենով գրառել է հեղինակը):

54. Խանգաղյան Ս., Պըլը Պուղի, Երեւան, 1988, 304 էջ

(Ժողովածուն բաղկացած է 10 բաժնից՝ «*Պուղին երեխա, պատանի: Նրա ամուսնանալը եւ այլ բաներ*» (էջ 5-19), «*Պուղին իջխանական պալատում պաշտոն է ստանում*» (էջ 20-68), «*Պուղին տանը՝ կին, երեխաներ,*

մոտիկ ազգականներ» (էջ 69-100), *«Պուղին արդարադատ, ճշմարտախոս, նաեւ դժվարին ու հիմար վիճակներում»* (էջ 101-133), *«Պըլը Պուղին փրկարար, խորհրդատու, երբեմն միամիտ»* (էջ 134-151), *«Իշխանավոր, ժլատ, կաշառակեր, գռվող, ստախոս, գող»* (էջ 152-192), *«Պըլը Պուղին՝ դատավոր»* (էջ 193-210), *«Պըլը Պուղին դիվանագետ, պատվիրակ, դեսպան»* (էջ 211-226), *«Յոգեւոր գործիչներ, ծիծաղաշարժ դեպքեր»* (էջ 227-269), *«Խելոք, անխելք, սնապարծ Պուղին նեղ վիճակներում»* (էջ 270-294), որտեղ հեղինակն ընդգրկել է Արցախի նշանավոր առակախոս Պըլը Պուղու մասին իր եւ այլ բանահավաքների՝ տարբեր տարիների Զանգեզուրի եւ Արցախի բնակավայրերից հավաքած նյութերի գրական մշակումները (238 զվարճապատում): Որոշ պատումներ նկարագարոված են (*Նկարիչ՝ Յ. Մխիթարյան*):

55. Խանյան Ա., *Յայագիտական խոշոր ներդրում, «Կրթություն», Երեւան, 27.04.2016, թիվ 18-19 (731-732)*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի *«Արցախի բանահյուսությունը»* (Երեւան, 2015, 748 էջ) ժողովածուի մասին: Ներկայացվում են ժողովածուի արժանիքները՝ բազմաթիվ գյուղերից գրառված վիպական, քնարական եւ ասույթաբանական տարբեր ժանրերի 8078 բնագրի ընդգրկում, ժողովածուում գործածված դժվար հասկանալի՝ հիմնականում բարբառային եւ փոխառյալ բառերի բացատրական բառարանի, անձնանունների, տեղանունների, մատենագիտական ցանկերի, ծանոթագրությունների կցում, բարբառային տառադարձության խիստ պահպանում, ընդարձակ ներածականում Արցախի բանահյուսության ուսումնասիրության պատմության, բանահյուսական նյութերի ժանրային եւ իմաստային յուրահատկությունների ներկայացում են):

56. Խաչատրյան Ա., *Մեր գյուղի մարդիկ (Արցախյան զվարճապատումներ), Երեւան, 2014, 72 էջ*

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի հայրենի՝ Ասկերանի շրջանի Խանապատ գյուղում տարածված զվարճապատումներ, զրույցներ, սրախոսություններ (ընդամենը՝ 119 միավոր): Բոլոր հերոսները բանահավաքի համագյուղացիներն են: Նյութերը գրառված են տեղական խոսվածքով (տառադարձության մասնակի խախտումներով): Առաջաբանում՝ *«Երկու խոսք»* (էջ 3), տրվում են ժողովածուի ստեղծման շարժառիթները):

57. Խեմչյան Է., *Արմեն Սարգսյան, Արցախի բանահյուսությունը, «Էջմիածին»», Ս. Էջմիածին, 2016, օգոստոս, էջ 167-170*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի *«Արցախի բանահյուսությունը»* (Երեւան, 2015, 748 էջ) ժողովածուի մասին: Գրախոսը, արժեւորելով ժողովածուն, այն համարում է մեծ ներդրում հայ բանագիտության պատմության մեջ, որը կարելի է ոչ միայն Արցախի, այլեւ համահայկական

բանահյուսական ժառանգության վերջին 30 տարվա ընթացքը, ժանրային պատկերը եւ դրսեւորման ձեւերը պատկերացնելու ու գնահատելու համար: Որպէս արժանիքներ են նշվում ժողովածուի ծավալը, ընդգրկված բնագրերի լեզուն՝ յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների պահպանմամբ, վիպական, քնարական, ասույթաբանական բազմաժանր նյութերի քանակը, որակն ու տարածման լայն շրջանակները, համապատասխան ծանոթագրությունների, անձնանունների, տեղանունների, մատենագիտական ցանկերի կցումը, հանգամանալից ներածությունը՝ իր բանագիտական ու բարբառագիտական վերլուծություններով, արժեքավոր ու հարուստ բարբառային բառարանն ու ծանրակշիռ գիտական ապարատը եւն):

58. Խեմճյան Է., *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչեւ XX դարի 60-ական թվականները)*, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երեւան, 2007, էջ 335-351

(Ընդօժեւելով Շուշի քաղաքի ուրույն դերը համընդհանուր համահայկական առաջադիմական շարժման մեջ եւ նկարագրելով քաղաքի կրթական եւ մշակութային կյանքը՝ հեղինակը հանգամանորէն ներկայացնում է 19-րդ դարի 60-ական թվականներից մինչեւ 20-րդ դարի 60-ական թվականներն այնտեղ իրականացված ժողովրդագիտական նյութերի գրառման գործընթացը: Առանձին ենթաբաժիններով քննության են առնվում Բահաթյան եղբայրների, Մ. Բարխուդարյանի, Խ. Դադյանի, Ա. Դադյանի, Կ. Մելիք-Շահնազարյանի, Ե. Լալայանի, Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ազգագրական-բանահյուսական գիտարշավի մասնակիցների (Ռ. Վարդումյանի գլխավորությամբ), Ս. Վարդանյանի կողմից Շուշի քաղաքից եւ հարակից գյուղերից հավաքված բանահյուսական, ազգագրական, մասամբ նաեւ բարբառային նյութերը, որոնց մի մասը տպագրվել է առանձին ժողովածուներով, մի մասը՝ համահավաք ժողովածուներում եւ տարբեր հանդեսներում, իսկ մի մասն էլ առ այսօր ձեռագիր վիճակում պահվում է տարբեր արխիվներում):

59. Խեմճյան Է., *Պատմական անձանց վիպական կերպավորումը Արցախի բանահյուսության մեջ*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երեւան, 2007, էջ 325-336

(Ներկայացվում են տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ բանահավաքների կողմից գրառված Արցախի բանահյուսական նյութերում հանդես եկող պատմավիպական կերպարները, որոնց հեղինակը պայմա-

նականորեն բաժանում է երկու խմբի՝ ա) պատմական դեմքեր, որոնք ժամանակագրորեն ավելի մոտ են մեզ, ու թեեւ վիպականացված, դեռեւս զգալի են նրանց՝ որպես պատմական անձ ընկալելը (Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Նադիր Շահ, Պըլը Պուղի, Մելիք-Շահնազար), բ) պատմական դեմքեր, որոնց կերպարները փոխ են առնվել արեւելյան բանահյուսական ավանդույթից (Ռանանդա Բահուլ, Լոխման Յէքիմ, Խիկար Իմաստուն, Մուլա Նասրեդդին): Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում հատկապես Միրզա դայու, Պըլը Պուղու եւ Մելիք-Շահնազարի, Լենկ Թեմուրի, Շահ Աբասի, Լոխման Յէքիմի կերպարների դրսևորմանը):

60. Խուրշուդյան Ժ., **Արցախ - Միջին Ասիա - Շուլավեր՝ համադրական ակնարկ**, «Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988թթ. ազգաբանական եւ բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները: Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 5-7, 1990», Երեւան, 1990, էջ 30 -31

(Սկսած 18-րդ դարից՝ Արցախից գաղթած եւ Միջին Ասիայի որոշ բնակավայրերում ու Վրաստանի Շուլավերում բնակություն հաստատած հայերի հետնորդներից եւ Արցախի Սարտակերտի շրջանի տարբեր գյուղերի բնակիչներից գրառված բանահյուսական-ազգագրական նյութերի համադրությամբ վեր են հանվում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Ըստ հեղինակի՝ թե՛ Միջին Ասիայում, թե՛ Շուլավերում ակունք-Արցախից ավանդականորեն պահպանվել էր հիմնականում թաղման ծեսը, հատկապես՝ ծեսի ժամանակ տրվող կորկոտ-հարիսան, հեքիաթային որոշ մոտիվներ, դարձվածներ, ոճեր, մանկական խաղերգեր, օրորոցայիններ, մեռելոցի ձեւը (մայիսի 2-ին) եւն):

61. Խուրշուդյան Ժ., **Սարտակերտի շրջանի բանահյուսությունը (ըստ 1972-79թթ. գործուղման արդյունքների)**, «1978 -1979թթ. ազգագրական եւ բանահյուսական դաշտային հետազոտությունների արդյունքները: Զեկուցումների թեզիսներ. մայիսի 5 -7, 1980», Երեւան, 1980, էջ 41-43

(Որոշակի տեղեկություններ հայտնելով Լեռնային Ղարաբաղի Սարտակերտի շրջանի մասին՝ հեղինակը ներկայացնում է 1972-1979թթ. շրջանի 17 գյուղերում իրականացրած իր բանահավաքչական աշխատանքը, որի արդյունքում ձայնագրել է 220 զվարճախոսություն, 170 հեքիաթ, 70 ավանդություն, 30 առակ, 20 զրույց, 10 հուշապատում, բանաձեւային ժանրերի 1000 նմուշ, տարաբնույթ 60 երգ, 200 խաղիկ, գրանցել նաեւ պարեր, մեղեդիներ, որոշ ծիսակատարություններ: Առանձին տրվում են նյութերի գրանցման նպատակով նախօրոք կազմված ծրագրում ներառված սկզբունքները: Ըստ հեղինակի՝ գրանցված նյութերի մեծ մասը սորություն է՝ հատկապես գուֆաներգ-հորովելները, կթվորի երգերը, սգերգերը, առասպելաբանական ավանդությունները, ժողովրդական սպառնալիքները եւն):

62. **Ծաղկեփունջ (Կազմեց եւ մշակեց՝ Ա. Նազինյան), Երեւան, 1960, 148 էջ**

(Հայ ժողովրդական առակների, գրույցների, խաղիկների, առածների, հանելուկների ժողովածու: Ընդգրկված են նաեւ արցախցի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու անվան հետ կապված մի շարք գվարճախոսությունների (21 պատում)՝ գրական հայերենով մշակումները):

63. Հախումեանց Ա., **Առակ ի բարբառ արցախեցոց, «Արարատ», Ս.Էջմիածին., 1877, թիւ ԺԲ, էջ 460-461**

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված երկու առակ՝ «Չոլըցին հու մահը» եւ «Մէժլիս»: Վերջինս, որ թարգմանված է ռուսերենից, տողատակերում ունի նաեւ բարբառային որոշ բառերի բացատրություններ):

64. Հակոբյան Վ., Գրիգորյան Բ., **Պըլը-Պուղու բանահյուսությունը, «Հակոբյան Վ., «Բանաստեղծությունը եւ տիեզերական շարժումը», Երեւան, 2005, էջ 93-110:**

(Ներկայացվում են արցախցի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու շուրջ ստեղծված բանահյուսական, հիմնականում՝ տպագիր նյութերն ու մշակումները, վեր հանվում դրանց առանձնահատկություններն ու մտածողության բնորոշ կողմերը, ճշգրտվում առակախոսի տեղն ու դերը հայոց բանահյուսական արվեստի մեջ: Առանձնակի ուշադրություն է դարձվում Գ Շերմազանյանի, Մ. Բարխուդարյանի, Ս. Իսրայելյանի, Ա. Ղազիյանի, Ս. Խանգադյանի, Հ. Բեգլարյանի եւ այլոց գրառումներին ու մշակումներին, Արցախյան ազգային շարժման սկզբներին Ստեփանակերտում հիմնադրված «Պըլը-Պուղի» երգիծական հանդեսին: Որոշ դեպքերում գրառված նյութերից կատարելով մեջբերումներ՝ հողվածի հեղինակները բացահայտում են մեծ առակախոսի կերպարը, նրա փիլիսոփայությունը, չարին ու հատկապես Մելիք-Շահնազարին հակադրվելու առաքելությունը: Հողվածը տպագրվել է նաեւ Վ. Հակոբյանի «Երկերի» Ե հատորում /Ստեփանակերտ, 2008, էջ 465-477/):

65. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V (բնագիրը եւ ծանոթագրությունները Ա. Նազինյանի եւ Մ. Գրգորյանի (Սպանդարյան), Նախաբանը գրեց Ա. Նազինյանը), Երեւան, 1966, 758 էջ**

(«Նախաբանում» (էջ 5-12) տեղեկություններ են տրվում Արցախի պատմության, Ղարաբաղի բարբառի հնչյունաբերականական առանձնահատկությունների, ժողովածուի կառուցվածքի եւ կազմման սկզբունքների մասին: Բուն ժողովածուն (էջ 15-676) ընդգրկում է Մ. Գրիգորյան-Սպանդարյանի կողմից 1922-1953թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Շուշու, Ստեփանակերտի, Մարտունու, Մարտակերտի եւ Հադրութի շրջանների տասնյակ բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառա-

դարձության մասնակի խախտումներով) գրառած 156 հեքիաթ, որոնցից որոշները (հատկապես «*Հավելվածում*» (էջ 565-676) ընդգրկված) իրականում ավանդություններ ու զրույցներ են: Ժողովածուին կցված են նաև հեքիաթների գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալներն ամփոփող ծանոթագրություններ (էջ 679-718), բարբառային եւ փոխառյալ բառերի բացատրական բառարան (էջ 721-747), հեքիաթների ցանկերը՝ ըստ տեղի ու ասացողների (էջ 748-751) եւ այբբենական դասավորությամբ (էջ 752-755):

66. *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI (բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը Ա. Նազինյանի, Վ. Սվազյանի), Երեւան, 1973, 778 էջ*

(«*Նախաբանում*» (էջ 5-16) տեղեկություններ են տրվում Արցախի եւ Ուտիքի պատմության, նրանց բարբառների տարբերությունների, ժողովածուի կառուցվածքի եւ կազմման սկզբունքների մասին: Բուն ժողովածուն (էջ 19-702) ընդգրկում է տարբեր բանահավաքների կողմից տարբեր ժամանակներում Արցախի եւ Ուտիքի տասնյակ բնակավայրերից գրառած հեքիաթները, որոնցից որոշները (հատկապես «*Հավելվածում*» (էջ 605-702) ընդգրկված) իրականում ավանդություններ ու զրույցներ են: Արցախից հավաքված հեքիաթները (100 միավոր) Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով կամ մասնակի խախտումներով) գրառել են Առաքել Բահաթյանը (էջ 19-54, 69-80, 87-90, 149-150, 159-160, 163-167, 172-174, 245-248, 256-259, 262, 268-269, 271-275, 620-622, 633-659, 690-691, 698-702), Ալեքսանդր Բահաթյանը (էջ 81-84, 147-148, 168-169), Գրիգոր Բահաթյանը (էջ 55-68, 85-86, 151-158, 161-162, 170-171, 260-261, 263, 266-267, 617-619, 623-632), Կոնստանդին Մելիք-Շահնագարյանը (էջ 91-94, 613-616), Սաքսիմ Մխիթարյանը (էջ 95-115, 183-209, 249-254, 276-278), Գրիգոր Կարախանյանը (էջ 116-128), Սարգիս Իսրայելյանը (էջ 129-146, 210-244, 255, 279-281, 692-693), Միքայել Տեր-Յովհաննիսյանը (էջ 175-176), Յրաջյա Աճառյանը (էջ 177-182), Միքայել Առաքելյանը (էջ 264-265, 270): Ժողովածուին կցված են նաև հեքիաթների գրառման հանգամանքներն ու որոշ բանասացների կենսագրական տվյալներն ամփոփող ծանոթագրություններ (էջ 705-748), բարբառային եւ փոխառյալ բառերի բացատրական բառարան (էջ 751-769), հեքիաթների այբբենական ցանկ (էջ 770-773):

67. *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII (տպագրության եւ պատրաստել Ա. Նազինյանը եւ Մ. Առաքելյանը), Երեւան, 1979, 768 էջ*

(«*Նախաբանում*» (էջ 5-8) տեղեկություններ են տրվում Արցախի եւ Սյունիքի պատմության, նրանց բարբառների, ժողովածուի կառուցվածքի եւ կազմման սկզբունքների մասին: Բուն ժողովածուն (էջ 11-671) ընդգրկում

Է տարբեր բանահավաքների կողմից տարբեր ժամանակներում Արցախի եւ Սյունիքի տասնյակ բնակավայրերից գրառած հեքիաթները: Արցախից հավաքված հեքիաթները (172 միավոր) Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառել են Միքայել Առաքելյանը (էջ 11-41, 45-108, 115-206, 208-241, 244-378), Քաջիկ Յարությունյանը (էջ 42-44), Աշոտ Առստամյանը (էջ 109-114, 207, 242-243, 382-385), Ալվարդ Ղազիյանը (էջ 379-381, 386-394): Ժողովածուին կցված են նաեւ հեքիաթների գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալներն ամփոփող ծանոթագրություններ (էջ 675-718), բարբառային եւ փոխառյալ բառերի բացատրական բառարան (էջ 721-738), V-VII հատորներում ընդգրկված հեքիաթներում գործածված անձնանունների (էջ 739-741), տեղանունների (էջ 741-742), առարկայական (էջ 742-749) ցանկեր, VII հատորի հեքիաթների ցանկերը ըստ տեղի եւ ասացողների (էջ 749-756) եւ այբբենական դասավորությամբ (էջ 756-761):

68. Յայրապետյան Թ., ***Առասպելական տարրերը Բահաթրյանների գրառած հրաշապատում հեքիաթներում (Շուշի, XIX դարի երկրորդ կես), «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ. Յայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ»***, Շուշի, 2014, էջ 107-116

(Արժեւորելով 19-րդ դարի նշանավոր մանկավարժ եւ հասարակական գործիչ Առաքել Բահաթրյանի ու նրա ազգականներ Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրյանների՝ 1860թ. Շուշիում Ղարաբաղի բարբառով գրառած հեքիաթները, որոնք հայ ժողովրդական հեքիաթների առաջին գրառումներն են, հեղինակը քննության է առնում դրանցում առկա առասպելական տարրերը՝ դրանք համարելով վաղնջական հասարակությունների ծիսաառասպելական պատկերացումների, սովորությունների ու հավատալիքների տեղական դրսեւորումների արդյունք: Առանձնակի ուշադրություն է դարձվում «*Օգ մանուկին հաքլաթը*» հեքիաթին, որն, ըստ հողվածագրի, իր մեջ ներառում է նվիրագործման ծեսին առնչվող՝ մեր ժողովրդի էթնոմշակութային եւ առասպելաբանական մտածողության հնավանդ պատկերացումների վերապրուկները, որդեգրության ծեսի արձագանքները: Վեր հանելով այդ հեքիաթի եւ այլ բանահավաքների կողմից գրառված նրա տարբերակների ընդհանրություններն ու առանձնահատկությունները՝ հեղինակը եզրակացնում է, որ Բահաթրյանների գրառած հեքիաթների գիտական վերլուծությունը վկայում է հայկական միասնական էթնոմշակութային հեքիաթացանկի գոյության մասին):

69. Յայրապետյան Թ., ***Բաքվի հայոց բանահյուսություն. Երեւան, «Զանգակ-97» հրատ., 2004, 380 էջ, «Պատմաբանասիրական հանդես»***, Երեւան, 2005, N1, էջ 291-293

(Գրախոսություն: Արժեւորվում է ժողովածուն, որը կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանն ու Ս. Վարդանյանը: Որպես արժանիքներ են նշվում նյութերի ժանրային բազմազանությունն ու թվաքանակը, բանասացների ազգագրական (այդ թվում՝ Արցախից) եւ մասնագիտական կազմի բազմաշերտությունը, բարբառային յուրահատկությունների պահպանումը, ծանոթագրությունների ու բարբառային բառերի բացատրական բառարանի կցումը եւն: Ըստ գրախոսի՝ Բաքվի հայոց բանահյուսությունը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ եւ կարելու է ներդրում է հայ հոգեւոր մշակույթի ուսումնասիրության ոլորտում):

70. Հայրապետյան Թ., ***Երզնիքան իրեք խնձոր վեր ընգավ ու տասը խրատ, Երեւան, 2014, 68 էջ***

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի՝ Արցախի Հանրապետության որոշ բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառած 10 հեքիաթ, որոնք ունեն նաեւ նկարազարդումներ (*Նկարիչ՝ Ա. Ղուկասյան*): «Առաջաբանում» (էջ 3-5) անդրադարձ է կատարվում արցախյան հեքիաթների ժանրային եւ իմաստային առանձնահատկություններին: Ժողովածուի վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 58-61) եւ ընդգրկված հեքիաթներում գործածված՝ Ղարաբաղի բարբառին հատուկ մի քանի տասնյակ բառերի բացատրություններ (էջ 62-66):

71. Հայրապետյան Թ., ***Ծիսառասպելական տարրերը Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում ըստ 2006-2008 թթ. գրառած նյութերի (համեմատական ուսումնասիրություն), «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», Երեւան, 2008, N3-4, էջ 31-39***

(Համառոտ անդրադառնալով Արցախի բանահյուսության հավաքման պատմությանը՝ հոդվածագիրը Բահաթրյան եղբայրների, Գ. Սրվանձտյանցի, Կ. Մելիք-Շահնագարյանի եւ այլ բանահավաքների հավաքած հրաշապատում հեքիաթների համեմատությամբ ներկայացնում է 2006-2008թթ. ԼՂՀ Մարտակերտի շրջանի Սրխավանդ, Կարմիրավան, Շուշիի շրջանի Մեծ Շեն, Եղցահող, Քարին Տակ, Բերդաձոր, Կանաչ Թալա, Հին Շեն, Մարտունու շրջանի Բերդաշեն, Ճարտար, Սպիտակաշեն գյուղերում իր գրառած ժողովրդական համանման ստեղծագործություններում առկա ծիսառասպելական տարրերը, հատկապես՝ նվիրագործման, որդեգրության, մարդուն զոհ մատուցելու եւ հնագույն այլ ծեսերի արտահայտությունները՝ դրանք բացատրելով վաղնջական հասարակությունների ծիսական կյանքի, առասպելական պատկերացումների հետ հեռավոր առնչությամբ: Ըստ հեղինակի՝ չնայած տարածաժամանակային գործոնների ազդեցությամբ հրաշապատում հեքիաթները հիմնականում վեր են ածվում իրա-

պատում գրույցների, սակայն Ղարաբաղից գրառված հեքիաթներում շարունակում են կենցաղավարել կիսաառասպելական պատկերացումների մնացուկները՝ իրենց խորքում կրելով հնագույն պատմահասարակական հարաբերությունների, սովորությունների ու հավատալիքների տեղական դրսևորումները):

72. Հայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի (Տմբլաջի Խաչան) ժողովրդագիտական գործունեությունը**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտա-ժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երեւան, 2007, էջ 342-347

(Քննության է առնվում 19-րդ դարի վերջի-20-րդ դարի առաջին կեսի շուշեցի նշանավոր գյուղատնտես, բանահավաք, երգիծաբան Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի ժողովրդագիտական գործունեությունը: Ներկայացվում են նրա՝ հիմնականում Արցախից գրառած եւ տարբեր արխիվների ֆոնդերում պահվող բանահյուսական եւ ազգագրական (Մի մասը՝ տպագիր) տարաբնույթ նյութերը, Ղարաբաղի բարբառի բացատրական բառացանկերը: Ուշադրություն է դարձվում նաեւ հեղինակի «*Ջուռնալ-Տմբլա*» ֆելիետոնների ժողովածուին):

73. Հայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի (Տմբլաջի Խաչան) սոցիալ-քաղաքական սատիրան**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 2001, N 1, էջ 207-212

(Հոդվածի սկզբում ներկայացնելով Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի կյանքի եւ գործունեության նկարագիրը՝ հեղինակն այնուհետեւ քննում է նրա երգիծական ստեղծագործությունները, հատկապես «*Ջուռնալ-Տմբլա*» ժողովածուի մեջ ընդգրկված ֆելիետոնները, որոնք գրված են Ղարաբաղի բարբառով: Հանգամանորեն վեր են հանվում դրանցում արտացոլված դեպքերը, սովյալ ժամանակաշրջանում, հատկապես Շուշի քաղաքում իշխող բարքերը, ընտանեկան-կենցաղային, հասարակական-քաղաքական բացասական երեւույթները, գավառական կյանքի հետամնացությունը, կենցաղում եւ մտքերի մեջ իշխող հնածես սովորություններն ու նախապաշարմունքները, ինչպես նաեւ աջխարհի քաղաքական անցուդարձերը, հայոց հարցի հետ կապված սին պատրանքները, սուլթանական Թուրքիայի կողմից արեւմտահայության նկատմամբ ծրագրավորված կամայականությունները, ճնշումը, բռնությունները, լիբերալ մամուլի բարքերը եւն):

74. Հայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի (Տմբլաջի Խաչան). Կյանքն ու գործը**, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր եւ ուսումնասիրություններ», Երեւան, 2007, հ. 24, էջ 7-119

(Ներկայացվում է 19-20-րդ դարերի շուշեցի մշակույթի նշանավոր գործիչ Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի կյանքն ու գործը, առանձ-

նակի ուշադրություն է դարձվում նրա ժողովրդագիտական գործունեությանն ու Ղարաբաղի բարբառով գրած ստեղծագործություններին: Ուսումնասիրության վերջում հակիրճ տեղեկություններ են տրվում Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկությունների մասին (էջ 100), ներկայացվում է նաեւ Կ. Մելիք-Շահնազարյանի «*Ջունա-Տմբլա*» ֆելիետոնների երկհատոր ժողովածուում գործածված մի շարք բարբառային բառերի բացատրական բառարանը (էջ 101-103):

75. Հայրապետյան Թ., *Ղարաբաղի առակախոս Պըլ Պուղին (ըստ 1991-2015թթ. Արցախում գրառած նյութերի)*, «Արցախի պետական համալսարան. *Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)*», Ստեփանակերտ, 2016, *պրակ II*, էջ 142-146

(Հիմք ընդունելով Արցախի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու շուրջ ստեղծված զվարճախոսությունների՝ 19-20-րդ դարերում տարբեր բանահավաքների կողմից կատարված գրառումները եւ հատկապես անկախության տարիներին Արցախում իր հավաքած բանահյուսական նյութերը՝ հեղինակը ներկայացնում է դրանցում արծարծված թեմաները՝ բացահայտելով մեծ առակախոսի կերպարը, որի այս կամ այն հատկանիշն ընդգծելու համար բերում է համապատասխան բնագրային օրինակներ: Ըստ հեղինակի՝ Պըլը-Պուղու զվարճապատումները, սերնդեսերունդ փոխանցվելով, ձեւավորել են արցախահայության վարքային համալիրի կարեւոր բաղադրիչներից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս սփռելով 18-րդ դարի երկրորդ կեսերից մինչեւ 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում արցախահայության սոցիալ-քաղաքական հարաբերությունների եւ պատմամշակութային իրողությունների վրա: Հոդվածն՝ ավելի համառոտ եւ «*Ղարաբաղի առակախոս Պըլ Պուղու սոցիալ-քաղաքական երգիծանքը*» վերնագրով, տպագրվել է նաեւ «*Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը. Միջազգային գիտաժողովի նյութեր. 2012թ. հունիսի 24-հուլիսի 01, Երեւան-Ստեփանակերտ*» /Երեւան, 2012, էջ 83-85/ ժողովածուում):

76. Հայրապետյան Հ., *Ականջդ կանջի, Պուղի, Ստեփանակերտ, 2013*, 32 էջ

(Ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով (որոշ բառեր եւ արտահայտություններ՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած անեկդոտներ եւ երգիծական մանրապատումներ, որոնց շարքում կան նաեւ արցախյան ժողովրդական զվարճախոսությունների մշակումներ):

77. Հայրապետյան Ռ., *Ղարաբաղյան խաղիկներ, Ստեփանակերտ, 2000*, 52 էջ

(Ընդգրկում է ժողովրդական վիճակի երգերի մոտիվներով հեղինակի՝

գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառի Յադրուֆի ենթաբարբառով (տառադարձության խախտումներով) գրած խաղիկներ (40 միավոր), ինչպես նաև մի շարք բանաստեղծություններ, ձևեր, մտորումներ են):

78. Հարությունյան Լ., *Կաթնակորեկ, Երեւան, 1998, 94 էջ*

(Ժողովածուում ընդգրկված են բանահյուսական տարբեր ժանրերի՝ հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զրույցներ են, նյութերի մշակումներ ու հեղինակի գրած պատվածքներ, մանրապատումներ, այլ բնույթի հակիրճ ստեղծագործություններ: Մշակումների մեծ մասը արցախյան բանահյուսության նմուշներ են: Բոլոր նյութերը հիմնականում գրառված են գրական հայերենով):

79. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, Երեւան, 1991, 400 էջ*

(Բանահյուսական բազմաժանր ժողովածու: «Ներածություն» բաժնում (էջ 3-23) ներկայացվում են Արցախի բանահյուսության գաղափարական ընդհանրացումները, արցախցու փիլիսոփայությունը, աշխարհայացքը, պատկերացումները կյանքի ու տարբեր երեւույթների մասին: Բուն ժողովածուի առանձին բաժիններում ընդգրկված են հեղինակի կողմից տասնյակ տարիների ընթացքում Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) եւ գրական հայերենով գրառված համապատասխան ժանրերի բնօրինակները՝ հեքիաթներ (14 միավոր), զրույցներ, առակներ, ավանդություններ (51 միավոր), ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ (26 միավոր), զվարճախոսություններ (121 միավոր), հանգախաղեր (49 միավոր), տաղիկներ ու խաղիկներ (51 միավոր), հանելուկներ (61 միավոր), շուտասելուկներ (9 միավոր), ինչպես նաև բազմաթիվ ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, մահա-նալու իմաստ բովանդակող արտահայտություններ, խրատներ, սպառնալիքներ, երդումներ, ցանկություններ, սպառնալիքներ, ծիսական արտահայտություններ, անեծքներ, օրհնանքներ ու բարեմաղթություններ, ազգագրական տարաբնույթ նյութեր՝ սովորություններ, ժողովրդական խաղեր, կենացներ, բույսերի ու կենդանիների անուններ, ուտեստների անուններ ու բաղադրատոմսեր, մանկական բառաշարք, արցախյան հին անձնանուններ, անձնանունների համառոտագրություններ ու հնչյունադարձումներ են: Առանձին բաժիններով ներկայացվում են նաև Ղարաբաղի բարբառում գործածվող դարձվածների (էջ 262-303) ու բառերի (էջ 353-381) բացատրական բառարաններ եւ նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 382-392):

80. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, 2004, 422 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առաջաբանում՝ «Արցախի բանահյուսության թեմատիկ որոշ առանձնահատկություններ՝ ըստ իմ ժողոված նյութերի», հեղինակը անդրադառնում է իր գրառած նյութերին՝ կատարելով մի շարք դիտարկումներ: Բուն ժողովածուի երեք բաժիններում առանց ժանրային տարբերակման համապատասխանաբար ընդգրկված են՝ հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ (151 միավոր), տաղիկներ ու խաղիկներ (75 միավոր), զանազան սովորություններ ու ազգագրական տարաբնույթ նյութեր (287 միավոր): Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 360-370) եւ Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 371-420):

81. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, երրորդ գիրք, Ստեփանակերտ, 2007, 412 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններում առանց ժանրային տարբերակման ընդգրկված են ժողովրդական չափածո ստեղծագործություններ, հատկապես՝ խաղիկներ (131 միավոր), ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ (55 միավոր), զվարճախոսություններ, զվարճալի պատմություններ, սրամտություններ (173 միավոր), բազմաթիվ առածներ, ասացվածքներ, իմաստախոսություններ, խորհուրդներ, ինչպես նաեւ ազգագրական տարաբնույթ նյութեր: Վերջում տրվում են Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 225-401) եւ նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 402-408):

82. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009, 384 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական եւ այլ նյութերի ժողովածու: Ընդգրկում է զանազան պատմություններ, տարբեր բույսերի մասին տեղեկություններ, զրույցներ, հանելուկներ, անեծքներ, սպառնալիքներ, օրինանքներ, մաղթանքներ, երգումներ, խրատներ, բանահյուսական եւ ազգագրական տարաբնույթ այլ նյութեր: Ներկայացվում են նաեւ Արցախի ու հարակից շրջանների մի շարք տեղանունների ու մանրատեղանունների նկարագրություններ, նրանց հետ կապված ավանդություններ, անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը: Առանձին բաժիններով տրվում են Ղարաբաղի բարբառում գործածական

դարձվածների (էջ 121-173) բացատրական եւ բառերի ու տարբեր արտահայտությունների բացատրական, ստուգաբանական, ազգագրական բառարաններ (էջ 217-331): Ընդհանուր առմամբ նյութերը խմբավորված չեն, իսկ մի մասն էլ հեղինակի՝ նույն վերնագիրը կրող նախորդ ժողովածուների մեջ ներառված որոշ բնօրինակների կրկնությունն է):

83. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, հինգերորդ գիրք, Ստեփանակերտ, 2011, 404 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններում առանց ժանրային տարբերակման ընդգրկված են զրույցներ, տաղիկներ, սովորություններ, ազգագրական այլ նյութեր, հեղինակային մտորումներ, տարաբնույթ պատմություններ ու մանրապատումներ, բանաստեղծություններ, ասացվածքներ, իմաստալից խոսքեր, խրատներ են: Վերջում տրվում է բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 295-395), անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը: Ընդհանուր առմամբ նյութերը խմբավորված չեն, իսկ մի մասն էլ հեղինակի՝ նույն վերնագիրը կրող նախորդ ժողովածուների մեջ ներառված որոշ բնօրինակների կրկնությունն է):

84. Հարությունյան Ս., *Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, 392 էջ*

(*Ներածության*) մեջ (էջ Զ-ԺԸ) քննության են առնվում հանելուկների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, տրվում է միջազգային եւ հայ բանագիտության մեջ դրանց գրառման, հրատարակման եւ արժեւորման պատմությունը: «Առաջաբանում» (էջ ԺԹ-ԻԲ) ներկայացվում են ժողովածուի կազմման սկզբունքներն ու կառուցվածքը: Առանձին բաժիններով են տրվում նաեւ աղբյուրների համառոտագրությունները (էջ ԻԳ-ԻԶ) եւ լուծման առարկաների ցանկը (էջ ԻԷ-ԼԹ): Բուն ժողովածուն (էջ 3-212) առանձին բաժինների ու ենթաբաժինների թեմատիկ խմբավորմամբ ընդգրկում է հեղինակի կողմից գրառված ու տարբեր աղբյուրներից քաղված 2168 հանելուկ՝ իրենց բազմաթիվ տարբերակներով: Դրանց մի մասը, գրառված գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով), հավաքված են Արցախից: Ժողովածուին կցված են նաեւ ընդարձակ ծանոթագրություններ (էջ 215-324), ռուսերեն (էջ 325-326) ու գերմաներեն (էջ 327-328) ամփոփումներ, անվանացանկ (էջ 331-333), առարկայացանկ (էջ 334-353), հանելուկների տարածման վայրերի անվանացանկ՝ տվյալ տեղավայրում կենցաղավարող հանելուկների համարների նշումով (էջ 354-362), սիմվոլների եւ փոխաբերությունների բառարան (էջ 363-389):

85. Հովհաննիսյան Ա., *Ճանապարհ, որ ձգվում է կես դար*, «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1996, 30 հունվարի

(Սկզբում համառոտ տեղեկություններ են տրվում Ասկերանի շրջանի իսնապատ գյուղի բնակիչ, բանահավաք Միքայել Օհանջանյանի գործունեության մասին, ով շուրջ 50 տարի արցախից գրառել է մեծ թվով բանահյուսական նյութեր եւ հանձնել ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արխիվ: Այնուհետեւ ներկայացվում է բանահավաքի՝ գրական հայերենով (որոշ բառեր ու արտահայտություններ՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած 8 զվարճախոսություն):

86. Ղազարյան Խ., *Տումի, Երեւան, 2003, 212 էջ*

(Գրքում ներկայացված են Հաղրութի շրջանի Տումի գյուղի պատմության, աշխարհագրական դիրքի, բնակչության, տնտեսության, բուսական եւ կենդանական աշխարհի, մշակույթի, կրթօջախների, Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան գոյամարտում նրա բնակիչների մասնակցության, նշանավոր տումեցիների եւն մասին ակնարկներ ու տեղեկություններ: Առանձին ենթաբաժիններում հեղինակն ընդգրկել է գյուղի բնակիչներից գրական հայերենով ու տեղական խոսվածքով (տառադարձության խախտումներով) իր գրառած մի շարք ավանդություններ եւ ավանդազրույցներ (էջ 191-199), օրհնանքներ (էջ 199-200), անեծքներ (էջ 200-203), պիտակներ (203-205), պատկերավոր արտահայտություններ (էջ 205-206):

87. Ղազիյան Ա., *Ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության մեջ*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1996, N 3, էջ 135-145

(Հաստատելով, որ 1988թ. Լեռնային Ղարաբաղում սկսված ազգային-ազատագրական պայքարը վճռական ազդեցություն ունեցավ երկրամասի ժողովրդի հոգեւոր մշակույթի վրա՝ արտացոլվելով նաեւ բանահյուսության մեջ, հեղինակը քննության է առնում իր՝ 1988-1995թթ. Արցախից գրառած բանահյուսական նմանատիպ տարբեր ժանրերի նյութերը, դրանցում արծարծված թեմաները, դեպքերն ու դեմքերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում ազատամարտի հերոսներին՝ Արմեն Մելքումյանի, Արմեն Ավագյանի, Աշոտ Ղուլյանի (Բեկոր), Արկադի Տեր-Թադեւոսյանի (Կոմանդոս) եւ հատկապէս Մոնթե Մելքոնյանի (Ավո) մասին ժողովրդի կողմից հորինված երգերին, ինչպէս նաեւ պատերազմական իրավիճակում գտնվող ժողովրդի ընկալումները, վերաբերմունքը, բնավորության գծերը, հասարակական, քաղաքական, ռազմական իրադարձությունները եւն ներկայացնող զվարճապատումներին, զրույցներին, հուշապատումներին եւն: Հոդվածը՝ «Արցախյան ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի

ժողովրդական բանահյուսության մեջ» վերնագրով, տպագրվել է նաեւ «Կրթությունը եւ գիտությունը Արցախում» /Երեւան, 2008, N 3-4, էջ 50-58/ հանդեսում):

88. Ղազիյան Ա., **Արցախ**, «*Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր եւ ուսումնասիրություններ*», հ.15, Երեւան, 1983, 192 էջ

(Բանահյուսական բազմաժանր ժողովածու: «Ներածություն» բաժնում (էջ 5-11) ներկայացվում են Արցախի բանահյուսության գրառման եւ հրատարակման համառոտ պատմությունը, ժողովածուի կառուցվածքը, նրանում ընդգրկված նյութերի ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, կենցաղավարման աստիճանները եւն: Բուն ժողովածուի առանձին բաժիններում ընդգրկված են հիմնականում հեղինակի եւ Բ. Ղազիյանի (նյութերի մեծ մասը) կողմից 1966, 1970-1978 թթ. ընթացքում ԼՂԻՄ եւ Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված համապատասխան ժանրերի բնօրինակները՝ հեքիաթներ (40 միավոր), գրույցներ, առակներ, գվարճախոսություններ (73 միավոր), ավանդություններ (41 միավոր), երգեր, խաղերգեր (9 միավոր), ինչպես նաեւ մականուններ (մարդկանց եւ գյուղերի), առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Առանձին բաժիններով ներկայացվում են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 167-183) եւ Ղարաբաղի բարբառում գործածվող բարբառային բառերի բացատրական բառարան (էջ 184-190):

89. Ղազիյան Ա., **Արցախի բառ ու բան**, «Կանչ», Երեւան, 1991, 8 *փետրվարի*, թիվ 11(5571), 1 *մարտի*, թիվ 17(5575), 8 *ապրիլի*, թիվ 26(5586)

(Համառոտ տեղեկություններ հաղորդելով Արցախի բանահյուսության եւ տարբեր բանահավաքների կողմից հավաքված նյութերի մասին ու կոչ անելով պատանի բարեկամներին գրի առնել եւ կորստից փրկել ժողովրդական ստեղծագործությունների եղած ու նոր ստեղծվող նմուշները՝ հեղինակը ներկայացնում է արցախյան մի շարք ավանդությունների, առածների, ասացվածքների, հանելուկների բնօրինակներ, ինչպես նաեւ Ղարաբաղի բարբառին հատուկ բառերի բացատրություններ):

90. Ղազիյան Ա., **Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-73 թթ. գրառումների հիման վրա**, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, N 4, էջ 235-241

(Քննության են առնվում բանահավաքներ Ա. Ղազիյանի՝ 1970-1973թթ., Մ. Առաքելյանի՝ 1970-1971թթ., Ս. Վարդանյանի՝ 1970թ. եւ Բ. Ղազիյանի՝ 1971-1973թթ. Լեռնային Ղարաբաղի Հաղրուփի, Մարտունու, Մարտակերտի, Ստեփանակերտի շրջանների 70 բնակավայրերից գրառած բանահյուսական բազմաժանր (առած-ասացվածքներ, ոճեր, դարձվածներ,

սպառնալիքներ, երգեր, հեքիաթներ, ավանդություններ, գվարճախոսություններ, զանազան գրույցներ են) նյութերը (1500 միավոր), որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արխիվում: Ըստ հեղինակի՝ հեքիաթները գտնվում են քայքայման ընթացքում, հատկապես վերանում-մոռացվում են կախարդական մոտիվները, լայն կենցաղավարում ունեն ավանդությունները, առավել կենսունակ են երգիծական գրույցներն ու գվարճախոսությունները, լայն կիրառություն ունեն նաեւ մանր ժանրերը՝ բանաձեւային, դարձվածային ստեղծագործությունները, շատ են մականունները, իսկ քնարական բանահյուսությունը, որ նախկինում հատկապես դրսևորվել է խաղիկներում, հարուստ չէ: Անդրադարձ է կատարվում նաեւ բանասացների տարիքային առանձնահատկություններին, գրառումների լեզվին են):

91. Ղազիյան Ա., **Խաչիկ Ծ. Վարդապետ Ղաղեանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը**, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1999, N 1-12, էջ 387-402

(Հոդվածի սկզբում ներկայացնելով 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի հայ նշանավոր ժողովրդագետ, բանասեր, հնագետ Խաչիկ Ղաղեանի (ծննդով՝ Արցախի Մարտունու շրջանի Վերին Թաղավարո գյուղից) համառոտ կենսագրությունը՝ հեղինակն այնուհետեւ քննում է նրա ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Արցախի տարբեր բնակավայրերից գրառած բանահյուսական եւ ազգագրական նյութերին՝ հեքիաթներ, ավանդություններ, գվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկան, ջրօրհնյաց եւ տարաբնույթ այլ երգեր, հանելուկներ, կենաց-բարեմաղթություններ, շուտասելուկներ, վիպական մանր ժանրերի ստեղծագործություններ, հավատալիքներ, սովորություններ, ծեսեր, տեղեկություններ երկրագործական աշխատանքների, արհեստների, բնակելի տան, տարագի, կախարդության, գուշակության, ժողովրդական բժշկության, բնակչության կազմի եւ թվի, սրբավայրերի վերաբերյալ են, որոնց մեծ մասը ձեռագիր վիճակում պահվում է ՀՀ Ազգային արխիվի՝ Խ. Ղաղեանի ֆոնդում (թիվ 319): Հոդվածագիրը նույնը ներկայացրել է նաեւ Խաչիկ Ծ. Վարդապետ Ղաղեանի «**Հոդվածների ժողովածու**» /Ս. Էջմիածին, 2007/ գրքի՝ իր գրած առաջաբանում (էջ 7-22):

92. Ղազիյան Ա., **Կոմիտասի «Վարանդայի գութաներգը»**, «Աշխատանք», Մարտունի, 13.01.1990, N 5

(Ներկայացնելով Կոմիտասի «**Ձիգ տու, քաշի**» երգը, որը կոչվում է նաեւ «**Վարանդի գութաներգ**» կամ «**Վարանդայի գութաներգ**», հոդվածագիրը հիմնավորում է, որ երգի բնագիրը ժողովրդագետ, բանահավաք Խաչիկ Ղաղեանի (ծննդով Վարանդայի Թաղավարո գյուղից)՝ Ղարաբաղի բարբառով գրառած «**Վարանդի հլովուրի**» գրականացված տարբերակն է, որը

որոշ չափով խմբագրվել է Ս. Աբեղյանի կողմից: Բերվում են նաեւ երկու բնագրերը):

93. Ղազիյան Ա., *«Հայ ժողովրդական հեքիաթներ»*, «Սովետական գրականություն», Երեւան, 1967, N 4, էջ 145-146

(Տեղեկություններ են հաղորդվում ՅՍՄՅ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակվող *«Հայ ժողովրդական հեքիաթներ»* գիտական հրատարակության մասին: Առանձնակի ուշադրություն է դարձվում 5-րդ հատորին /*Երեւան, 1966*/, որը բացառապէս կազմված է Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի՝ Արցախի տարբեր բնակավայրերի բանասացներից գրառած նյութերից: Քննության են առնվում հատորում ընդգրկված հեքիաթների, հեքիաթանման զրույցների, հեքիաթ-ավանդությունների տեսակները, նրանցում արտահայտված գաղափարները, հատորի վերջում տրված ծանոթագրությունները, ժողովածուում Ղարաբաղի բարբառի օրինաչափությունների պահպանման հանգամանքը եւ այլ հարցեր):

94. Ղազիյան Ա., *Ղարաբաղի բանահյուսության գրառման, հրատարակման պատմություն*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երեւան, 2007, էջ 378-387

(Ժամանակագրական հաջորդականությամբ քննվում է Ղարաբաղի բանահյուսության գրառման եւ հրատարակման պատմությունը 1860 թվականից մինչեւ 21-րդ դարի սկզբները: Առանձին ենթաբաժիններով քննվում են Ալեքսանդր, Առաքել եւ Գրիգոր Բահաթյանների, Միքայել Տեր-Յովհաննիսյանի, Մակար Բարխուդարյանի, Երվանդ Լալայանի, Խաչիկ եւ Արամ Դադյանների, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի, Սարգիս Իսրայելյանի, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի, Ալվարդ եւ Բարխուդար Ղազիյանների, Լեւոն Հարությունյանի եւ այլ բանահավաքների ու բանագետների՝ Արցախի տարբեր բնակավայրերից գրառած բանահյուսական նյութերը եւ կատարած ուսումնասիրությունները, նշվում հրատարակություններն ու ձեռագիր նյութերի պահպանման ֆոնդերը: Արժեւորելով շուրջ 150 տարվա ընթացքում կուտակված բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութը՝ հեղինակը կարելորում է դրա ամբողջական հետազոտությունը):

95. Ղազիյան Ա., *Ղարաբաղի գվարճախոս Պըլ Պուդին*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1978, N 9, էջ 60-69

(Ներկայացվում են արցախցի նշանավոր գվարճախոս Պըլը-Պուդու շուրջ ստեղծված գվարճախոսությունները, որոնք բանավոր կենցաղավարմամբ տարածվել են նաեւ հարակից շրջաններում: Ուսումնասիրելով

մեկ հարյուրամյակի ընթացքում տարբեր բանահավաքների կողմից գրառված ժողովրդական այդ ստեղծագործությունները՝ շուրջ 200 սյուժե-պատում, որոնց մի մասը տպագրվել, իսկ մյուս մասը ձեռագիր վիճակում պահվում է տարբեր արխիվներում, հողվածագիրը հանգամանորեն վեր է հանում Պըլը-Պուղու կերպարի առանձնահատկությունները՝ համարձակություն, ըմբոստություն, հնարամտություն, սրամտություն, անկեղծություն, ազնվություն՝ դրանք հիմնավորելով բնագրերից քաղված դրվագներով: Կերպարը բացահայտվում է կյանքի տարբեր բնագավառների, հարեանների, հոգեւորականների, համագյուղացիների եւ հատկապես Վարանդայի մելիք Մելիք-Շահնազարի հետ ունեցած փոխհարաբերություններում: Ուշադրություն է դարձվում նաեւ մեծ զվարճախոսի՝ կրոնի եւ Աստծո, հանդերձյալ կյանքի մասին ունեցած պատկերացումներին, բարոյախոսությանը, միամտությանը, պարզամտությանը: Ըստ հեղինակի՝ Պըլը-Պուղու երգիծական կերպարն իր մեջ ներառել է եւ ազգային, եւ Արեւելքի ժողովուրդների բանահյուսական նմանատիպ կերպարներին հատուկ տիպական գծեր, եւ այդ առումով նրա արժեքն ու նշանակությունը վեր է նեղ, պատմաագագրական շրջանի սահմաններից):

96. Ղահրամանյան Կ., *Արցունքոտ ժպիտներ*, հ. 2, Երեւան, 2006, 352 էջ (Առաջաբանում՝ «*Բանահյուսության հեռացող, բայց չխամրող էջեր*» (էջ 3-33), տեղեկություններ են հաղորդվում 1990-ական թվականների սկզբին Յյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի բնակիչների՝ հայրենի եզերքից բռնագաղթման, աշխարհի տարբեր վայրերում վերաբնակման, նրանց նիստ ու կացի, բանահյուսական մշակույթի մասին: Բուն ժողովածուն ընդգրկում է հեղինակի՝ տարագիր շահումյանցիներից գրական հայերենով (բարբառային որոշ բառերի ու արտահայտությունների գործածմամբ) գրառած զվարճախոսություններ, կատակներ, խրատական փոքրիկ իրապատումներ (689 պատում)՝ որոշ ծանոթագրություններով եւ լուսանկարներով: Ժողովածուին կցված է նաեւ բարբառային բառերի բառարան (էջ 324-346):

97. Ղահրամանյան Կ., *Օջախի գիրք. Նշխարներ*, Երեւան, 2002, 278 էջ (Ներկայացվում են Յյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի համառոտ պատմությունը, պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրությունը, վիմագրական, ազգագրական եւն նյութեր: «*Արցունքոտ ժպիտներ*» (էջ 182-228) բաժնում ընդգրկված են շրջանի տարբեր բնակավայրերի բնակիչների հետ կատարված զավեշտական դեպքերի նկարագրություններ՝ զվարճախոսություններ (հիմնականում գրական հայերենով գրառված), իսկ «*Չափածո բանահյուսություն*» (էջ 267-273) բաժնում՝ խաղիկներ, չափածո տարաբնույթ այլ ստեղծագործություններ եւ օրինանքներ (հիմնականում տեղական խոսվածքներով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառված):

98. Ղահիրամանյան Ռ., *Առածանի, Ստեփանակերտ, 2003, 108 էջ*

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի հավաքած Արցախի ասույթաբանական բանահյուսության որոշ ժանրերի նյութեր՝ առածներ, ասացվածքներ, դարձվածներ, թեալիոր արտահայտություններ, որոնք ներկայացվում են այբբենական կարգով՝ առանց ժանրային տարբերակման: Նյութերը գրառված են Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով):

99. Ղահիրամանյան Ռ., *Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2011, 72 էջ*

(Ընդգրկում է հեղինակի՝ գրական հայերենով (որոշ բառեր եւ արտահայտություններ՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած անեկդոտներ (600 պատում), որոնց շարքում կան նաեւ արցախյան ժողովրդական զվարճախոսությունների մշակումներ):

100. Ղահիրամանյան Ռ., *Խաղիկներ, Երեւան, 2005, 64 էջ*

(Ընդգրկում է հեղինակի՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած խաղիկներ (351 միավոր):

101. Ղանալանյան Ա., *Առածանի, Երեւան, 1960, 400 էջ*

(Ընդարձակ «Ներածության» մեջ (էջ IX-C) ներկայացվում են ժողովրդական առածների եւ ասացվածքների ընդհանուր բնութագիրը, ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, սոցիալական եւ գաղափարական բովանդակությունը, բանաստեղծական լեզուն եւ արվեստը, տեղեկություններ են տրվում հայկական առածների գրառման պատմության, ժողովածուի աղբյուրների, առածների դասավորման եղանակի, թեմատիկ խմբավորման, տարբերակների եւն մասին: Բուն ժողովածուն (էջ 5-332) առանձին գլուխների մեջ թեմատիկ խմբավորմամբ ընդգրկում է հեղինակի կողմից գրառված ու տարբեր աղբյուրներից քաղված հազարավոր առած-ասացվածքներ՝ իրենց բազմաթիվ նմանակներով ու տարբերակներով եւ համառոտագրությամբ աղբյուրների ու ազգագրական շրջանների նշումով: Դրանց մի մասը, գրառված գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով), հավաքված են Արցախից: Ժողովածուին կցված են նաեւ «Իմաստային-թեմատիկ եւ առարկայական ուղեցույց-համաբարբառ» (էջ 335-389), «Անձնանունների եւ տեղանունների ցանկ» (էջ 390-391), «Համառոտագրություններ աղբյուրների» (էջ 392-396), «Համառոտություններ տեղանունների» (էջ 397-398) ցանկեր:

102. Ղանալանյան Ա., *Ավանդապատում, Երեւան, 1969, 568 էջ*

(Ժողովածուն բաղկացած է մի քանի բաժնից: «Առաջաբանում» (էջ Է-ԺԲ) տեղեկություններ են տրվում հայ ժողովրդական՝ գրառված եւ հրատարակված ավանդությունների աղբյուրների ու ժողովածուի կառուցվածքի մասին: «Ուսումնասիրություն» (էջ ԺԵ-ՃՂ) բաժնում հանգամանորեն ներ-

կայացվում են ավանդությունների տեղը բանավոր արձակի մեջ, ժանրային առանձնահատկությունները, տեսակները, բնույթը, դարավոր կյանքն ու պատմական ճակատագիրը, գաղափարական եւ գեղարվեստական արժեքը, ազգային, միջազգային եւ եկամուտ ավանդությունները, դրանցում արձարծված թեմաները: Բուն ժողովածուն (էջ 3-415) ընդգրկում է հեղինակի կողմից գրառված ու տարբեր աղբյուրներից քաղված 917 ավանդություն եւ ավանդազրույց՝ շուրջ 400 տարբերակներով: Դրանց մի մասը, գրառված գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով), վերաբերում են Արցախին՝ NN1., 2.Բ., 4.Զ., 24-33., 111., 154-157., 216., 247., 264-268., 311.Բ., 327., 337.Գ., 338.Բ., 342.Բ-Գ., 351.Ա., 357.Ա., 362.Ա., 363, 367.Ա., 369.Ա., 372.Ա., 373.Բ., 376.Ա., 404., 448-454., 460., 462-463., 559., 587.Ա., 588., 626-631., 708-714., 764., 789.Դ., Թ., 796.Բ., 809.Է., 831-835., 901.Բ., 906.Բ., 914: «*Աղբյուրներ եւ ծանոթագրություններ*» բաժնում (էջ 417-488) յուրաքանչյուր առանձին ավանդության հերթական թվահամարին ու վերնագրին կից տրվում են ծանոթագրություններ եւ տեղեկություններ հաղորդողի, գրառողի, ձեռագիր եւ տպագիր աղբյուրների մասին: Ժողովածուին կցված են նաեւ անձնանունների (էջ 491-507), տեղանունների (էջ 508-519), առարկայական (էջ 520-530) ցանկեր, ավանդությունների տարածման հիմնական վայրերը ցույց տվող քարտեզ եւ ավանդության նյութ դարձած հուշարձանների 33 լուսանկար):

103. **Ղարաբաղյան հորովելներ**, «Կարմիր դրոշ», Ասկերան, 1989, 14 մարտի

(Տեղեկություններ են տրվում Կոմիտասի գրառումներում առկա Ղարաբաղյան հորովելների մասին: Առանձնակի ուշադրություն է դարձվում «*Ձիգ տու, քաշի*» երգին եւ նրա տարբերակներին: Վերջում խմբագրությունը կոչով դիմում է բոլորին՝ խնդրելով խմբագրություն ուղարկել նմանատիպ երգերի տեքստեր, նոտագրություններ, երգողների ու պատմողների հասցեներ, ձայնագրություններ, բանահյուսական բազմաբնույթ նյութեր՝ անհրաժեշտության դեպքում թերթում լուսաբանելու համար):

104. Դուլյան Կ., **Գուրգեն Գաբրիելյանը մանկագիր-բանահավաք**, «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն. Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 2017) հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2017, էջ 328-335

(Քննության են առնվում արցախցի նշանավոր մանկագիր, բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանի մանկական եւ այլ բնույթի բանաստեղծությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաեւ նրա «*հմ առածանի*», «*Արցախյան խոհանոց*» բանաստեղծությունների

շարքերին, «Ղարաբաղի հորովելը», «Խնեցուն երգը», «Ըրկանքէն երգը», «Կալին երգը», «Ըխարին ախճիգը», «Յընգերը» երգերին, որոնք արցախյան բառ ու բանի յուրատեսակ մշակումներ են: Վեր են հանվում դրանցում արձարծված թեմաներն ու գաղափարները՝ անհրաժեշտության դեպքում կատարվում մեջբերումներ):

105. Ղուկասյան Ա., **Արցախյան պատումներ, 2010, 80 էջ**

(Առանձին բաժիններում ընդգրկված են հեղինակի՝ Արցախի որոշ գյուղերի բանասացներից Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառած հեքիաթներ (20 պատում) եւ ասացվածքներ (177 միավոր): Յուրաքանչյուր հեքիաթի վերջում տրվում են համառոտ ծանոթագրություններ բանասացի մասին: Ժողովածուն ունի նաեւ նկարագրողումներ (նկարիչ՝ Ա. Ղուկասյան):

106. Մանասյան Ա., **Արցախյան ժողովրդական խաղիկներ, «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 1993, 28 մայիսի**

(Յեղինակը ներկայացնում է Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) իր գրառած արցախյան ժողովրդական երկու խաղիկ, որոնք երկխոսություններ են աղջկա եւ տղայի միջեւ):

107. Սարգսյան Լ., **Ազգայինը՝ բանահյուսական ժառանգորդությամբ, «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 30.08.2007, N100 (2070)**

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «Արցախյան ավանդություններ», (Ստեփանակերտ, 2007, 112 էջ) ժողովածուի մասին: Բանագիտական, պատմագիտական եւ լեզվաբանական-բարբառագիտական առումներով արժեւորելով ժողովածուն՝ գրախոսն առանձնապես կարեւորվում է նյութերի քանակը (266 միավոր՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը առաջին անգամ է գրավոր ներկայացվում), ստուգաբանական ավանդությունների ներառումը, 80 խոսվածքներով գրառված նյութերում յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների խիստ պահպանումը, ներածության մեջ արցախյան ավանդությունների գրառման պատմությունը, ժանրային նկարագիրը, բանահյուսական մյուս ժանրատեսակների հետ աղերսակցությունները, կառուցվածքային առանձնահատկությունները ներկայացնելը են):

108. Սարգսյան Լ., **Արմեն Սարգսյան. Արցախի բանահյուսությունը, Երեւան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, 748 էջ, «Մետրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2016, էջ 465-466**

(Գրախոսություն. Ժողովածուն համարելով ոչ միայն արցախի բանահյուսական ժառանգությունն ամփոփող նոր հուշարձան, այլեւ այդ ժառանգությունը կրող ժողովրդի բարբառի ու լեզվամտածողության գիտական ուսումնասիրության հավաստի ու հուսալի աղբյուր՝ գրախոսը ներկայացնում է նրա կարեւոր արժանիքները՝ վիպական, քնարական, ասույթաբանական

բանահյուսության 8078 բնագրի ընդգրկում, նյութերի համակարգում ըստ ժանրային նկարագրի՝ հեքիաթ, ավանդություն, առակ, գվարճախոսություն, խաղիկներ, չափածո այլ ստեղծագործություններ, առած-ասացվածք, անեծք, օրհնանք, հանելուկ, մականուն, շուտասելուկ, հանգախաղ, բարբառային տառադարձության եւ համապատասխան խոսվածքների յուրահատկությունների հետեւողական պահպանում, ընդարձակ առաջաբանում Արցախի մասին համառոտ ակնարկ, Արցախի բանահյուսության գրառման պատմությունը, նյութերի բանագիտական, ինչպես նաեւ Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական առանձնահատկությունների վերլուծություն, բառարանի եւ մատենագիտական ցանկի կցում են: Գրախոսությունը՝ **«Կարելոր ներդրում հայ բանագիտության մեջ»** վերնագրով, տպագրվել է նաեւ *«Լուսարար» /Ստեփանակերտ, 29.02.2016, թիվ 4-5(433-434)/* թերթում:

109. Մարգարյան Լ., *Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, 144 էջ*

(Ըստ լեզվական տարբեր մակարդակների՝ քննվում է Արցախի բանահյուսության լեզուն: Բաղկացած է *«Ներածությունից»* եւ չորս գլուխներից: *«Ներածության»* մեջ (էջ 4-17) հիմնավորվում է թեմայի արդիականությունը, անդրադարձ է կատարվում Արցախի բանահյուսության գրառման պատմությանը, բանահյուսական ժանրերի թեմատիկ ու լեզվական փոփոխություններին, բանահյուսական նմուշների գրավոր փոխադրության առանձնահատկություններին: Առաջին գլխի առաջին բաժնում՝ *«Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ»* (էջ 18-20), ներկայացվում են Ղարաբաղի բարբառի եւ բանահյուսության հնչյունական համակարգերի տարբերություններն ու դրանք պայմանավորող պատճառները, իսկ երկրորդ բաժնում՝ *«Արցախի բանահյուսության լեզվի բառապաշարի առանձնահատկությունները»* (էջ 20-49), քննվում են բանահյուսության բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հոմանիշության դրսեւորումները: Երկրորդ գլխում՝ *«Քերականական իրողությունների առանձնահատկությունները բանահյուսության լեզվում»* (էջ 50-87), քննության են առնվում խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսեւորումները եւ շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, տրվում են նաեւ վիճակագրական որոշ տվյալներ, որոնք հստակորեն արտացոլում են Արցախի բանահյուսական ստեղծագործությունների քերականական կառուցվածքի առանձնահատկությունները: Երրորդ գլխում՝ *«Բանահյուսության լեզվի ոճական առանձնահատկությունները»* (էջ 88-109), վեր են հանվում տարբեր ժանրերի (հանելուկ, առած-ասացվածք, խաղիկ, հեքիաթ) ոճական առանձնահատկությունները, առանձնակի ուշադրություն է դարձվում դրանցում

ոճական հնարանքների դրսևորումներին: Չորրորդ գլխում՝ «*Գրականացումը բանահյուսության մեջ*» (էջ 110-126), քննության է առնվում Արցախի բանահյուսության մեջ գրականացման երեւոյթը, բացահայտվում են գրականացման գործընթացը խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները: Ոսումնասիրությունն ունի նաեւ «*Ամփոփում*» (էջ 127-130), «*Բառարան*» (էջ 131-135), «*Օգտագործված գրականության ցանկ*» (էջ 136-143): Աշխատությունը հեղինակի՝ 2008 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (ղեկավար՝ ակադեմիկոս ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Հովհաննիսյան) լրամշակված տարբերակն է):

110. Մարգարյան Լ., *Արցախյան զվարճախոսություններ*, «*Լուսարար*», Ստեփանակերտ, 10.07.2014, թիվ 20 (378)

(Գրախոսություն Ա. Յու. Մարգարյանի «*Արցախյան զվարճախոսություններ*», (Ստեփանակերտ, 2014, 172 էջ) ժողովածուի մասին: Զվարճախոսությունները համարելով ժողովրդի մտածողության, աշխարհընկալման, պատմության, կենսափիլիսոփայության, հոգու ու մտքի շիտակության եւ ազնվասիրտ կերպարի արտացոլանք՝ գրախոսը քննում է ժողովածուն՝ վեր հանելով նրա առանձնահատկություններն ու արժանիքները՝ 100-ից ավելի խոսվածքներով գրառված շուրջ 600 բնագրի ընդգրկում, դրանց խմբային բաժանում ըստ շրջանների՝ Հաղրութի, Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի, Շուշու, Ստեփանակերտ քաղաքի, առանձին բաժնում Պըլը-Պուղու զվարճախոսությունների ներկայացում, բանահավաքչական աշխատանքին ներկայացվող պահանջների եւ խոսվածքային, հնչարտաբերական առանձնահատկությունների խստորեն պահպանում, բանախոսների կենսագրական տվյալները լուսաբանող ծանոթագրությունների ու դժվարընկալելի բառերի բացատրական բառարանի կցում են):

111. Մարգարյան Լ., *Գրականացման՝ որպես լեզվական իրողության արժեքը բանահյուսության մեջ*, «*Ազգ եւ ժառանգություն*» համահայկական երիտասարդական գիտաժողով, Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբեր, 2006թ.», Ստեփանակերտ, 2006, էջ 154-161

(Քննվում են բարբառի հնչյունական եւ քերականական օրինաչափությունների վրա գրական լեզվի ազդեցությունները եւ բանահյուսության մեջ դրանց դրսևորումները, ներկայացվում են գրականացումը պայմանավորող գործոնները, բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործությունների գրականացվածության աստիճանները, բանասացների ու բանահավաքների միջամտությունները, տառադարձության խախտման պատճառները են: Քննությունը հիմնականում կատարվում է Ղարաբաղի բարբառի եւ բանահյուսության հիմքի վրա, չնայած հեղինակն այդ մասին չի հիշատակում):

112. Մարգարյան Լ., **Եղանականիշ բառերի իմաստային ու գործառական առանձնահատկությունները Արցախի բանահյուսության լեզվում**, «Մետրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, հոկտեմբերի 19-21, 2007թ.», Ստեփանակերտ, 2007, էջ 67-68

(Ներկայացվում են Արցախի բանահյուսական ստեղծագործություններում գործածված եղանականիշ բառերի՝ վերաբերականների ու ձայնարկությունների իմաստային ու գործառական որոշ առանձնահատկություններ՝ մայրենիի համապատասխան եզր ունեցող եւ չունեցող վերաբերականների գործածություն, նորագիր նմուշներում փոխառյալ վերաբերականների արտամղում, ձայնարկությունների՝ առարկայական նշանակությամբ գործածություններ եւն: Բերվում են համապատասխան օրինակներ):

113. Մարգարյան Լ., **Լեզվական անճշտություններն ու աղավաղումները արցախյան ժողովրդական խաղիկներում ու դրանց զուգահեռները հանելուկների հետ**, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2004, էջ 86-89

(Հիմք ընդունելով Ս. Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուում ընդգրկված համապատասխան նյութերն ու կատարելով անհրաժեշտ մեջբերումներ՝ հողվածագիրը վեր է հանում ժողովրդական խաղիկներում առկա լեզվական անճշտությունները եւ աղավաղումները, որոնք այս կամ այն չափով խախտում են ժողովրդական այդ ստեղծագործությունների խառնվածքը, իմաստային հանգույցները, առաջ բերում իմաստային կցկտուրություն եւ անշաղկապվածություն, հանգային անհամաչափություն եւն: Նշվում է նաեւ, որ ի տարբերությամբ խաղիկների՝ հանելուկներում նման անճշտություններ եւ աղավաղումներ չկան):

114. Մարգարյան Լ., **Հոմանիշությունը բանահյուսության մեջ**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2007, N2, էջ 98-104

(Ներկայացվում են Արցախի բանահյուսության մեջ գործածված եւ Ղարաբաղի բարբառին հատուկ՝ արեւելյան լեզուներից (հազվադեպ՝ ռուսերենից) փոխառյալ-մայրենի միավոր հակադրությամբ հոմանիշային զույգերի քննությունը եւ դրանց դրսեւորման դեպքերը: Ըստ իմաստային հարաբերակցության ու գործառական հաճախականության՝ առանձնացվում են նման խմբերի իմաստային որոշ կարգեր: Ամփոփելով քննության արդյունքները՝ հեղինակը փաստում է, որ չնայած փոխառյալ միավորներն իրենց իմաստային-կիրառական առանձնահատկություններով ընդգրկում են գործածության լայն շրջանակներ, սակայն միտում չունեն լեզվական համկարգում կայունանալու եւ բարբառի ու բանա-

հյուսույթյան բառապաշարի բառակազմական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացում աստիճանաբար իրենց տեղը գիջում են գրական լեզվի միավորներին):

115. Մարգարյան Լ., **Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ**, «Հավելված ԱրՊՀ գիտական տեղեկագրի N1 (10). Մեսրոպյան գրերի գյուտի եւ Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու», Ստեփանակերտ, 2005, էջ 64-66

(Արցախի բանահյուսության լեզուն համարելով Ղարաբաղի բարբառը՝ հեղինակը ներկայացնում է տարբեր բանահավաքների կողմից հրատարակված բանահյուսական ժողովածուների նյութերի հնչյունական անհամապատասխանությունները բարբառի հետ, վեր հանում դրանց՝ որոշակի գործոններով պայմանավորված օբյեկտիվ եւ սուբեկտիվ պատճառները: Առանձնակի ուշադրություն է դարձվում քմային եւ երկբարբառակերպ հնչյունների տառադարձության բացակայությանը: Առանձնացվում են բանահյուսական նմուշների փոխադրության հնարավոր եղանակները (բարբառակիր բանասացից բարբառակիր, ոչ բարբառագետ բանահավաք, բարբառակիր բանասացից ոչ բարբառակիր, ոչ բարբառագետ բանահավաք, բարբառակիր բանասացից ոչ բարբառակիր, բարբառագետ բանահավաք) եւ դրանց արդյունքում առաջ եկած անհամապատասխանությունները):

116. Մարգարյան Լ., **Ճաղկապների գործածության առանձնահատկությունները Արցախի բանահյուսական ստեղծագործություններում**, «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2007, N1, էջ 138-147

(Ներկայացվում են Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործություններում շաղկապների գործածության դեպքերը, համադասական եւ ստորադասական, բնիկ եւ փոխառյալ միավորների, շաղկապական ու շարահարական կառույցների հարաբերակցական հաճախականությունը եւ որոշ այլ առանձնահատկություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվում ու//հու շաղկապի դրսեւորմանը: Քննության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ նշված ստեղծագործություններում շաղկապական մեկ միավորի տիրույթն ավելի փոքր է, եւ գրական մեկ միավորի տիրույթում հաճախ ընդգրկվում են բարբառային մի քանի համանիշ միավորներ՝ միաժամանակ փաստելով, որ շարահյուսական միավորների կապակցության ամենամեծ տիրույթը շարահարությունն է ընդգրկում):

117. Մարգարյան Լ., **Ռուս-ղարաբաղյան փոխհարաբերությունները Արցախի բանահյուսության մեջ**, «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2011, N1, էջ 130-136

(Նշելով, որ ռուս ժողովրդի հանդեպ արցախցու ունեցած հարգանքն ու ազնիվ նվիրումը լուսավոր էջերով են գրանցվել Արցախի պատմության, մասամբ՝ բանահյուսության մեջ՝ հեղինակը ներկայացնում է որոշ ավանդություններ ու խաղիկներ, որոնցում արտահայտված են ռուս-ղարաբադյան փոխհարաբերությունները: Անդրադարձ է կատարվում նաև Արցախի եւ ռուս բանահյուսության որոշ նմուշների թեմատիկ ընդհանրություններին, որոնք ամենից առաջ պայմանավորված են Նյուֆի ընկալման նույնականությամբ: Հոդվածը տպագրվել է նաև ռուսերենով. «**Русско-карабахские отношения в фольклоре Арцаха**» /«*Центр системных региональных исследований и прогнозирования ИПКК ЮФУ и ИСПИ РАН, Россия и армяне Нагорного Карабаха в прошлом и настоящем, Южно-российское обозрение*», Санкт-Петербург, 2011, N 67, стр. 190-197/):

118. Մարկոսյան Ս., **Արցախյան անեկդոտներ**, Երեւան, 2004, 80 էջ

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի՝ Արցախի տարբեր բնակավայրերից, ինչպես նաև Արցախից դուրս բնակվող արցախցիներից գրական հայերենով կամ Ղարաբադի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած զվարճախոսություններ, սրամիտ զրույցներ, անեկդոտներ, որոնք հիմնականում երկրամասի բնակիչների կյանքում տեղի ունեցած իրական դեպքեր են, իսկ որոշները՝ ընդհանուր տարածում ունեցող անեկդոտներ: Նյութերն ամփոփված են երեք բաժիններում՝ «*Սրամտում է ժողովորդը*» (55 միավոր), «*Սրամտում են Պուդին, Կուքին, Ղեվանդն ու Արտաշը*» (97 միավոր), «*Այստեղից, այնտեղից...*» (115 միավոր): Առաջաբանում («*Հեղինակի կողմից*») (էջ 3) տրվում են ժողովածուի ստեղծման հանգամանքները):

119. Մելիք-Շահնազարեանց Կ., **Առակներ Ղարաբադի բարբառով**, «*Հանդես ամսօրեայ*», Վիեննա, 1930, թիւ 5-6, էջ 357-362

(Չնայած վերնագրին՝ ընդգրկում է հեղինակի՝ Ղարաբադի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած արցախյան առած-ասացվածքներ (105 միավոր): Նյութի սկզբում (էջ 357-359) համառոտ տեղեկություններ են տրվում Ղարաբադի բարբառի հնչյունաքերականական որոշ օրինաչափությունների (հնչյունախոսություն, *օ, ո, այ*-ի հնչյունափոխություն, գոյականների հոլովում, բայերի խոնարհում) մասին):

120. Մելիք-Շահնազարեանց Կ., **Ջուռնա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908, 500 էջ**

(Ղարաբադի բարբառով գրված (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ, որոշ դեպքերում՝ գրականացված) ֆելիետոնների ժողովածու, որն ընդգրկում է հեղինակի՝ առանձին գրքերով եւ պարբերականներում տարբեր տարիների տպագրած ֆելիետոնները, որոնց մեջ ընդգրկված են նաև բանահյուսական տարբեր ժանրերի նյութեր՝ առակներ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնակներ, երդումներ եւ: Երկրորդ գրքի

վերջում կան նաեւ քերականական ծանոթություններ ու դժվարիմաց բառերի բացատրություններ: Ժողովածուն 1900-1901թթ. ավելի համառոտ երեք հատորով տպագրվել էր Բաքվում: Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը հեղինակ է նաեւ Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ, որոշ դեպքերում՝ գրականացված) գրած երգիծական մանրապատումների այլ ժողովածուների՝ **«Ղըլըցէ կնանց պընը-փեշակը»** /Թիֆլիս, 1882, 36 էջ/, **«Շոշվա դալին խերն ու շառը»** /Թիֆլիս, 1887, 56 էջ/):

121. Մելիք-Շահնազարեանց Կ., **Հանելուկներ Ղարաբաղի լեզուով**, **«Հանդէս ամսօրեայ»**, Վիեննա, 1930, թիւ 9-10, էջ 596-601

(Ընդգրկում է 1874-1920թթ. հեղինակի՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած արցախյան հանելուկներ (143 միավոր)՝ իրենց պատասխաններով):

122. Մելիք-Շահնազարեանց Կ., **Ղարաբաղի բարբերեն**, **«Հանդէս ամսօրեայ»**, Վիեննա, 1928, թիւ 11, 12, էջ 552-559

(Ընդգրկում է Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված արցախյան օրհնանքներ (106 միավոր) եւ անեծքներ (159 միավոր)՝ տողատակին տրված որոշ բառերի բացատրություններով: Ըստ վերջում ներկայացված ծանոթագրության՝ դրանք հավաքել է Ալեքսանդր Կարապետյան Մելիք-Շահնազարյան Շուշեցին, որի մասին հաղորդվում են նաեւ կենսագրական որոշ տեղեկություններ):

123. Միքայելյան Դ., **Կատակում է Չոփուռ Անդոնը**, **«ԼՂ Հանրապետություն»**, Ստեփանակերտ, 1998, 20 հունվարի

(Ընդգրկում է Ստեփանակերտում 20-րդ դարի 2-րդ կեսին մեծ հեղինակություն վայելող առակախոս վարորդ Անդոն Սարգսյանի (Չոփուռ Անդոն) անվան հետ կապված 4 զվարճախոսություն, որ գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառել է հեղինակը):

124. Նահապետյան Ռ., **Արմեն Սարգսյան. «Արցախի բանահյուսությունը»**, **Երեւան, 2015, 747 էջ (գրախոսություն)**, **«Կրթությունը եւ գիտությունը Արցախում»**, **Երեւան, 2017, N 3-4, էջ 135-137**

(Համառոտ անդրադառնալով 19-20-րդ դարերում Արցախի բանահյուսական նյութերի գրառմանը եւ արժեւորելով համապատասխան բանահավաքների անձնուրաց աշխատանքը՝ գրախոսը դրանց համեմատությամբ քննում է Ա. Սարգսյանի ժողովածուն՝ վերհանելով նրա առանձնահատկություններն ու առավելությունները՝ բանահյուսական բազմաժանր (հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զվարճախոսություններ, խաղիկներ, չափածո այլ ստեղծագործություններ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ եւ բարեմաղթանքներ, հանելուկներ, մականուններ, շուտա-

սելուկներ, հանգախաղեր) վիթխարի նյութի (8078 բնագիր) ընդգրկում, 163 խոսվածքներով գրառված նյութերում բարբառային գիտական տառադարձության եւ խոսվածների յուրահատկությունների ճշգրիտ պահպանում, նյութերի գիտական համակարգում, ներածության մեջ արցախահայության վերաբերյալ գիտապատմական, գիտատեղեկատվական հարուստ տվյալների հաղորդում եւ: Առանձնակի նշանակություն է տրվում նաեւ ժողովածուի ազգագրական արժեքին, կիրառական լայնահուն գործառույթներին: Արդյունքում ժողովածուն գնահատվում է որպես նոր ձեռքբերում հայ մշակույթի, մասնավորաբար՝ հայ բանագիտության բնագավառում:

125. *Սմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (Կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978, 224 էջ*

(Ժողովածուն ներառում է 1960 թվականից Ստեփանակերտում գործող ժողովրդական ստեղծագործության մարզային տան աշխատակիցների կողմից Արցախի տարբեր բնակավայրերից գրառված բանահյուսական նյութերի մի մասը: Համառոտ նախաբանում՝ «Կազմողների կողմից» (էջ 3-4), տեղեկություններ են հաղորդվում Արցախի բանահյուսության գրառման պատմության եւ կենցաղավարող ժանրատեսակների մասին: Բուն ժողովածուն առանձին բաժիններում ընդգրկում է հեքիաթներ (22 միավոր), առակներ եւ գրույցներ (57 միավոր), ավանդություններ (24 միավոր), հանելուկներ (71 միավոր), առած-ասացվածքներ (456 միավոր), ժողովրդական խաղիկներ (192 միավոր): Ժողովածուին կցված է նաեւ «Բառարան» (էջ 207-219), որտեղ տրվում են Ղարաբաղի բարբառում գործածվող հարյուրավոր բառերի բացատրություններ):

126. Շերմագանեան Գ., *Ասրի բէգ եւ Գիքի*, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, թիւ ԺԲ, էջ 896-930, 1863, թիւ Բ, էջ 113-137

(Դրամա, որտեղ ընդգծվում է բռնակալության դեմ պայքարի գաղափարը: Հեղինակը համարում է Ղարաբաղի բարբառով (որը անվանում է դարաբաղցոց լեզու) գրված: Իրականում դրամայի լեզուն հեռու է Ղարաբաղի բարբառից, չնայած ընդգրկում է բարբառին հատուկ բազմաթիվ բառեր ու բառաձեւեր: Առաջին մասի ներածական մասում (էջ 896-900) ներկայացնելով Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկություններ՝ Շերմագանյանն այն համարում է «*քաջ տղամարդի եւ պատերազմական լեզու*»: Դրամայում գործածված դժվարհասկանալի բազմաթիվ (հիմնականում՝ բարբառային եւ փոխառյալ) բառեր համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով):

127. Շիրմագանեան Գ., *Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած*, Թիֆլիս, 1878, 198 էջ

(Ազգագրական այլ շրջաններից գրառված նյութերի հետ առաջին անգամ ներկայացվում են նաեւ 18-րդ դարի երկրորդ կեսի-19-րդ դարի սկզբի Արցախի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու անվան շուրջ ստեղծված առակ-զվարճարճախոսություններ (15 պատում)՝ հիմնականում գրված գրական-խոսակցական հայերենով (Ղարաբաղի բարբառի որոշ բառերի ու արտահայտությունների (տառադարձության խախտումներով) գործածությամբ):

128. Պետրոսյան Մ., *Արցախյան առածանի, ասածանի. Ա կօժ, քտ ասիմ, ա կօլա, տո՛ւ սկաց, Ստեփանակերտ, 1999, 68 էջ*

(Ժողովածուում առանձին բաժիններով այբբենական կարգով ներկայացվում են հեղինակի հավաքած արցախյան առած-ասսացվածքները (էջ 3-38), պատկերավոր արտահայտությունները (էջ 39-58), անեծքները (էջ 59-62) եւ օրհնանքները (էջ 63-66): Նյութերը գրառված են Ղարաբաղի բարբառով՝ տառադարձության մասնակի խախտումներով):

129. «*Պըլը Պուղի*», *Ստեփանակերտ, 1991-2014*

(Երգիծական նկարագարող հանդես: Հրատարակվել է տարբեր պարբերականությամբ եւ ծավալով: Խմբագրել են Վարդան Հակոբյանը, Հրաչյա Բեգլարյանը, Դավիթ Միքայելյանը, Կիմ Գաբրիելյանը: Հանդեսում Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով տպագրվել են արցախյան բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր, հոդվածներ, ակնարկներ, մանրապատումներ, բանաստեղծություններ, թարգմանություններ, որոնք հիմնականում ունեին երգիծական բնույթ: Մեծ տեղ է հատկացվել հատկապես Պըլը-Պուղուն եւ արցախցի այլ առակախոսների անվան շուրջ ստեղծված զվարճապատումներին):

130. Պողոսյան Ա., *Հադրութի բարբառը, Երեւան, 1965, 372 էջ*

(Ներկայացվում է Արցախի Հադրութի շրջանի բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Հադրութի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) համաժամանակյա հանգամանակից քննությունը: Հինգերորդ՝ հավելվածային մասում (էջ 333-366) Հադրութի շրջանի տասնյակ բնակավայրերի խոսվածքներով ներկայացվում են բարբառային, այդ թվում՝ բանահյուսական նմուշներ):

131. Սառաջյան Զ., *Ժողովրդական բանահյուսությունը ազգային արժեհամակարգում*, «*Երիցի լույս*», *Ստեփանակերտ, 2016, թիվ 03 (172)*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «*Արցախի բանահյուսությունը*» (Երեւան, 2015, 748 էջ) ժողովածուի մասին: Ժողովածուն համարելով արցախցու կենսագրությունը, բնավորությունը, մտածողությունը ճանաչելու լավագույն գիրք-ուղեցույց՝ գրախոսը ներկայացնում է նրա կառուցվածքը եւ արժանիքները՝ հարյուրավոր բանասացներից գրառված վիպական, քնարական, ասույթաբանական բազմաժանր հարուստ նյութի

(8078 միավոր) ընդգրկում, բարբառային եւ փոխառյալ բառերի ու դարձվածների բացատրական բառարանի, ծանոթագրությունների, այլ ցանկերի առկայություն, բարբառային տառադարձության խստորեն պահպանում եւ: Առանձնակի կարելովում է ժողովածուի ներածությունը, որտեղ առանձին ենթաբաժիններով հեղինակը ներկայացրել է Արցախի համառոտ պատմությունը, բանահյուսության հավաքման ու հրատարակման պատմությունը, գրառված նյութերի բանագիտական վերլուծությունը եւ Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունները):

132. Սարգսեան Ա., **Առած-ասացուածքները, անէծք-օրինանքները եւ հանելուկները Արցախի բանահյուսութեան մէջ**, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուս, 2014, էջ 389-402

(Քննության են առնվում առած-ասացվածքների, անէծք-օրինանքների, հանելուկների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, արցախյան բանաձեւային բանահյուսության այդ ժանրերի ստեղծագործություններում արծարծված թեմաներն ու երեւոյթները: Առանձնակի ուշադրություն է դարձվում արցախցու՝ օտար զավթիչների հետ ունեցած հարաբերությունները, պանդխտությունը, լավատեսությունը, հայրենի բնաշխարհը, կենցաղը, առօրյան եւ հայացքները, կենցաղային հարաբերությունները, մարդկային բնութագրումները, Աստծո կերպարը արտացոլող առած-ասացվածքներին, մարմնական պատիժներ, հիվանդության եւ ցավի պատիժներ, ունեզրկման եւ աղքատացման պատիժներ, բարոյական-մարմնական պատիժներ, հոգեկան պատիժներ ներկայացնող անէծքներին, ապահովության եւ պահպանության գաղափարներ արտահայտող օրինանքներին, այլաբանության տարբեր տեսակներ եւ տարբեր բնագավառներ ներկայացնող հանելուկներին: Բոլոր դէպքերի համար հեղինակը իր «**Արցախի բանաձեւային բանահյուսությունը**» (Ստեփանակերտ, 2009) ժողովածուից կատարում է բնագրային մեջբերումներ: Թեմային որոշ փոփոխություններով (նաեւ ընդգրկելով գյուղերի մականունների քննությունը) հեղինակն անդրադարձել է նաեւ «**Բանաձեւային բանահյուսության որոշ ժանրերի առանձնահատկությունները Արցախի բանահյուսության մէջ**» /«ԱրՊՀ հայագիտական հանդէս» / Ստեփանակերտ, 2011, N2, էջ 3-15/ եւ «**Արցախի բանաձեւային բանահյուսության ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները**» /«Գիտական հոդվածներ. Բանասիրություն. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ», Վանաձոր, 2011, էջ 24-36/ հոդվածներում):

133. Սարգսյան Ա., **Անէծքի եւ օրինանքի ժանրը արցախահայ բանահյուսության մէջ**, «Նարեկ», Ստեփանակերտ, 2003, N2, էջ 30-31

(Քննության են առնվում արցախյան անէծքների եւ օրինանքների տե-

սակները, ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվում նրանցում արտահայտված գաղափարներին: Անհրաժեշտության դեպքում բերվում են բնագրային օրինակներ):

134. Սարգսյան Ա., **Առած-ասացվածքները Արցախի բանահյուսության մեջ**, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ եւ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011 թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Երեւան, 2011, էջ 559-561

(Համառոտ ներկայացնելով առաձների եւ ասացվածքների ժանրային ու իմաստային առանձնահատկությունները եւ իր «**Արցախի բանածեային բանահյուսությունը**» (Ստեփանակերտ, 2009) ժողովածուից մեջբերելով համապատասխան բնօրինակներ՝ հեղինակը վեր է հանում դրանցում արտահայտված բազմաթիվ ու բազմազան երեւոյթները: Առանձին խմբերով են ներկայացվում հայ ժողովրդի արցախյան հատվածի ապրած միջավայրը, բնավորության գծերը, կենսական պայմանները, սոցիալ-քաղաքական կյանքը, պանդխտությունը, բնաշխարհը, բուսական եւ կենդանական աշխարհը, սովորույթները, կենցաղային հարաբերությունները, մարդու անձնական ու հասարակական հատկությունները, բնավորությունը, խառնվածքը, աշխատանքի ու հասարակության՝ ժողովրդի մասին եղած հայացքները են արտացոլող առած-ասացվածքները):

135. Սարգսյան Ա., **Արցախահայ բանահյուսության գրառման պատմություն**, «Նարեկ», Ստեփանակերտ, 2002, N 2, էջ 28-30

(Ցավով նշելով, որ ժամանակին գրի չառնվելու պատճառով Արցախի՝ հազարամյակների ընթացքում ստեղծված հարուստ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ հեղինակը ներկայացնում է 1860 թվականից մինչեւ 20-րդ դարի վերջը գրառված եւ հրատարակված նյութերի ու ժողովածուների ընդհանուր պատկերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում Ալեքսանդր, Առաքել եւ Գրիգոր Բահաթրյանների, Տիգրան Նավասարդյանի, Միքայել Տեր-Հովհաննիսյանի, Գալուստ Շերմազանյանի, Մակար Բարխուդարյանի, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի, Երվանդ Լալայանի, Խաչիկ եւ Արամ Դադյանների, Սարգիս Իսրայելյանի, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի, Միքայել Առաքելյանի, Ալվարդ եւ Բարխուդար Ղազիյանների, Լեւոն Հարությունյանի բանահավաքչական գործունեությանը: Միաժամանակ տեղեկացնելով, որ նման գործունեություն է ծավալել Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, հեղինակը, հանդիսանալով այդ ֆակուլտետի դեկանը, խնդրանքով դիմում է Արցախի ուսուցիչներին, մտավորականության մյուս ներկայացուցիչներին, նախանձախնդիր անձանց՝ գրառել ժողովրդական պահպանված ստեղծագործությունները եւ ուղարկել իրեն):

136. Սարգսյան Ա., *Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը եւ բարբառը «Ազգագրական հանդեսի» էջերում, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 59-66*

(Յեղիմակը քննության է առնում «Ազգագրական հանդեսի» էջերում տպագրված Արցախի ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառին վերաբերող ուսումնասիրություններն ու նյութերը: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում հանդեսի Բ եւ Գ գրքերում հրատարակված Ե. Լալայանի «Վարանդա» ժողովածուում ընդգրկված բանահյուսական սմուշներին եւ XVII, XVIII, XIX գրքերում հրատարակված Ա. Ղադյանի «Վարանդայի բանաւոր գրականութիւնից» ժողովածուին, որտեղ ներկայացված են Արամ Ղադյանի՝ 1903 թ. եւ Նրա եղբոր՝ Նշանավոր ժողովրդագետ Խաչիկ Ղադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաեւ Դիզակի եւ Խաչենի գյուղերից գրառած ժողովրդական վիճակի երգեր՝ ջանգյուլումներ):

137. Սարգսյան Ա., *Արցախի բանահյուսությունը, Երեւան, 2015, 748 էջ* (Ժողովածուն բաղկացած է մի քանի բաժնից: Յամառոտ առաջաբանում՝ «Երկու խոսք» (էջ 5-6), տեղեկություններ են հաղորդվում ժողովածուի կառուցվածքի մասին: Ընդարձակ «Ներածություն» բաժնում (էջ 7-75) առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Արցախի համառոտ պատմությունը, Արցախի բանահյուսության հավաքման, հրատարակման պատմությունն ու ժողովածուի նյութերի բանագիտական վերլուծությունը, Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունները: Բուն ժողովածուն, որն ընդգրկում է հեղինակի կողմից 1992-2014թթ. Արցախի 163 բնակավայրերի հարյուրավոր բանասացներից գրառած բանահյուսական 8078 բնագիր, բաղկացած է երեք մասից, որոնցից յուրաքանչյուրը առանձին ենթաբաժիններում ներառում է համապատասխան ժանրերի նյութերը. *Վիպական բանահյուսություն*՝ 1.Յեքիաթներ (22 միավոր), 2.Ավանդություններ (266 միավոր), 3.Առակներ (86 միավոր), 4.Զվարճախոսություններ (592 միավոր), *Քնարական բանահյուսություն*՝ 5.Խաղիկներ (237 միավոր), 6.Չափածո այլ ստեղծագործություններ (21 միավոր), *Ասույթաբանական բանահյուսություն*՝ 7.Առած-ասացվածքներ (3388 միավոր), 8.Անեծքներ (709 միավոր), 9.Օրինանքներ եւ բարեմաղթանքներ (369 միավոր), 10.Յանելուկներ (734 միավոր), 11.Գյուղերի եւ քաղաքների մականուններ (119 միավոր), 12.Մարդկանց մականուններ (1307 միավոր), 13.Շուտասելուկներ (24 միավոր), 14.Յանգախաղեր (204 միավոր): Բոլոր նյութերը բերվում են առանց բնագրերի փոփոխության՝ բարբառային տառադարձության եւ յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների խիստ պահպանմամբ: Վիպական եւ քնարական բանահյուսության ժանրերի նյութերը դասավորված են ըստ խոսվածքների աշխարհագրական դիրքի՝ հարավից հյուսիս հաջորդականությամբ, իսկ

ասույթաբանական բանահյուսության ժանրերի նյութերը՝ այբբենական հերթականությամբ: «*Ծանոթագրություններ*» բաժնում (էջ 634-682) աղյուսակի ձևով տրվում են վիպական եւ քնարական բանահյուսության բոլոր բնագրերի համարները, վերնագրերը, բանասացի անուն-ազգանունը, ծննդավայրն ու ծննդյան թիվը, նյութի գրառման վայրն ու տարեթիվը: «*Բառարան*» բաժնում (էջ 683-717) ընդգրկված են ժողովածուի մեջ գործածված դժվար հասկանալի (հիմնականում բարբառային եւ փոխառյալ) շուրջ 3000 բառ ու դարձված՝ իրենց բացատրություններով: Ժողովածուին կցված են նաեւ անձնանունների (էջ 718-725), տեղանունների (էջ 726-732), նյութերն ըստ Ղարաբաղի բարբառի խոսվածքների ներկայացնող (էջ 733-737), Արցախի բանահյուսությանը լիովին կամ մասնակիորեն առնչվող տպագիր ու ձեռագիր աղբյուրների (էջ 738-743) ցանկեր, ռուսերեն (էջ 744) եւ անգլերեն (էջ 745) լեզուներով ամփոփումներ):

138. Սարգսյան Ա., *Արցախի բանաձեւային բանահյուսությունը, Ստեփանակերտ, 2009, 160 էջ*

(Ժողովածուի առանձին բաժիններում՝ «*Առած-ասացվածքներ*» (էջ 13-105), «*Անեծքներ*» (էջ 106-111), «*Օրհնանքներ եւ բարեմաղթություններ*» (էջ 112-115), «*Հանելուկներ*» (էջ 116-150), «*Ղարաբաղի գյուղերի մականունները*» (էջ 151-158), այբբենական կարգով ընդգրկված են հեղինակի՝ Արցախի Հանրապետության տասնյակ բնակավայրերից հավաքած բանաձեւային բանահյուսության համապատասխան ժանրերի բազմաթիվ նմուշներ: Նյութերը ներկայացվում են Ղարաբաղի բարբառով՝ տառադարձության խիստ պահպանմամբ: Ընդարձակ «*Առաջաբանում*» (էջ 3-12) քննության են առնվում դրանց ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, տեսակները, արտահայտած գաղափարները եւն: Նշված բոլոր բնօրինակները ներառված են նաեւ հեղինակի «*Արցախի բանահյուսությունը*» /**Երեւան, 2015**/ բազմաժանր ժողովածուի մեջ):

139. Սարգսյան Ա., *Արցախյան առակներ, Ստեփանակերտ, 2011, 96 էջ*

(Ժողովածուն ընդգրկում է հեղինակի՝ 1992-2010 թվականներին Արցախի Հանրապետության Հաղրուֆի, Մարտունու, Մարտակերտի, Շահումյանի, Ասկերանի, Շուշու շրջանների տասնյակ բնակավայրերից հավաքած 86 առակ: Նյութերը խմբավորված են ըստ համապատասխան շրջանների եւ բնակավայրերի: Յուրաքանչյուր բնակավայրից գրառված նյութ ներկայացվում է տվյալ խոսվածքով՝ տառադարձության խիստ պահպանմամբ: Ներածական («*Երկու խոսք*») մասում (էջ 3-4) տրվում են ժողովածուի ստեղծման ու կառուցվածքի եւ գրական հայերենում բացակայող, սակայն Ղարաբաղի բարբառին հատուկ հնչյունների մասին պարզաբանումներ: Ժողովածուին կցված են նաեւ բանասացների վերաբերյալ «*Ծանոթագրություններ*» (էջ 80-85) ու դժվարհասկանալի (հիմնականում փոխառ-

յալ ու բարբառային) բառերի բացատրական «*Բառարան*» (էջ 86-91): Նշված բոլոր առակները ներառված են նաեւ հեղինակի «*Արցախի բանահյուսությունը*» /*Երեւան, 2015*/ բազմաժանր ժողովածուի մեջ):

140. Սարգսյան Ա., *Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, 112 էջ*

(Ժողովածուի առանձին բաժիններում՝ «*Երկնային մարմիններ եւ երեւոյթներ*» (էջ 15-16), «*Գյուղեր*» (էջ 17-35), «*Լեռներ, բլուրներ, քարեր, ձորեր, դաշտեր, կամուրջներ, տեղամասեր, ճանապարհներ*» (էջ 36-47), «*Վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, գերեզմաններ, սրբավայրեր*» (էջ 48-55), «*Աղբյուրներ, լճեր, գետեր*» (էջ 56-61), «*Բույսեր եւ կենդանիներ*» (էջ 62-74), «*Ռեմքեր, տոհմեր, գերդաստաններ*» (էջ 75-81), «*Առած- ասացվածքներ, անեծքներ, դարձվածքներ, մականուններ*» (էջ 82-86), «*Այլ եւ այլ*» (էջ 87-89), ընդգրկված են հեղինակի՝ 1992-2006 թվականների Արցախի Հանրապետության Հաղորդի, Սարտունու, Սարտակերտի, Շահումյանի, Ասկերանի, Շուշու շրջանների 80 բնակավայրերից տեղական խոսվածքներով տառադարձության խիստ պահպանմամբ գրառած 266 ավանդություն եւ ավանդագրույց՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը առաջին անգամ են տպագրվում: Տարբեր բնակավայրերի հետ կապված նմուշները դասավորված են ըստ այդ բնակավայրերի աշխարհագրական դիրքի՝ հարավից հյուսիս հաջորդականությամբ: Ժողովածուն ունի նաեւ «*Հեղինակի կողմից*» ներածական մաս (էջ 3), որտեղ տրվում են ժողովածուի ստեղծման ու կառուցվածքի եւ գրական հայերենում բացակայող, սակայն Ղարաբաղի բարբառին հատուկ հնչյունների մասին պարզաբանումներ, ընդարձակ «*Ներածություն*» (էջ 4-14), որտեղ քննության են առնվում արցախյան ավանդությունների գրառման եւ հրատարակման համառոտ պատմությունը, աղերսները բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործությունների հետ, տեսակները, ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, արտահայտած թեմաներն ու գաղափարները եւն, «*Ծանոթագրություններ*», որտեղ տրվում են ավանդախոսների կենսագրական տվյալները, հարկ եղած դեպքում նաեւ՝ տեղեկություններ տվյալ ավանդության՝ այլ հեղինակի կողմից գրառվելու մասին: Նշված բոլոր ավանդություններն ու ավանդագրույցները ներառված են նաեւ հեղինակի «*Արցախի բանահյուսությունը*» /*Երեւան, 2015*/ բազմաժանր ժողովածուի մեջ):

141. Սարգսյան Ա., *Արցախյան ավանդությունների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները*, «ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 156-173

(Համառոտ անդրադառնալով արցախյան ավանդությունների գրառման եւ հրատարակման պատմությանը, դրանց ժանրային առանձնահատկություններին եւ ժողովրդական բանահյուսության այլ, հատկապես՝ էպի-

կական ժանրի մյուս ստեղծագործությունների հետ ունեցած աղերսներին՝ հեղինակը, հիմք ընդունելով տարբեր աղբյուրներում ընդգրկված նյութերը, դրանք բաժանում է երեք հիմնական խմբի՝ ստուգաբանական, բացատրական, վարքաբանական: Առանձին ենթաբաժիններով քննության են ենթարկվում Արցախի լեռների, սրբավայրերի, գյուղերի, աղբյուրների, տարբեր մանրատեղանունների, բույսերի ու կենդանիների, երկնային լուսատուների, նշանավոր մարդկանց եւ մասին եղած ստեղծագործությունները, որոնցում արտահայտված են բազմաթիվ ու բազմազան դեպքեր, երեւոյթներ, հարաբերություններ եւ: Բացի ազգային ավանդություններից, որոնք գերակշռում են քանակով եւ պատմական ու ճանաչողական արժեքով, ուշադրություն է դարձվում նաեւ միջազգային եւ եկամուտ ստեղծագործություններին):

142. Սարգսյան Ա., **Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014, 172 էջ**

(Ժողովածուի առանձին բաժիններում՝ «Պըլը-Պուղուն ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 5-25), «Յնւղրիթոցուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 26-53), «Մարտունէցուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 54-96), «Մարտակերտուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 97-124), «Սսկաննսցուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 125-142), «Ըստեփանակերտուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (143-148), «Շուշվեցուց ազնլիլ-մնզնլիլ պիներան» (էջ 149-151), ընդգրկված են հեղինակի՝ երկար տարիների ընթացքում Արցախի Յանրապետության Յարդութի, Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի, Շուշու շրջանների տասնյակ բնակավայրերի եւ Ստեփանակերտ քաղաքի բազմաթիվ բնակիչներից տեղական խոսվածքներով տառադարձության խիստ պահպանմամբ գրառած 592 զվարճախոսություն: Տարբեր բնակավայրերից հավաքված նմուշները դասավորված են ըստ այդ բնակավայրերի աշխարհագրական դիրքի՝ հարավից հյուսիս հաջորդականությամբ: Համառոտ առաջաբանում՝ «Երկու խոսք» (էջ 3-4), ներկայացվում են ժողովածուի կառուցվածքը եւ գրական հայերենում բացակայող, սակայն Ղարաբաղի բարբառին հատուկ հնչյունների մասին պարզաբանումներ: Ժողովածուի վերջում կցված են բանասացների կենսագրական տվյալները ամփոփող ծանոթագրությունների աղյուսակ (էջ 152-161) եւ բարբառային, փոխառյալ ու դժվար հասկանալի բառերի բացատրական բառարան (էջ 162-170): Նշված զվարճախոսությունները ներառված են նաեւ հեղինակի «Արցախի բանահյուսությունը» /Երեւան, 2015/ բազմաժանր ժողովածուի մեջ):

143. Սարգսյան Ա., **Արցախյան ժողովրդական խաղիկները եւ նրանց լեզվական արվեստը**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2003, N1-2, էջ 152-158

(Յամառոտ ներկայացնելով արցախյան ժողովրդական խաղիկների (ջանգլույումներ) ժանրային առանձնահատկություններն ու գրառման եւ հրատարակման պատմությունը՝ հեղինակն առանձին ենթաբաժիններով քննում է դրանցում արծարծված թեմաները՝ սեր, հայրենիք, պանդխտություն, բնություն, սոցիալական խնդիրներ, աշխատանք եւն: Բոլոր դեպքերի համար մեջբերվում են բնագրային օրինակներ: Ըստ հոդվածագրի՝ արցախյան ժողովրդական խաղիկները գերազանցապես սիրո երգեր են, որոնք արտահայտում են սիրային բազմազան մոտիվներ: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաեւ խաղիկներում գործածված լեզվատարտահայտչական միջոցներին՝ մակդիրներ, համեմատություններ, դարձվածներ, անեծքներ, օրինանքներ, առած-ասացվածքներ, անդրադարձ կատարվում տաղաչափությանը, հանգավորմանը եւ աղավաղումներին):

144. Սարգսյան Ա., **Արցախյան հանելուկների ժանրային եւ իմաստային առանձնահատկություններն ու պատկերավորման միջոցները**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», *Ստեփանակերտ, 2010, N 1, էջ 134-139*

(Յամառոտ ներկայացնելով արցախյան հանելուկների գրառման եւ հրատարակման պատմությունն ու ժանրային առանձնահատկությունները՝ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է բանահյուսական այդ ստեղծագործություններում արտահայտված թեմաներին, նրանց գաղափարական բովանդակությանը, դրանցում գործածված պատկերավորման միջոցներին՝ անհրաժեշտության դեպքում կատարելով բնագրային մեջբերումներ):

145. Սարգսյան Ա., **Արցախյան հանելուկներ**, *Ստեփանակերտ, 2002, 92 էջ*

(Ժողովածուն այբբենական կարգով ընդգրկում է հեղինակի՝ Արցախի Յանրապետության տասնյակ բնակավայրերից հավաքած 502 հանելուկ՝ իրենց պատասխաններով: Նյութերը ներկայացվում են Ղարաբաղի բարբառով՝ տառադարձության խիստ պահպանմամբ: Ընդարձակ «Առաջաբանում» (էջ 3-24) քննության են առնվում արցախյան հանելուկների ժանրային եւ իմաստային առանձնահատկությունները, գրառման եւ հրատարակման համառոտ պատմությունը, տեսակները, գեղարվեստական ու տաղաչափական յուրահատկությունները եւն: Նշված բոլոր հանելուկները ներառված են նաեւ հեղինակի «Արցախի բանաձեւային բանահյուսությունը» /*Ստեփանակերտ, 2009/* եւ «Արցախի բանահյուսությունը» /*Երեւան, 2015/* բազմաժանր ժողովածուների մեջ):

146. Սարգսյան Ա., **Պանդխտության թեման արցախյան ժողովրդական խաղիկներում**, «Յայաստանում Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված «Գիտության եւ մշակույթի հիմնահարցերն Արցախում» հանրապետական գիտաժողովի նյութեր (17-18 նոյեմբերի, 2000թ.)», *Ստեփանակերտ, 2000, էջ 91-92*

(Նշելով, որ արցախյան ժողովրդական խաղիկները գերազանցապես սիրո երգեր են, սակայն քիչ չեն նաեւ պանդխտության թեմային նվիրված քառատողերը՝ հեղինակը վեր է հանում դրանցում արտահայտված պանդխտության տարբեր մոտիվներն ու այդ խաղիկների առանձնահատկությունները: Բոլոր դեպքերի համար մեջբերվում են տարբեր աղբյուրներից քաղված օրինակներ):

147. Սարգսյան Ա., Սարգսյան Լ., **Արցախի ազգագրությունը Երվանդ Լալայանի «Վարանդա» ուսումնասիրության մեջ**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2018, էջ 347-352

(Յեղիհակները քննության են առնում «Ազգագրական հանդեսի» Բ Եւ Գ գրքերում հրատարակված Ե. Լալայանի «Վարանդա» ժողովածուն, որտեղ ներկայացված է Արցախի Վարանդա գավառի ազգագրությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաեւ ժողովածուի տարբեր բաժիններում ազգագրականի հետ միասին ընդգրկված բանահյուսական ստեղծագործություններին):

148. Սարյան Ա., **«Նշխարներ Արցախի բանահյուսության» (կազմող Լ. Յարությունյան), Երեւանի համալս. հրատ., Երեւան, 1991, 400 էջ, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1993, N 2, էջ 193-197**

(Կարեւորելով բանահյուսական նյութերի հավաքման ու հրատարակման եւ կորստից փրկելու ու սերունդներին պահ տալու գործը՝ գրախոսն արժեւորում է Լ. Յարությունյանի կազմած ժողովածուն: Որպես արժանիքներ են ներկայացվում՝ ներածության մեջ գրառված հարուստ նյութի վերլուծությունը, Ղարաբաղի բարբառի առանձնահատկությունների պահպանումը, բազմաժանր նյութերի (հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, գվարճախոսություններ, երգեր, անեծքներ, օրինանքներ, առած-ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, երդումներ, սպառնալիքներ են) ընդգրկումը, բառարանի կցումը են: Միաժամանակ բարձր գնահատելով գրքում ներկայացված ազգագրական նյութերը՝ գրախոսը բացթողում է համարում այն, որ հեղինակը դրանք որոշակի սկզբունքով չի սահմանազատել բանահյուսականից եւ նյութերը չի համակարգել ըստ ժանրային պատկանելության: Նշվում է նաեւ, որ աշխատանքն ավելի արժեքավոր կլիներ, եթե «Բառարանը» մանրակրկիտ ձեւով անդրադառնար Արցախի բարբառի դժվարիմաց բառերին):

149. Սվազյան Վ., **Արցախյան բանահյուսությունն իմ ժողովրդագիտական գործունեության ոլորտում**, «Լեռնային Ղարաբաղի Յանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երեւան, 2007, էջ 474-487

(Տեղեկացնելով, որ հայ ժողովրդի արեւմտահայ հատվածի շրջանակներում ծավալած բանահավաքչական եւ բանագիտական 50-ամյա գործունեության ընթացքում Արցախն ու Նրա ժողովրդական մշակույթը նույնպէս գտնվել են իր մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում՝ հեղինակը հատկապէս ներկայացնում է 1964թ. Ռուսաստանի Կրասնոդար երկրամասի Պյատագորսկ քաղաքում բնակություն հաստատած արցախահայերից գրառած բանահյուսական տարբեր ժանրերի (հրաշապատում հեքիաթներ, իրապատում հեքիաթներ, առակներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ, օրհնանքներ, մանկական թոթովանքներ, խաղիկներ, սիրո երգեր, օրորոցայիններ, աշխատանքային երգեր, զինվորի երգեր, եղերերգեր, կատակերգեր, ծիսական երգեր, Նաեւ՝ հարսանեկան ծեսի նկարագրություն) նյութերը (ավելի քան 100 միավոր), անդրադառնում դրանցում արծարծված թեմաներին եւ գաղափարներին, կատարում մեջբերումներ: Նշվում է Նաեւ, որ արցախահայոց բանահյուսությունն իր արմատներով նույնական է Հայաստանի եւ Կիլիկիայի մշակութային ավանդներին, իսկ Պյատիգորսկում ռուսական միջավայրի ազդեցությունը 1960-ական թվականներից արդէն իսկ իրեն զգացնել է տվել գաղթական արցախահայերի բանավոր խոսքում):

150. Վարդանյան Ս., **Արմեն Սարգսյան. Արցախի բանահյուսությունը, Երեւան, Էդիթ Պրինտ, 2015, 748 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 2017, N1, էջ 238-241**

(Գրախոսն արժեւորում է ժողովածուն՝ այն իր սկզբնաղբյուրային կարեւորությամբ համարելով բացառիկ: Որպէս արժանիքներ են նշվում ներածության մեջ գիտապատմական, գիտատեղեկատվական հարուստ տվյալների, արցախահայոց բանահյուսական նյութերի գրառման պատմության ներկայացումը, ժողովածուի նյութերի ժանրային եւ իմաստային առանձնահատկությունների ու տարբեր ժանրատեսակների կենսունակության լուսաբանումը, գիտական տառադարձության պահպանմամբ Արցախի բնակավայրերի խոսվածքներով գրառած վիպական (հեքիաթներ, ավանդագրույցներ, առակներ, զվարճախոսություններ), քնարական (խաղիկներ, չափածո այլ ստեղծագործություններ) եւ ասույթային (առածասացվածքներ, անեծք-օրհնանքներ, շուտասելուկներ, հանգախաղեր, մականուններ եւն) բանահյուսության մեծածավալ նյութի (8078 միավոր) ընդգրկումն ու գիտական յուրատիպ սկզբունքներով համակարգումը եւն):

151. Վարդանյան Ս., **Բանահյուսական նյութերի կենցաղավարումը Շուշիի շրջանում (Ըստ 1970 թ. դաշտային նյութերի)**, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երեւան, 2007, էջ 351-359

(Անդրադառնալով Շուշի քաղաքից եւ Նրա շրջակա գյուղերից տարբեր

բանահավաքների՝ նախկինում հավաքած բանահյուսական նյութերին՝ հեղինակը դրանց համեմատությամբ ներկայացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված արշավախմբի (*դեկավար՝ պրոֆ. Վարդումյան*)՝ 1970թ. նույն շրջանի Քարինտակ, Եղցահող, Մեծ Ղարաղշլաղ, Քյոհնա շեն, Ենգիբար, Բերդաձոր գյուղերից գրառած բանահյուսական նյութերը: Ուսումնասիրության արդյունքում հոդվածագիրը պարզում է, որ ժողովրդագիտական ավանդույթներով հարուստ վերոհիշյալ շրջանը մասամբ է պահպանել իր բանահյուսական երբեմնի գունեղ նկարագիրը, հատկապես՝ քնարական ժանրը, որ գրեթե չի կենցաղավարում: Առանձնակի ուշադրություն է դարձվում պահպանված եզակի ծիսերգերի եւ դեռեւս կենցաղավարող հեքիաթների քննությանը, որոնք ժամանակի ընթացքում կրել են ծավալային ու բովանդակային փոփոխություններ: Արդյունքում հավաստվում է, որ Շուշիի շրջանում թեեւ ժամանակի ու տարածության մեջ ժողովրդական բազում արժեքներ մոռացության են մատնվել, սակայն բանահյուսական ավանդույթները իսպառ չեն կորցրել իրենց կենսունակությունը):

152. Վարդանյան Ս., *Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1971, N8, էջ 88-93*

(Համառոտ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի բանահյուսական նյութերի՝ տարբեր բանահավաքների կողմից հավաքման պատմությանը՝ հեղինակը ներկայացնում է 1967-1970թթ. Հադրութի, Սարտակերտի, Շուշու շրջանների բնակավայրերից իր գրառած հարուստ ու բազմաժանր ժողովրդական բանահյուսության մի շարք նմուշներ, հատկապես՝ երաշտի ժամանակ կատարվող «Գողի» կամ «Ճողի» ծիսային երգը, «Ալեյույայի» մի տարբերակը, վիճակահանման երկու երգ, մեկ սգերգ, որոշ անեծքներ, օրհնանքներ, զվարճախոսություններ, գրույցներ եւն: Ըստ հեղինակի՝ նշված ժամանակշրջանում Ղարաբաղի երբեմնի հարուստ բանահյուսությունից համեմատաբար կենսունակ են վիպական ժանրի ստեղծագործությունները՝ հեքիաթները, երգիծական գրույցները, զվարճախոսությունները, առած-ասացվածքները, օրհնանքները, անեծքները, պատմական ավանդությունները, սնահավատական գրույցները, մինչդեռ քնարական բանահյուսության մի քանի տեսակներ, հատկապես՝ սիրերգերը, պարերգերը, ծիսային երգերը, հորովելները, կամ չեն հիշվում, կամ էլ առանձին գյուղերում հիշում են միայն հին սերնդի ներկայացուցիչները):

153. Վարդանյան Ս., *Ժողովրդական բանահյուսության դրսևորումները Արցախյան ազատամարտում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006 թ., Ստեփանակերտ», Երեւան, 2006, էջ 151-152*

(Անդրադառնալով Արցախյան գոյամարտի տարիներին գրառված բանահյուսական նյութերին ու դրանցում արծարծված թեմաներին եւ գաղափարներին՝ հեղինակը ժողովրդական այդ ստեղծագործությունները համարում է գոյամարտի ժամանակաշրջանը վերակենդանացնող ու բնութագրող փաստավավերագրական ուշագրավ վկայություններ):

154. Վարդանյան Ս., **Պաշտամունքային տարրերը «Ալեյույայի» արցախյան տարբերակներում**, «Պատմաբանասիրական հանդես», 2002, N 2, էջ 148-156

(Անդրադառնալով Քրիստոսի ծնունդն ավետող ծիսական երգերի՝ «Ալեյույաների» ժանրային եւ իմաստային առանձնահատկություններին ու կատարման հանգամանքներին՝ հեղինակը ներկայացնում է Հաղորութի շրջանից Խաչիկ Դադյանի գրառած ու 1895թ. «Արարատ» հանդեսում տպագրած եւ իր կողմից 1967թ. նույն շրջանի Տումի գյուղից գրառված նմանատիպ երգերի համեմատական վերլուծությունը: Արդյունքում վեր են հանվում շուրջ տասնամյակների տարբերությամբ գրառված այդ տարբերակների սյուժետային ու գաղափարական մոտիվները, ինչպես նաեւ ծավալային ու բովանդակային փոփոխությունները, որոնք պայմանավորված են մի շարք առարկայական համգամանքներով: Ըստ հեղինակի՝ Խ. Դադյանի գրառումներին կից ծանոթագրություններից պարզվում է, որ այդ երգերը երգվել են բուն տոնածիսական արարողություններին զուգընթաց, եւ տոնի խորհրդավորությունն առանձնակի լիցք է հաղորդել մարդկանց, նպաստել ստեղծագործական գործընթացների վերելքին, մինչդեռ 1967թ. բնագիրը հաղորդելիս բանասացը չէր հիշում տոնի հետ կապված արարողությունները, այսինքն երգը կտրվել է բուն ծեսից՝ ժամանակի ընթացքում գոյատևելով մեխանիկական վերարտադրմամբ):

155. Վարդանյան Ս., **Վարանդայի բանավոր մշակույթը Երվանդ Լալայանի եւ նրա թղթակից-բանահավաքների գրառումներում**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 2015, N 2, էջ 356-367

(Քննության են առնվում «Ազգագրական հանդեսում» տպագրված Ե. Լալայանի «Վարանդա» ժողովածուի տարբեր բաժիններում ազգագրական նյութերի հետ ներկայացված բանահյուսական նմուշները (ավանդություններ եւ ավանդագրույցներ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, բարեմաղթանքներ, թեւավոր խոսքեր, աղոթքներ, զուգերգ, չափածո այլ ստեղծագործություններ եւն), որոնք պատմական Վարանդայի տարբեր բնակավայրերից գրառվել են նշանավոր ազգագրագետի եւ նրա թղթակից-բանահավաքների կողմից: Առանձնակի ուշադրություն է դարձվում երկնային մարմինների, երեւոյթների, երկրամասի լեռների, քարերի, սրբավայրերի, կենդանիների, թռչունների եւն մասին պատմվող ավանդություններին, որոնք ժողովածուում մեծ թիվ են կազմում: Հոդվածագիրը

նշում է նաեւ, որ ի տարբերություն տեղական բարբառով ներկայացված ասույթային բանահյուսության որոշ ժանրերի՝ ավանդությունները մատուցվում են գրական հայերենով, ինչը պայմանավորված է ոչ միայն դրանք ազգաբնակչության լայն շերտերին առավել դյուրին հաղորդակից դարձնելու անհրաժեշտությամբ, այլեւ ազգային ինքնաճանաչողությունն ու ինքնագիտակցությունը բարձրացնելու առաքելությամբ):

156. **Վարդուտ գավառի բառ ու բանը** (կազմող՝ Կիմ Ղահրամանյան), Երեւան, 2011, 278 էջ,

(Բանահյուսական ժողովածու: «Առաջաբանում» (էջ 5-8) տեղեկություններ են տրվում պատմական Վարդուտ գավառի՝ Աղբբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի բնակիչների, 1990-ական թվականների սկզբի նրանց բռնագաղթի, բանահյուսական մշակույթի մասին: Բուն ժողովածուում (էջ 9-216) առանձին ենթաբաժիններով ներկայացվում են շրջանի տարբեր գյուղերից բռնագաղթված ու զանազան վայրերում վերաբնակված բնակիչներից գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառի տեղական խոսվածքներով (տառադարձության խատուներով) հեղինակի գրառած գվարճախոսություններ (596 միավոր), հանելուկներ (34 միավոր), առածասացվածքներ (125 միավոր), խաղիկներ (9 միավոր), մանկական խաղեր (3 միավոր), տեղանուններ, տոհմանուններ, մականուններ (651 միավոր): Ժողովածուն ունի նաեւ կյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ (էջ 217-224), բարբառային եւ օտար բառերի բացատրական բառարան (էջ 225-267), հայերեն (էջ 268-270), ռուսերեն (էջ 271-273) եւ անգլերեն (էջ 274-276) լեզուներով ամփոփումներ):

157. Փաշայան Ա., **Պըլը Պուղին հայ մշակույթի պատմության էջերում**, Ստեփանակերտ, 2010, 128 էջ

(Կազմված է ներածական մասից՝ «Մուտք» (էջ 3-12), եւ 23 բաժիններից: Ներածական մասում արժեւորվում է արցախցի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու դերը հայ մշակույթի պատմության մեջ: Առանձին բաժիններում համապատասխանաբար ներկայացվում են տարբեր գրողների, գիտնականների, բանահավաքների, արվեստագետների (Գ. Շերմազանյան, Ռաֆֆի, Մ. Բարխուդարյան, Յ. Աճառյան, Լեո, Ա. Աբելյան, Ս Իսրայելյան, Ա. Նազիկյան, Ա. Բարսեղյան, Ա. Ղանալանյան, Մ. Գրիգորյան-Սպանդարյան, Ա. Ղազիյան, Գ. Կարապետյան, Ս. Առաքելյան եւ Ռ. Ղահրամանյան, Վ. Օվյան, Ս. Խանգաղյան, Լ. Յարությունյան, Բ. Ուլուբաբյան, Յ. Բեգլարյան, Վ. Յակոբյան) կողմից, ինչպես նաեւ «Պըլը Պուղի» հանդեսում, հանրագիտարաններում ու կենսագրական բառարաններում Պըլը-Պուղու թեմային անդրադարձումները, նրա շուրջ ստեղծված գվարճախոսությունների

գրառումները, մշակումներն ու հրատարակությունները, բերվում բնագրային օրինակներ: Վերջում տրվում է գրականության ցանկ):

158. Օվյան Վ., *Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց, Ստեփանակերտ, 1993, 188 էջ*

(Յեղիսակային պատվածքների, առակների, երգիծական բանաստեղծությունների, պամֆլետների, էպիգրամների են ժողովածու: «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» բաժնում (էջ 113-127) ընդգրկված են հեղինակի՝ գրական հայերենով գրառած եւ մշակած գվարճախոսությունները (35 պատում), որոնք կապված են արցախցի մեծ գվարճախոսի անվան հետ: Վազգեն Օվյանը հեղինակ է նաեւ «Պըլը-Պուղի» պիեսի /*Ստեփանակերտ, 1979*/, որտեղ Պըլը-Պուղին հանդես է գալիս որպես Պողոս վարդապետ):

159. *Армянский фольклор (составитель Г.О.Каранетян), Москва, 1967, 224 ст.*

(Յայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի (առածասացվածքներ, հանելուկներ, գվարճախոսություններ, հեքիաթներ)՝ ռուսերեն թարգմանված նմուշների ժողովածու: 109-120-րդ էջերում ընդգրկված են արցախցի նշանավոր առակախոս Պըլը-Պուղու անվան հետ կապված գվարճախոսություններ (12 պատում): Ժողովածուն լրացվելով վերահրատարակվել է /*Москва, 1979, 376 էջ*/: Պըլը-Պուղու գվարճախոսություններից ընդգրկված են նաեւ ևսյն հեղինակի կազմած «*Забавные и назидательные истории армянского народа*» /*Москва, 1975, 160 ст./ ժողովածուում (ստ. 66-119)*:

160. Газиян А., «*Устное народно-поэтическое творчество Арцаха (обзор)*», «*Լրաբեր հասարակական գիտությունների*», *Երեւան, 1990, N 7, էջ 27-36*

(Յեղիսակը ներկայացնում է վերջին 130 տարիների ընթացքում տարբեր բանահավաքների կողմից Արցախից հավաքված բազմաժանր (հեքիաթներ, սիրավեպեր, զրույցներ, գվարճախոսություններ, ավանդություններ, խաղիկներ, հարսանեկան երգեր, սգերգեր, ավելույաներ, օրորոցային երգեր, խաղերգեր, տարաբնույթ այլ երգեր, առած-ասացվածքներ, անեծքներ, բարեմաղթանքներ, հանելուկներ, շուտասելուկներ են) նյութերը, որոնց մի մասը հրատարակված է: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում համապատասխան ժանրերին պատկանող նյութերի ժանրային, մոտիվային, սյուժետային ու գեղարվեստաարտահայտչական միջոցների քննությանը: Արդյունքում հեղինակը հավաստում է, որ դրանք հայ ժողովրդական բանահյուսության տեղական դրսեւորումներն են, նրա անքակտելի օղակներից մեկը):

161. Патканов К., *Исследование о диалектах армянского языка*, Санкт-Петербург, 1869, 114 էջ

(Յայ բարբառների դասակարգմանը եւ որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց՝ առաջին անգամ ներկայացվում է Ղարաբաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը (էջ 55-73): Ուսումնասիրության սկզբում (էջ 55-63) տեղադրված են Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառված բանահյուսական որոշ նյութեր):

ՁԵՌԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՀՀ ազգային արխիվ

Խաչիկ Վարդապետ Ղաղյանի ֆոնդ N 319

(Ընդգրկում է հեղինակի գրառած ինքնակենսագրական, հնագիտական, ժողովրդագիտական եւ այլ բազմաթիվ նյութեր՝ հիմնականում ձեռագիր վիճակում: Արցախի բանահյուսական նյութերը (հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկան, մանկական, ծիսական, վիճակի երգեր, խաղերգեր, ծաղերգեր, հաշվերգեր, հանելուկներ, կենսագ-բարեմաղթություններ, շուտասելուկներ, այլ ժանրերի ստեղծագործություններ, ժողովրդական երգիչների եւ աշուղների մասին տեղեկություններ ու նրաց խաղերի գրառումներ, ինչպես նաեւ ազգագրական տարբեր նյութերի մեջ գործածված բանահյուսական տարաբնույթ նյութեր), գրառված գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) 1878-1920 թվականներին, հիմնականում ընդգրկված են ֆոնդի 1-ին ցուցակի 1-ին բաժնի («*Նյութեր գիտահետազոտական աշխատանքի մասին*») տարբեր թղթապանակներում: Նշված նյութերից որոշները հրատարակվել են հեղինակի «*Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից*» /«*Արարատ*», Ս. էջմիածին, 1895, N12, էջ 469-471/ ու նրա եղբոր՝ Ա. Ղաղյանի «*Վարանդայի բանաւոր գրականութիւնից*» /«*Ազգագրական հանդես*», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89/ հավաքածուներում, իսկ մեծ մասը դեռեւս անտիպ են):

Սարգիս Հակոբի Իսրայելյանի ֆոնդ N 481, Ցուցակ 1, 4-րդ բաժին

(Ընդգրկում է հեղինակի՝ 1905-1971 թվականներին գրառած մանկավարժական, ժողովրդագիտական եւ տարաբնույթ այլ նյութեր, այդ թվում նաեւ գրական հայերենով գրառած որոշ զվարճախոսություններ Պըլը-Պուղու մասին (թղթապանակ N 29):

Տիգրան Նավասարդյանի ֆոնդ N 484, Ցուցակ 1

(Ընդգրկում է հեղինակի՝ 1876-1908 թվականներին գրառած եւ այլ բանահավաքների կողմից նրան հանձնված՝ ազգագրական տարբեր շրջանների հեքիաթներ եւ բանահյուսական այլ նյութեր, այդ թվում՝ շուշեցի Առաքել, Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրյանների՝ 1860թ. մայիս-օգոստոս ամիսներին Շուշի քաղաքում Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած հեքիաթները, գրույցները, անեկդոտները, խա-

ղիկները, Հարություն Թավրիզյանի՝ 1869թ. Մոսկվայում Շուշիի խոսվածքով (տառադարձության խախտումներով) գրառած հեքիաթները, Միքայել Տեր-Հովհաննիսյանի՝ 1881թ. փետրվար-մայիս ամիսներին Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) ու գրական հայերենով գրառած բանահյուսական տարբեր ժանրերի (հեքիաթներ, խաղերգեր, մանկական երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, արագախոսություններ, երգեր) նյութերը: Բահաթյանների հեքիաթներից որոշները տպագրվել են Տիգրան Նավասարդյանի հրատարակած *«Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի 8-րդ, 9-րդ եւ 10-րդ պրակներում /Թիֆլիս, 1894, 1902, 1903/*, իսկ ամբողջությամբ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հրատարակած *«Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի 6-րդ հատորում /Երեւան, 1973/*: Ս. Տեր-Հովհաննիսյանի հավաքածուից որոշ նյութեր ընդգրկվել են Տիգրան Նավասարդյանի հրատարակած *«Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի 1-ին պրակում /Վաղարշապատ, 1882/*, մեկ հեքիաթ՝ ՀՀ ԳԱԱ հրատարակած *«Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի 6-րդ հատորում /Երեւան, 1973/*, իսկ որոշ երգեր՝ Ռ. Գրիգորյանի *«Հայ ժողովրդական մանկական երգեր ու խաղերգեր» /Երեւան, 1970, էջ 125, 131, 198/* ժողովածուում (բանահավաքի անունը եւ գրառման տեղավայրը նշված չեն):

Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան

Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ֆոնդ

(Ընդգրկում է հեղինակի գրականագիտական, լեզվագիտական, պատմագիտական, գեղարվեստական, ժողովրդագիտական բազմաթիվ նյութեր, այդ թվում՝ գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) մշակված *«Նահատակ»* (չափածո, 1935-37, 280 թերթ), *«Ասլան աղան»* (չափածո, 1936, 24 թերթ), *«Կամուրջը Շուշանի»* (արձակ, 491 էջ) արցախյան ավանդությունները, ազգագրական բնույթի որոշ լուսանկարներ, հեղինակի կազմած *«Գավառական բառարանի»* քարտերը, որտեղ ընդգրկված են նաեւ Ղարաբաղի բարբառի բազմաթիվ բառերի բացատրություններ):

Կոնստանդին Մելիք-Ճահնազարյանի ֆոնդ

(Ընդգրկում է հեղինակի գրառած ժողովրդագիտական, գյուղատնտեսագիտական եւ բազմաթիվ այլ նյութեր, որոնց մի մասը (ֆելիետոններ, իրապատումներ, զվարճապատումներ, զրույցներ, առակներ, հեքիաթներ, օրհնանքներ, հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ եւն) վերաբերում են Արցախի բանահյուսությանը՝ գրառված Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով՝ 1870-ական թվականների սկզբից մինչեւ 1920-ական թվականների վերջը:

Դրանց եւ ԶԶ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ֆոնդերում պահվող բանահյուսական նյութերի մի մասը տպագրվել են ԶԶ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հրատարակած **«Յայ ժողովրդական հեքիաթներ»** մատենաշարի 6-րդ հատորում /*Երեւան, 1973/* եւ հեղինակի հրատարակած ժողովածուներում ու նյութերում (*տե՛ս «Մատենագիտության» Մելիք-Ճահնազարյան Կ. բաժինը, իսկ մի մասը դեռեւս անտիպ են*):

ԶԶ ԳԱԱ Զր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան

Մխիթարյան Մ., *Շուշվա Ղլեն օյինքազ պընէրան, Ստեփանակերտ, 122 էջ*

(Յեղինակի՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրառած երգիծական զրույցների եւ ժողովրդական զվարճախոսությունների ժողովածու):

ԶԶ ԳԱԱ Զնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ

Չմշակված ֆոնդեր

Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի ֆոնդ

(Ընդգրկում է հեղինակի՝ 1920-60-ական թվականներին Արցախի տասնյակ բնակավայրերի բնասացներից Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով գրառած բանահյուսական տարբեր ժանրերի (հեքիաթներ, առակներ, զրույցներ, ավանդություններ, ավանդազրույցներ, իրապատումներ, զվարճապատումներ, մանկական խաղեր, շուտասելուկներ, հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ, առած-ասացվածքներ, վիճակի երգեր՝ ջանգյուլումներ, բնասացների մասին կենսագրական տեղեկություններ, բարբառային բառերի բառացանկեր՝ բացատրություններով են) բազմաթիվ նյութեր: Այստեղ է պահվում նաեւ հեղինակի գրած հինգհատորանոց **«Ղարաբաղ կամ կինոժապավեն Շուշի քաղաքից»** անտիպ վեպը: Մ. Գրիգորյան-Սպանդարյանի բանահյուսական ժառանգությունը, որ մեքենագիր վիճակում պահվում է նաեւ ինստիտուտի բանահյուսական արխիվի մշակված ֆոնդերում եւ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում (*ֆոնդ N2*), մեծ մասամբ տպագրվել է ԶԶ ԳԱԱ հրատարակած **«Յայ ժողովրդական հեքիաթներ»** մատենաշարի 5-րդ հատորում /*Երեւան, 1966/* եւ **«Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը»** /*Երեւան, 1971/* ժողովածուում):

Բարխուդար Ղազիյանի ֆոնդ

(Ընդգրկում է հեղինակի՝ 1960-70-ական թվականներին հայ ազգագրական տարբեր շրջաններից, հատկապես՝ Արցախի տասնյակ բնակավայրերի բանասացներից Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով գրառած բանահյուսական տարբեր ժանրերի (հեքիաթներ, ավանդություններ, ավանդազրույցներ, զվարճապատումներ, անեկդոտներ, երգեր, զրույցներ, իրապատումներ, առակներ, հայիոյանքներ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ եւն) բազմաթիվ նյութեր: Բ. Ղազիյանի բանահյուսական ժառանգությունը, որ պահվում է նաեւ ինստիտուտի բանահյուսական արխիվի մշակված ֆոնդերում, որոշ մասով տպագրվել է Ա. Ղազիյանի «**Արցախ**» /*Երեւան, 1983*/ ժողովածուում):

Ալվարդ Ղազիյանի ֆոնդ

(Ընդգրկում է հեղինակի՝ հիմնականում 1960-70-ական թվականներին Արցախի մի շարք (հատկապես՝ Սարտունու եւ Յաղրուփի շրջանների) բնակավայրերի բանասացներից Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով գրառած բանահյուսական տարբեր ժանրերի (հեքիաթներ, ավանդություններ, ավանդազրույցներ, զվարճապատումներ, անեկդոտներ, երգեր, զրույցներ, իրապատումներ, առակներ, խաղիկներ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, տեղանուններ եւն) բազմաթիվ նյութեր: Ա. Ղազիյանի բանահյուսական ժառանգությունը, որ պահվում է նաեւ ինստիտուտի բանահյուսական արխիվի մշակված ֆոնդերում, հիմնականում տպագրվել է ՀՀ ԳԱԱ հրատարակած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի 7-րդ հատորում /*Երեւան, 1979*/ եւ իր «**Արցախ**» /*Երեւան, 1983*/ ժողովածուում, ինչպես նաեւ այլ գործերում (տե՛ս «Մատենագիտության» **Ղազիյան Ա.** բաժինը):

Մշակված ֆոնդեր*

FF II: 2904-3175 - Բանահավաք՝ Կոնստանդին Մելիք-Շահնազարյան, շուշեցի, վաստակավոր գյուղատնտես: Գրառել է 1870-1930թթ. ընթացքում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով: *FFII: 3010-3093* նյութերը հավաքել է Ալեքսանդր Մելիք-Շահնազարյանի հետ.

(*FFII: 2904-2915*՝ «Հինդի թաքավերեն հյաքաթը», *FFII: 2916-2925*՝ «Տնայնագործությունը Ղարաբաղում», *FFII: 2926-2975*՝ «Հանելուկներ» (150 միավոր), «Խրատներ փիլիսոփաներից եւ առակներ» (103 միավոր),

* Մշակված ֆոնդերի՝ Արցախի բանահյուսական նյութերի ցանկը կազմել եւ մեզ է տրամադրել ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. էսթեր Խեմճյանը, որին հայտնում ենք խորին շնորհակալություն:

«Առածներ» (262 միավոր), «Շուտասելուկներ» (6 միավոր), FFII: 2976-2997՝ «Առածներ Ղարաբաղի» (203 միավոր), «Առածներ» (105 միավոր), «Ղարաբաղցիների օրհնանքը» (117 միավոր), FFII: 2998-3009՝ «Ղարաբաղցիների անեծքներ» (212 միավոր), FFII: 3010-3093՝ «Օրհնանքներ» (110 միավոր), «Անեծքներ» (142 միավոր), «Առակներ» (77 միավոր), «Յանելուկներ» (163 միավոր), «Շուտասելուկներ» (9 միավոր), FFII: 3094-3175՝ «Ժողովրդական բժշկարան» (1 տետր):

FFII: 8808-9055 - Բանահավաք՝ Սարգիս Իսրայելյան: Գրառել է 6.04. 1945թ.- 26.04. 1945թ.՝ հիմնականում գրական հայերենով, որոշ նյութեր՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Երկու ընդհանուր տետր.

*I տետր՝ FFII: 8808-8887՝ «Երկու խոսք», «Առակներ» (5 միավոր), «Առածներ, ասացվածքներ» (75 միավոր), «Անեկդոտներ» (6 միավոր), «Ջանգոլումներ» (10 միավոր), «Ավանդություններ» (5 միավոր), «Յեքիաթներ» (3 միավոր), «Քառյակներ, երգիծանք, բառախաղեր, շուտասելուկներ, հայիոյանքներ, բարեմադություններ, անեծքներ եւ այլն», II տետր՝ FFII: 8888-9055՝ «Յեքիաթներ եւ անեկդոտներ (Յաթերքցիներ, Պըլը Պուղի)»: Ս. Իսրայելյանի՝ այս եւ մյուս ֆոնդերում պահվող բանահյուսական ժառանգության մի մասը տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հրատարակած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի 6-րդ հատորում /*Երեւան, 1973/* եւ իր «**Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին**» /*Երեւան, 1956/* ժողովածուում:*

FFIV: 4363-4604 - Բանահավաք՝ Սաքսիմ Մխիթարյան: Գրառել է 1961թ. Ստեփանակերտում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով): Մեկ ընդհանուր տետր.

«Առած-ասացվածքներ, դարձվածներ» (843 միավոր), «Անեծքներ» (248 միավոր), «Յեքիաթներ» (11 միավոր): Ս. Մխիթարյանի գրառած հեքիաթներից որոշները տպագրվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հրատարակած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի 6-րդ հատորում /*Երեւան, 1973/*:

FFIV: 5001-5192 - Բանահավաք՝ Սվետլանա Վարդանյան: Գրառել է 1968թ. Լեռնային Ղարաբաղում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով: Մեկ ընդհանուր տետր, որտեղ ընդգրկված են բանահյուսական տարաբնույթ նյութեր:

FFV: 4102-4423 - Բանահավաք՝ Ալվարդ Ղազիյան: Գրառել է 1966 թ. օգոստոսին ԼՂԻՄ Մարտունու շրջանի գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) եւ գրական հայերենով.

«Յեքիաթների սկսվածք» (2 միավոր), «Խաղիկներ» (15 միավոր), «Զվարճախոսություն» (6 միավոր), «Երգ (գինվորի)» (1 միավոր), «Զրույցներ», «Ավանդություններ», «Յեքիաթներ», «Մականուններ», «Մանկական խաղերգեր», «Աղոթք», «Օրորոցայիններ», «Անեծք, օրհնանք, ասացվածք» (25 միավոր), «Յանելուկ» (1 միավոր), «Աշանի, Նոր շենի, Ղզալայի հանդամասերի անուններ»: Ընդհանուր տեսքին կցված են Մարտունու շրջանի Ղզալա (Բերդաշեն) գյուղի ուսուցիչ Աշոտ Առուստամյանի՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած հեքիաթները (3 աշակերտական տետր), որոնցից որոշները տպագրվել են ՀՀ ԳԱԱ հրատարակած «**Յայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի 7-րդ հատորում /Երեւան, 1979/:

FFV: 4424-4611 - Բանահավաք՝ Ալվարդ Ղազիյան.

Նյութը տեղում չէ:

FFV: 7571-8000 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերից 1960-1962թթ.՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) .

«Յեքիաթներ (հրաշապատում եւ իրապատում)», «Առակներ», «Զրույցներ», «Զվարճախոսություններ», «Ավանդություններ», «Պատկերավոր արտահայտություններ (դարձվածներ)»: Մ. Առաքելյանի՝ այս եւ մյուս ֆոնդերում պահվող բանահյուսական ժառանգության մի մասը տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հրատարակած «**Յայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի 6-րդ /Երեւան, 1973/ ու 7-րդ /Երեւան, 1979/ հատորներում եւ Ստեփանակերտի ժողովրդական ստեղծագործության մարզային տան հրատարակած «**Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից**» /Երեւան, 1978/ ժողովածուում:

FFV: 8001-8362 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերից 1960-1962թթ.՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով).

«Յեքիաթներ (հրաշապատում եւ իրապատում)», «Ավանդություններ», «Զրույցներ», «Զվարճախոսություն», «Առակներ»:

FFV: 8363-8678 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերից, 1960-1962թթ.՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով).

«Յեքիաթներ (հրաշապատում եւ իրապատում)»

FFV: 8679-9065 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերից, 1963-1964թթ.՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով).

«Յեքիաթներ», «Առած-ասացվածքներ»:

FFV: 9066-9387 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերից, 1963-4964, 1968 թթ.՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով):

«Առած-ասացվածքներ, դարձվածներ» (4165 միավոր), «Ընդարձակ ներածություն», «Յեքիաթներ», «Անեծք, օրհնանք, բարեմաղթություն» (183 միավոր):

FFVI: 5230-5523 - Բանահավաք՝ Սարգիս Իսրայելյան: Գրառել է Լեռնային Ղարաբաղի գյուղերում՝ հիմնականում գրական հայերենով, որոշ նյութեր՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Երկու ընդհանուր տետր:

«Յեքիաթի սկսվածքներ» (4 միավոր), «Յեքիաթներ», «Թեւավոր խոսքեր, դարձվածներ, սպառնալիքներ եւ այլն»:

FFVI: 5524-6023 - Բանահավաք՝ Սարգիս Իսրայելյան (Հավաքածուն կազմված է մի քանի ընդհանուր եւ 12 թերթանոց տետրերից):

«Առակներ» (26 միավոր), «Անեկդոտներ» (67 միավոր), «Մանկական հաշվերգեր, չափածո երգիծական խաղերգեր», «Զրույցներ», «Աֆորիզմներ, գյուղերի մականուններ», «Խաղիկներ», «Աշուղական երգեր», «Օրորոցային եւ այլ բնույթի երգեր», «Առածներ» (358 միավոր), «Բարեմաղթություններ» (77 միավոր), «Երդումներ» (20 միավոր), «Անեծքներ» (104 միավոր), «Յայիոյանքներ» (22 միավոր), «Յանելուկներ» (60 միավոր), «Բանասացների եւ գրառված նյութերի ցանկեր», «Գրառված նյութերի բառարան»:

FFVI: 6024-6075 - «Բանահավաք Ս. Իսրայելյանի կենսագրությունը», «Ուսումնասիրություն Ղարաբաղի բանահյուսության», «Ղարաբաղի բարբառի առանձնահատկությունները»:

FFVI: 6123-6322 - Բանահավաք՝ Սվետլանա Վարդանյան: Գրառել է 1970թ. հունիս-հուլիս ամիսներին, ԼՂԻՄ Շուշիի շրջանում եւ Ադր. ՍՍՀ Շահումյանի շրջանում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Մեկ ընդհանուր տետր:

«Մականուններ», «Յանդամատերի անուններ», «Սովորություններ», «Զվարճախոսություններ», «Յեքիաթներ», «Սգերգ եւ տարբեր բնույթի երգեր», «Ծածկալեզու», «Ժողովրդական բժշկություն»:

FFVI: 8204-8375 - Բանահավաք՝ Ալվարդ Ղազիյան: Գրառել է 1970թ. ԼՂԻՄ Ղզղալա, Աշան, Կղարծի, Յացի, Նոր շեն գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Մեկ ընդհանուր տետր:

«Յեքիաթ», «Տարբեր բնույթի զրույցներ», «Անեկդոտներ», «Սովորություններ»:

FFVIII: 3421-3624 - Բանահավաք՝ Ալվարո Ղազիյան: Գրառել է 1971թ. ԼՂԻՍ Մարտունու շրջանի գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով):

«Յեքիաթներ (հրաշապատում)», «Զրույցներ», «Զվարճախոսություն», «Յանելուկներ», «Երգեր»:

FFIX: 0001-7516 - Բանահավաք՝ Սարգարիտ Գրիգորյան-Սպանդարյան: Նյութերը գրառել է 1948-1958 թթ., Լեռնային Ղարաբաղում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Տասը գիրք:

I գիրք՝ FFIX: 0001-0928՝ «Յեքիաթներ (հրաշապատում, իրապատում, կենդանական» (49 միավոր), II գիրք՝ FFIX: 0929-1628՝ «Յեքիաթներ» (68 միավոր), III գիրք՝ FFIX: 1629-2618՝ «Յեքիաթներ» (86 միավոր), IV գիրք՝ FFIX: 2619-3534՝ «Յեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ», V գիրք՝ FFIX: 3535-4520՝ «Յեքիաթներ, զրույցներ, ավանդություններ անել-դոտներ» (87 միավոր), VI գիրք՝ FFIX: 4521-5244՝ «Յեքիաթներ, ավանդություններ, խաղիկներ, հանելուկներ, առած-ասացվածքներ», VII գիրք՝ FFIX: 5245-5741՝ «Խաղիկներ», VIII գիրք՝ FFIX: 5742-6413՝ «Յեքիաթներ» (50 միավոր), IX գիրք՝ FFIX: 6414-7088՝ «Առած-ասացվածքներ, դարձվածներ, անեծք-օրհնանքներ, հանելուկներ», X գիրք՝ FFIX: 7089-7516՝ «Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը (ուսումնասիրություն)»:

FFIX: 8509-9324 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է 1969-1971թթ., ԼՂԻՍ Ստեփանակերտի, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով): Յինգ ընդհանուր տետր:

«Զրույցներ եւ զվարճախոսություններ», «Անեծքներ» (324 միավոր), «Օրհնանքներ» (35 միավոր), «Շուտասելուկներ» (12 միավոր), «Մակա-նուններ» (67 միավոր), «Ղարձվածներ» (228 միավոր), «Սպառնալիքներ» (72 միավոր), «Ավանդություններ» (երկու ընդհանուր տետր), «Առած-ասաց-վածքներ» (62 միավոր), «Երդումներ» (31 միավոր), «Փոխաբերական արտահայտություններ» (326 միավոր):

FFX: 2709-2740 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է 1969թ. ԼՂԻՍ գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով):

«Յեքիաթներ», «Անեկդոտներ»:

FFX: 5157-6960 - Բանահավաք՝ Բարխուդար Ղազիյան: Գրառել է ԼՂԻՍ գյուղերում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Երեք ընդհանուր տետր:

«Յեքիաթներ», «Ավանդություններ», «Զրույցներ»:

FFX: 6961-7156 - Բանահավաք՝ Բարխուդար Ղազիյան: Գրառել է 1971-1972 թթ. ԼՂԻՍ-ում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Երկու փոքր ընդհանուր տետր.

«Յեքիաթներ»

FFXI: 0357-0540 - Բանահավաք՝ Միքայել Առաքելյան: Գրառել է 1972թ. ԼՂԻՍ-ում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով).

«Ավանդություններ»:

FFXI: 0541-0736 - Բանահավաք՝ Ալվարդ Ղազիյան: Գրառել է 1972թ. ԼՂԻՍ-ում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Մեկ ընդհանուր տետր.

«Յեքիաթներ», «Ավանդություններ», «Երգեր», «Անեծքներ»:

FFXI: 0737-1220 - Բանահավաք՝ Սարգիս Իսրայելյան: Յիշողությամբ գրի է առել 1973թ. Երեւանում՝ գրական հայերենով.:

«Յայատառ թուրքերեն առած-ասացվածքներ (թարգմանված)», «Թուրքերեն բառերի համառոտ բառարան»:

FFXI: 2565-3176 - Բանահավաք՝ Բարխուդար Ղազիյան: Գրառել է 1971-1973 թթ., ԼՂԻՍ գյուղերում եւ Կիրովաբադում՝ գրական հայերենով եւ տեղական բարբառներով (տառադարձության խախտումներով): Նյութերը ձայնագրված եւ վերծանված են: Երեք մեծ ընդհանուր տետր.

«Յեքիաթներ» (27 միավոր):

FFXI: 5347-5554 - Բանահավաք՝ Ալվարդ Ղազիյան: Գրառել է 1973թ. Լեռնային Ղարաբաղում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով): Մեկ մեծ ընդհանուր տետր.

«Յեքիաթներ», «Զրույցներ», «Անեծք-օրհնանքներ», «Երգեր», «Մակա-տուններ»:

FFXII: 2669-3082 - Բանահավաք՝ Բարխուդար Ղազիյան: Գրառել է 1972-1975 թթ., Լեռնային Ղարաբաղում՝ (տառադարձության խախտումներով): Երկու մեծ ընդհանուր տետր.

«Յեքիաթներ» (12 միավոր):

FFXII: 3083-3478 - Բանահավաք՝ Բարխուդար Ղազիյան: Գրառել է 1974թ. Ղարաբաղում՝ (տառադարձության խախտումներով): Նյութերը ձայնագրվել են: Երկու մեծ ընդհանուր տետր.

«Յեքիաթներ», «Զրույցներ», «Զվարճախոսություններ»:

FFXIII: 3673-4132 - Բանահավաք՝ Միքայել Օհանջանյան: Գրառել է 1974թ. Լեռնային Ղարաբաղում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով)։

«Առած-ասացվածքներ» (3363 միավոր), «Խորհուրդներ եւ խրատներ» (176 միավոր), «Անեծք-օրհնանքներ» (424 միավոր), «Բառարան»:

FFXIII: 7103-7700 - Բանահավաք՝ Միքայել Օհանջանյան.

Նյութը տեղում չէ:

FFXIII: 7701-8014 - Բանահավաք՝ Միքայել Օհանջանյան (Մուպեր Ղարաբաղի): Գրառել է 1974թ. Լեռնային Ղարաբաղում՝ Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով)։

«Զրույցներ», «Զվարճախոսություններ», «Բառարան»:

Չմշակված ֆոնդից այստեղ է գտնվում նաեւ Մ. Օհանջանյանի՝ 1970-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում Ղարաբաղի բարբառով (տառադարձության խախտումներով) գրառած բախյուսական նյութերի երկու հաստափոր գիրք, որտեղ ընդգրկված են հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկու խոսք	3
2. Ներածություն	4
3. Մատենագիտություն	51
4. Ձեռագիր աղբյուրներ	109

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԿԻ ՄԱՐԳԱՅԱՆ

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՅԱԽԻ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ
ԳՐԱՌՄԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

խմբագիր՝ Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ստորագրված է տպագրության 27.02.2019:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 ^{1/16}:
Ծավալը՝ 7.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 200:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԵՐԵՎԱՆ-2019